

L. Drouot & Cie
Libraires

891 99
P - 71



ԼԱՅԱՆ ԹՈՐՈՎԵՆՔ

ԱՄԵՐԻԿԱ
ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ



ՊԵՏՐՈՎ

01.99
3-71

1929

19 NOV 2011

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՂԵՆՑ

81-99
5-71

Կ

ԱՄԵՐԻԿԱ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

120



320

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1929



12162-57

22.04.2013


31320

ՆՈՐԻՑ ԴԵՊԻ ԱՀԱՐԿՈՒ ՔԱՂԱՔԸ

Մեր նավը կանգնած է Շերբուրգի ծովափից հետեւ Յերևան, յերբ ովկիանոսի թանձը ու մռայլ աշխարհը փոփեցին, սկսեց վառվել նա ինչպես մի ժամանակ խարույկ ամայի ու մութ տարածության մեջ: Դեկտեմբերին ահարկու յե ովկիանոսը, գոռալով ավալվում է, հեռում, գալարվում, պտույտներ և գործում հեռվում, գիշերաւին և ահավոր հեռվում: Ովկիանուի բացից գոռումներ են լսվում, վրթիարի, ահեղ մասվ: Դա ովկիանոսի յերգն է:

Սանդուղքները քաշեցին, փոքրիկ նավակները լծացան և սպիտակ խոշոր հավերի նման թառեն նավի կողերին չանկարծ սկավեց մի բան խռիւր սկզբում՝ անախորժ, բայց հետո գարձավ մի վայրի ոիթմ: Խարիսխներն են վեր քաշում, նավի հետո ողմն սկսում ե փրփել, մութ ծովն սկսում ե ըստակել շարժվում ե արգեն նավը: Բոցավառվող նաև մի հսկա լապտերի նման սկսում ե սուրալ անհապակ ջրերի մակերեսին:

Ծովը մանջում ե գուրսը, մենք նստած ենք ընթիքի սեղանների շուրջը, յերերվում ենք և ուտում: Տատերը հետզհետե քաշվում են կարինները. նրանք են գիմանում նավի յերերումին, նոր են զգում, վորաշիարհն ինքը յերերվում ե ու դառնում: Իջնում եմ իմ իմ կարինը: Չորս հոգի յենք կարի-



նում: Մյուսներն արդեն տեղափորված են, յերկարել են իրենց նեղ մահճակալների վրա և հանգստանում են: Մեկը քիթն է խառնում:

— Կամ հույն ե, կամ հայ, — մտածում եմ:

Մի հարցում եմ ուղղում քիթ խառնողին անգլերեն լեզվով: Պատասխանում ե անգլերեն, բայց «հատառը «իս» և արտասանում:

— Հույն ե, — յեղբակացնում եմ: — Թերես թուրքեն կարող եք խոսել:

— Այո, կարող եմ, բայց չիմ ցանկանում խոսել, — պատասխանում ե կոպտաբար:

Հում եմ և մտածում: Հույների շովինիդմը հասել ե իր ամենապարշելի գագաթնակետին: Ուրեմն գընում այդ հույները, ինչ բանի յեն ձգտում, վժրտեղից են ստանումնրանք հպարտության և անմիտ գոռոզության այդ ձեւերը:

— Թերես դուք կարծում եք, վոր յես ցանկանում եմ հունարեն խոսել, — հարեց հույնը:

— Յերկի, — պատասխանեցի:

— Վնչ ել հունարեն, բարեկամ, մանավանդ հունարեն, թերես ուղնամ մեկ-մեկ թուրքերին խոսել, բայց հունարեն՝ յերեք:

50-ի մոտ մի մարդ է խոսակիցս, առանց թարթիչների, գեմքի մորթն այրված ե և գարնանային արտի նման ակոսված: Նրա գեմքի, մանավանդ ձեռքերի վրա այնքան տանջանք կա, վոր կարծես տանջանքի նսուշ եր: Այդ տանջանքն ե, թերես, վոր նրան տալիս ե անսահման բարի մարդու արտահայտություն: Յերբ կանգնեց, յես տեսա, վոր նա կորաքամակ եր: Թվում եր, վոր ծանր բռի տակ տնքում ե:

— Այս, հունարեն լերեկք չեմ ցանկանախոսել, — կըկնեց նա:

Հասել եմ իմ աչքերը նրան ապշությամբ:

— Ավելի լավ ե վոչ մի լեզու չխոսեք, — ձայնեց մեր կարինի բնակիչներից մեկը, վոր վերևի մահճակալումն եր պառկած:

— Նախընտրում եմ վոչ մի լեզու չխոսել, վորպեսզի հանկարծ մի հունարեն բառ չասեմ, — զայրութով պատասխանեց նա:

— Բայց դուք գիտեք, վոր յեվրոպական ըոլոր լեզուները լեցուն են հունարեն բառհրով, — առում եմ մեղմ տոնով, նպատակ ունենալով չվիրավորել իմ նավակցին:

— Բոլոր լեզուներն ել գետինը մտնեն, անգլերենն ել, մյուսն ել մյուսն ել: — բարկացավ հույնը և պապիրոսը վառելուց հետո վառած լուցելին նետեց հատակին:

— Իմ լեզվի հետ ինչ գործ ունեք, — հանկարծ մեջ ընկավ մեր կարինի չորրորդ ճամպորդը: Պարզ եր, վոր նա անգլիացի յեր, բայց ինձ զարմացրեց նա: Անգլիացին այդպիսի չնչին հարձակումներից չի պաշտպանվում:

Մի ժամ հետո մենք սկսեցինք թուղթ խաղալ, և հայտնարկելեց ազգությունների հետեւյալ պատկերը:

Քիթ խառնողը հույն եր, անունն եր Պրոդրուլոս, բայց վորովհատե նա միքիչ կակազում եր իր անուսն արտասանելիս, դուրս եր գալիս Պրոդրոբորուլոս: այդպիս ել մենք շարունակեցինք արտասանել նըրա անունը: Յերկըրդը, վորը առաջին անգամ խոսք քայլեցից և նեղացած ասաց, վոր «ավելի լավ ե

վոչ մի լեզու չխոսեք», նա յել հույն եր, անունն եր Բալթածիս, իսկ յերբորդը, վոր ուղեց պաշտպանելան գլերեն լեզուն, իրլանդացի յերև և անունն եր՝ Բրեմը:

Թղթախաղի ընթացքում Բրեմըրը ժամացուցին նախեց և ներողություն ինդրեց գնալու և շուտով վերադառնալու:

— Գնամ, մադամներիս կերակրեմ և գամ, — ասաց և դուրս եր գնում, յերբ Բալթածիսը նրան կանգնեցրեց:

— Յես ել ուղում եմ գալ ուղում եմ շոյել մազամներիդ, — ասաց:

— Խնդրեմ, — պատասխանեց իրլանդացին, և նըրանք միասին դուրս գնացին:

Յես և Պրոլոբորոբորլոսն իրար յերեսնայեցինք ապլշությամբ:

— Ի՞նչ մադամներ են դրանք, վորոնց կարելի յեշոյել, — հարցըրեցի:

— Ո՞վ ե իմանում, յերկի Յեվրոպայից անառակ կանայք փոխադրող ե. Ամերիկայում ֆրանսուհիները շատ են փնտովում: Ամեն միջոցով փող են աշխատում այս սրիկանները:

Սկսեցի մտածել բայց չկարողացա վոչ մի յեղբակացության դար յերբ Բրեմըրը և Բալթածիսը ներս յեկան:

Լավը են, շատ լավը են, — ասաց Բալթածիսը և նըրատելով մեր մահճակալների վրա, հարցըրեց. — վոր տեղից ձեռք բերիր:

— Ֆրանսիայից, — պատասխանեց Բրեմըրը, — բայց թանգ են, չգիտեմ, թե Ամերիկայում կհաջողքմ, թե վոչ ծախսը մեծ ել:

— Եարունակենք խաղալ, — առաջարկեց Բալթածիսը:

Յես չպատասխանեցի, բայց նշմարեցի, վոր Պրոլոբորոբորլոսը հուզվեց և չկարողանալով համբերել՝ աղաղակեց.

— Յես հրաժարվում եմ կանանց միջնորդների հետ կարտ խաղալ առավոտյան կխնդրեմ նավապետից փոխել իմ կարինը:

— Բանն ինչում ե, — զսպված տոնով հարցըրեց Բալթածիսը:

— Յես զզվում եմ, յերբ մարդիկ Յեվրոպայից աղջիկներ են փոխադրում Ամերիկա՝ փող վաստակելու համար, — ասաց Պրոլոբորոբորլոսը:

— Ի՞նչ աղջիկներ, ի՞նչ եք խոսում, բացատրեցիք:

— Ապա ի՞նչ մադամներ են, վորոնց այս մարդը փոխադրում ե Ամերիկա:

Բալթածիսը և Բրեմըրը սկսեցին լիաթոք և անձոռնի ծիծաղել: Բրեմըրը հազիվ կարողացավ հասկացնել վոր այդ մադամները եգ շներ են, վորոնց Բրեմըրը տանում ե Ամերիկա՝ խառնելու ամերիկյան ուրեշ շնային ցեղերի հետ:

Պրոլոբորոբորլոսի բարկությունն իջավ, ամաչեց, ժպտաց, ձեռքը յերկարեց Բրեմըրին և անկեղծությամբ, խոր, շատ խոր անկեղծությամբ, ներողություն խնդրեց:

— Դու լավ մարդ ես, — պատասխանեց Բրեմըրը, ներում եմ և ուրախ եմ, վոր քեզ հանդիպել եմ իմ կյանքում:

Շարունակեցինք թղթախաղը:

Հանկարծ մի շառաչյուն լսվեց, կարիններից մարդուկ դուրս վաղեցին, մենք ել գուրս պրծանք մեր կարիններից: Կորիդորներում յես հանդիպեցի այն մարդկանց, վորոնք վախեցած յետ ելին դառնում: Նրանք սարսափից ահաբեկված դեմքեր ունեյին: Շատերը մինչև անգամ աղաղակում հիմն:

— Փախեք, փախեք:

Ցամաքի այդ միամիտ մարդիկ կարծում ելին, վոր կարելի յի նավից և ծովից փախչել: Յես միայն ցանկանում եյի տեսնել մի վորեւ նավաստու դեմք. դա իսկույն կպարզե՞ր վտանգ կա՞մ, թե վոչ:

Սանդուղքներով վեր բարձրանալիս ինձ այնպես թվաց, վոր հարյուրավոր կակուղ մտրակներով ինձ խըստեցին, բայց յերբ ամբողջովին թրջվեցի, զգացի, վոր ջրի խոշոր մի հոսանք եր, վոր տախտակամածի զըռներից վար եր խուժում: Շարունակեցի վեր բարձրանալ:

— Վտանգի ժամանակ ավելի լավ ելինել բաց ոդում, քան ներքել, անանցանելի լուսամուտներով կարիններում,— մտածեցի:

Զրի հոսանքը մի պահ դադարեց, յես կարողացանավի պատերի վրա ամրացրած յերկաթյա ձողերից մեկը բռնել և ապահովվել ջրի հորձանքից քշվելուց:

Հանկարծ իմ առաջից անցան մի խումբ նավաստիներ. Նրանց դեմքի վրա ամենափոքրիկ յերկյուղի նշան անդամ չկար. ուրախ ելին այնպես, ինչպես ծովի մարդիկ ալեկոծության ահեղ ժամանի: Միքանի ըռպեյում նավաստիներն արդեն փակել ելին ներքեի հարկերը տանող բոլոր անցքերը և միանդամախն ապահովել նավի ներքնակողմը ջրի հոսանքից, Յես մնա-

ցի վերել, բաց տախտակամածի վրա: Ներքե իջնելն անհնար եր ալլես:

Ովկիանը բարկացիլ եր արշալուսին, հազարապատիկ ավելի, քան կես գիշերը: Մեկ շրջապատում եյին բարձրաբերձ և վունացող ալիքներ, փրփրոտ և թանձրամութ ծովը, ծանր, սև և կախ ընկած ամպեր: Մեր նամին ել եր կատաղել, միխճում եր իր առաջաքիթը ջրի մաջ, վիթխորի քանակությամբ ջուր փեցնում, բարձրացնում վեր, ամրողջովին լվացվում և ահարկու շառաչյունով իր կողքերից և յետեկից ծովը թափում:

Ծովի աշխատավորները բոլորն ել բաց ոդումն են, վոմանք կայմերի, կամրջակի վրա, մյուսները՝ խարիսխի մոտ. շատերը քանդել են փոքրիկ նավակները և սպասում են մի ազգանշանի:

Վոչ մի մեքենա այնպիսի ճշտությամբ, այնպիսի ոիթմական կանոնավորությամբ չի գործում, վորքան աշխատավորներն ահավոր ովկիանոսի վրա:

Մեր հսկայի կողքին լեռնանման ալիքներ են բարձրանում, զարնվում կողերին, որորում նավը, բայց նավը անարգել և արհամարհական սլանում ե առաջ, ճեղքում կոհակները:

Ծովի աշխատավորները նման չեն հողի աշխատավորներին. Նրանց ճակատների կնճիռներն ալիքանման են և նման չեն հողի ակոսների. Նրանց աչքերը հանգիստ և բավական չեն հողի և արեի նման, Նրանք զարցացած աչքեր ունեն, կիտած հոնքեր. Նրանց նայվածքը տարածուն ե, հորիկոնապարփակ, նրանք չունեն հողի աշխատավորների դանդաղ, ապահովության հետ կապված մարդկանց շարժումը և վճռ ել հողի աշխատավորների խուճապը, յերբ հեղեղ և գալիս: Ծովի

աշխատավորները դիմադրում են վիթխարի ովկիանոսի զայրույթին, ինչպես հողի աշխատավորը դիմադրում ե ամբողջ ձմեռն արև չտեսած իր լեզան ցասումին:

Հողի աշխատավորը քարերե հավաքում, աննշան, ամենանուրը քամուց իր զլուխր ծող խոտեր և դիմում իրար վրա, փոքրիկ ցորենի հատիկներից բերդեր և շինում, բայց ծովի աշխատավորը կավում և միշտ, տարածում և թեսերը հողմերի, փորտների գեմ, բաց ծովում: Յերբ կատաղում ե բնությունը, յերբ բնության տարերքը վոռնում ե, գալարվում, թափալվում, նյարդային հեռում, ինքն իրեն փշում, հողի աշխատավորը քաշվում ե իր խրճիթը, փակում լուսամուտները և սպասում՝ մինչեւ բնությունը հանգստանա, մինչեւ տարերը հոգնեն, թուլանան, դիտապաստ ընկնեն, բայց ծովի աշխատավորը հենց բնության զայրույթի, վերիվարումների, մանչումի և վորոտի ժամանակ վագում ե դեպի բաց ողբ բնության կատաղության հորձանքի հանդեպ: Վրա համար ե, վոր նրանք զալրացած աչքեր ունեն, կիտած հոնքիր:

Ովկիանն սկսում ե հանդարտվել ամպերն սկըսում են սպիտակին տալ ջուրը կապտանում ե, ամպերը, սպիտակելուց հետո, բարձրանում են և ցրվում, բացվում են նավի բոլոր դռները: Իջնում եմ ներքե, փոխում եմ շորերս: Պրոդրոբորոլուս սրահից դալիս ե մեր կաբինը:

— Մենք կարծեցինք, վոր հորձանքը ձեզ քշեց, — աղաղակեց նա, — շատ ցալեցինք, մինչեւ անգամ ուզում եյինք արձանագրություն կազմել իրերիդ մասին: Լավ վոր չես մեռել կարտ կիսաղանք:

— Իսկապես մեմ հետ պիտի խաղայիք, մանա-

վանդ վոր վերջին ձեռքը չվերջացրինք, — պատասխանեցի:

Բրեմը չկար, վաղ եր տվել մադամների մոտ, վորոնց վոռնոցը յես լսում եյի լերեմն ալեկոծության ժամանակ:

Յես և Պրոդրոբորոլուսը ելի բարձրացանք նավի տախտակամածի վրա: Ովկիանը բոլորովին հանգըստացել եր, արեն իր ամբողջ փառքով, վոր հազվագյուտ և ղեկտեմբերյան դաժան որերին, փալել եր ովկիանի վրա, ծույլ-ծույլ որորվող ջուրը տեղակեղ փայլում եր աղամանդի նման և անդրադարձնելով արեկի շողը՝ խտիստացնում եր մեր աչքերը, ինչպես հայելուց անդրադարձող լույսի ճաճանչները: Հսկա ձկներ զըլուխնին վեր եյին բարձրացնում, թոշում ելին ողի մեջ, կոր զիծ կազմում և ելի մխրճվում իրենց լույծ և անհատակ անկողինը: Նավը մաքրվել եր, ինչպես նոր սրբած ապակի, ամբողջ մարմնով նա լողացել եր ջըրում, իսկ հիմա հաղթական, հանգիստ որորումով ձեղքում եր ովկիանի անհուն տարածությունը:

— Նավի յետեր յերկար, սպիտակ ճանապարհ ե բացվել, տես. — ասացի Պրոդրոբորոլուսին:

— Յետե՞ք:

— Այո, յետել:

— Դեպի յետ յերեք չեմ նայի, մինչեւ անգամ գժվարությամբ եմ դիտում նավի լերկու կողքերը, — պատասխանեց նա:

— Ինչնու:

— ԶԵ վոր մեր յետեր Հունաստանն ե. յերեք չեմ ցանկանում վերադառնալ Հունաստան, մինչեւ անգամ հայացքով:

— Յես ձեզ բոլորովին չեմ հասկանում, — ասացի, բացատրեցնք ինձ ձեր ատելությունը դեպի Հունաստանը՝ ձեր հայրենիքը, արվեստի և փիլիսոփայութեան հին հալլենիքը:

— Արվեստի և փիլիսոփայության... հը, — յավազին ծիծաղեց Պրոդրոբորոբորոլոսը, — ի՞նչ արվեստ, ի՞նչ հայրենիք, այնտեղ հազարավոր ավագակներ կան, վորոնց գլխավորներն են, Վեներակելոսը և Կոստանդին թագավորը, ուրիշ վոչինչ:

— Խնդրում եմ բացատրեք:

— Գնանք կարտ խաղանք, — վերջացրեց նա: Կամրջակի վրա մենք հանդիպեցինք Բրեմբին և Բալթածիսին և իջանք կարինը և շարունակեցինք կարտ խաղալ:

Խաղի ընթացքում Բրեմբը և Պրոդրոբորոլոսն սկսեցին իրար հետ կովել:

— Դուք փաս ասսացիք, — պնդում եր հույնը:

— Յես փաս չեմ ասեմ — պնդում եր իրանդացին:

— Դուք ստախոս եք. — պոռաց հույնը:

Իրանդացին քաշեց ջրի շեշտ և մոտ եր հույնի գլխին իջեցնելու, յերբ յես և Բալթածիսը բռնեցինք: Բալթածիսը խոստովանվեց, վոր փաս ասողն ինքն և յեղել, յես ել հաստատեցի: Պրոդրոբորոլոսը հավատաց, ձեռքը յերկարեց Բրեմբին, ժպտուն և խեղճացած հարեց:

— Յեղբայր իմ, ներողություն եմ խնդրում:

Բրեմբը ան կեղծ և խոր բավականությամբ ժըպտաց, բռնեց իրեն յերկարած ձեռքը, ուժգին սեղմեց և ձախ ձեռքով ել թափ տվեց նրա ուսը:

— Լավ, լավ, շարունակենք, — ասաց:

Յենք շարունակեցինք խաղը:

Խաղի ընթացքում Բալթածիսը ծաղրում եր Պրոդրոբորոլոսին:

— Դու մի ես, վոր Հունաստանի արժեքն իմանաս, — ասում եր փառապանծ հայրենիքի արժեքն իմանաս,

— Յես քո հայրենիքի ամրող կշիռը զիտեմ, — պատասխանում եր Պրոդրոբորորոլոսը և մի օթագավոր խփում սեղանին, ասելով: — Այս թագավորն ավելի արժեք ունի ինձ համար, քան քո Կոստանդին թագավորը:

— Դուք շատ եք առաջ դնում, — բղավեց Բալթածիսը:

— Յես գնում եմ, բայց դուք արդեն գնացել եք. յեթե շատ յերկարացնեք, ջրի շեշտ ձեր գլխին կտամ:

— Դուք ինձ անմղատվում եք անձնապես:

— Քեզ ել, քո թագավորին ել, — աղաղակեց Պրոդրոբորորոլոսը և թքեց գետնին:

Բալթածիսը ձեռքը մեկնեց իր անկողնի յերկանքով պառկեցրած գավազանին, Պրոդրոբորորոլոսն ել ձեռքը յերկարեց ջրի շեշտ և բռնեց հակառակորդի վըզից, բայց Բրեմբը բռնեց Բալթածիսին և յես ել՝ Պրոդրոբորորոլոսին:

— Յեթե այսպես շարունակեք, — սկսեց Բրեմբը, — մենք կդիմենք նավապետին և կինդրենք, վոր մեր կայլինը փոխեն. մենք չենք կարող ձեզ հետ ապրել:

Յերկու հույներն ել իրենց կովի «գործիքները» տեղները դրին և լոեցին:

— Յես կարծում եմ, — ասացի իես, — վոր Պրոդրոբորորոլոսն իրավունք չուներ խնդիրն անձնականի վերածելու:

— Հենց հարցը դրանումն ե, — պատասխանեց Բալթաճիսը, — կարող եր ամեն բան ասել, բայց իմ անձնական արժանապատվութիւնն չոփազեց:

— Միթե դուք գըմ համար վիրավորվեցիք, — հարցրեց Պրոդոբռոբռոբռոլուսը:

— Այո, գըմ համար:

Պրոդոբռոբռոբռոլուսը մի պահ լոռություն պահպանեց, հետո աչքերը հասեց Բալթաճիսին և յերկար նայեց, նրա աչքերն անզգալի կերպով խեղճացան, դարձան բարի, ներող և աղաչալան:

— Դու ինձ պետք ե ներես, իմ սիրելի Բալթաճիս, — ասաց Պրոդոբռոբռոբռոլուսը, — յես ուզում եմ անպատճել Հունաստանի թագավորին և նախկին պրեմիերին:

— Զեմ կարող ներել ձեզ — բղավեց Բալթաճիսը: Բըկմըը զայրացավ:

— Իրավունք ունի Պրոդոբռոբռոբռոլուսը, քեզ իւ քո թագավորին ել, յերբ դու չես կարող ներել այս թանգագին մարդուն:

— Խնդրում եմ դուք չկովեք Հունաստանի համար. այսոր յեթե չների, վաղը կների, — միջամտեց Պրոդոբռոբռոբռոլուսը:

— Յես զարմանում եմ քեզ վրա, — ասացի յես Բալթաճիսին:

Բալթաճիսը չպատասխանեց: Կարինում տիրեց ծանը լոռություն:

— Յես կրկին ներողություն եմ խնդրում, — խզեց լոռությունը Պրոդոբռոբռոբռոլուսը:

Բալթաճիսը վոչ անկեղծորեն, այլ մեզանից ամաչելով՝ ձեռքը յերկարեց իր հայրենակցին առանց

վորեե խոսքի և զուխը վեր չբարձրացնելով: Խաղը շշարունակեցինք: Պառկեցինք և սկսեցինք որորուել նավի հետ:

Միքանի որ անց, կեսորից հետո ժամը 6-ին կորիգորում մի ձայն լսվեց:

— Նյու. Յորկը յերկում ե արդեն:

Մենք բոլորս ել բարձրացանք վեր: Նյու-Յորկի միքանի բարձրաբերձ գագաթները միրճված ենին գեկտեմբերլան մոայլ և թանձր ամպերի մեջ, բայց վիթխարի քաղաքն այրվում եր միլիարդավոր ելեկտրական լույսերի ծովում: Նամակ արագորեն մոտենում եր նավահանգստին: Ահա անցնում ենք աղատության արձանի կողրով: Զահը ձեռքին, այս հոկա արձանը գեմքը դարձրել և Յելլուպային՝ պաշտպանելու համար իր դոլարների լեռնակուտակ գեզերը, յերկաթը, պողպատը, կեղաը, վոսկին ու ածուխը: Վոչ մի սիմվոլ այնքան չի արտահայտում կապիտալիզմի ամբարտագանությունը, վորքան այդ արձանը «աղատության»:

Յերբ նավահանգստին մոտեցանք, մեզ պաշարեց վիթխարի քաղաքի ահեղ աղմուկը, վոր գալիս եր աշնան քամուն նման, դղրդագին մի աղմուկը վոր նըման եր հեռավոր, սկ և մեծ անտառում իրար հոշոտող զագանների խուլ մոնչոցին:

Հանկարծ նշմարեցի, վոր Պրոդոբռոբռոլուսը լաց եր լինում: Նրա արցունքները կաթիւ-կաթիւ գըլորվում ելին աչքերից ներքեւ և քթի յերկու կողմերի ձեղքերից ծորում եյին շրթունքների վրա: Նա գողում, եր, գողում եր ինչպես մի բանից վախեցող մանուկ վոր չի ուզում իր վախն զգացնել: Առանց տատանվելու՝ մոտեցան նրան, բոնեցի ձեռքը և ուժգին սեղմելով հարցըրի.

— Ինչու յեք լաց լինում, ինչ պատահեց:
 — Շատ բան և պատահել, — հազիվ մրթմրթաց
 ալդ բարի և միամիտ հույնը:
 — Ասացեք, ինչ և պատահել:
 — Շատ բան, շատ բան, — պատասխանեց ինձ
 Պլոտոբորոբորոլում և իմ ձեռքից բռնած՝ տարավ
 նավեղը, ուր մարդ չկար կանգնած:

— 27 տարի յեմ ապրել այս սարսափելի քաղաքում, — սկսեց նա: — Փատանի եյի, վոր Ամերիկա յեկա
 առաջին անգամ: Յերկրում կորցրել եյի ծնողներիս,
 քույրս ամուսնացել եր: Սարսափում եմ հիմա 27
 տարվա հիշողությունից: 27 տարի առաջ յես յեկա
 նյու-Յորկ պարտքով, առանց վորեւ ծանոթի, առանց
 անգլերեն մի բառ գիտենալու: Առաջին անգամ աշխատանք գտա սառուցի ընկերության մեջ: Ամբողջ
 վեց տարի, ամեն առավոտ, պարտական եյի վեր կենալ
 ժամը 4-ին և սկսել կառքի միջից մեծ կտոր սա-
 ռուցները յերկաթե ճանկերով բռնել. նետել կռնակիս
 վրա Արեւելքի մշակների նման և բաժանել բնակա-
 րանները մինչև ժամը 12: Շարաթական ստանում ելի
 6 դոլլար, 6 դոլլարից մի գումար եյի ավելացնում
 պարտքերս վճարելու և մնացածով ապրում: Ապրում
 ելի ավելի վատ, քան վորեւ անսառւն, նկուղում, ո-
 րերով առանց տաք կերակրի: Սառուցի ընկերու-
 թյանը ծառայեցի ամբողջ վեց տարի, և շարաթակա-
 նիս վրա միայն 50 սենտ ավելացրին: Վեցերորդ տար-
 վա մեջ մի որ, յերբ ժամը 3-ին զարթնեցի պատրաստ-
 վելու և գնալու, զգացի, վոր վուկրներս ցավում են,
 շարունակեցի հագնվել, բայց գտա, վոր անկարելի յե-
 ղործի գնալ. մնացի սենյակում և չկարողացա զործի
 գնալ ամբողջ տասն որ:

Տասն որից հետո՝ յերբ գնացի, ինձ հանել ելին
 բանվորների ցուցակից. Վլխիկոր վերադարձա, միքա-
 նի շաբաթ անգործ մնալուց հետո գործ դտա մի յեր-
 կաթագործարանում, շաբաթական յերեք անգամ ա-
 վելի վարձով, քան սառուցի ընկերության մեջ: Յեր-
 ջանիկ ելի զգում ինձ, վոր աշխատանքս 50 անգամ
 ավելի ծանր եր, բայց շաբաթականս ավելի յեր: Յեր-
 կաթագործարանում աշխատեցի ամբողջ 21 տարի,
 յերկաթ հալող արեավառ հնոցի առաջ: 21 տարվա ըն-
 թացքում յերեսս և ձեռքերս խանձվեցին, ալրվեցին,
 կարծես կես դար ամբողջ հարավի կիզիչ արեկի տակ
 ելի աշխատել: 27 տարվա ընթացքում 3000 դոլլար
 փող աշխատեցի և մի որ ել վորոշեցի վերադառնալ
 հայրենիք, մի փոքրիկ տուն շինել և ապրել դառն
 կյանքիս վերջին տարիները: Վերապարձա իմ հայրե-
 նի զյուղը շատ քչերն ինձ ճանաչեցին, այնքան
 տարիներ ելին անցել: Շատերն ինձ խորհուրդ տվին
 հող գնել և հորս նման հողագործությամբ պարագել,
 բայց հոգնած եյի զգում ինձ և նախընտրում ելի
 միայն հանգստանալ:

Ամերիկայում խնայած բոլոր փողերս տարա քա-
 ղաք և զրի բանկում: Ուրախ ելի, վոր տոկոս ելի
 ստանալու. և այդ տոկոսով և փոքրիկ աշխատանքով
 պիտի կարողանացի ապրել: Առեն անգամ վոր հիշում
 ելի, թե վերադարձել եմ Ամերիկայից, ուրախանում
 ելի ինչպես մի փոքրիկ մանուկ. ուրախ ելի, վոր ա-
 մեն առավոտ չեմ լսում զործարանի սուլոցը կամ հան-
 դիպում վերակացուին:

Բայց հազիվ եր յերկու ամիս անցել, յերբ սկըս-
 վեց հելենո-թյուրքական արշավանքը: Յերկերն ամբողջ

խառնվեց իրար, մթերքների գները բարձրացան և դրախմինը (հունական թղթադրամ) ընկավ հաստրակ թղթի հավասար: Ամբողջ 27 տարվա իմ աշխատանքի, քրտնքի արդյունքը մի որվա մեջ փոշու հավասարվեց, և յես մի որում աղքատացա այնպես, ինչպես 27 տարի առաջ, յերբ գեռես հալրենիքումն ելի և Ամերիկա չեյի գնացել: Ահա թէ ինչու ատում եմ յես Հունաստանը, փիլիսոփաների հայրենիքը: Այդ արշավանքի կարիքը յերբեք չկար, արյունը հոսում եր հարստութեարի համար, վորպեսզի ավելի ու ավելի հարըստանան:

Ահա նորից վերադառնում եմ այս սարսափելի, ահարկու քաղաքը, վերադառնում եմ պարտքով, ուղում եմ գնալ հնոցի առաջ և խանձել իմ կյանքի վերջին տարիները:

Այս բոպեյիս ականջներս ամբողջ լցված են մեքենաների ճռճռոցով, ինձ թվում ե, վոր մեռած մարդկանց վոսկրներն են ճարճատում, ինձ թվում ե, վոր հազարավոր կմախքների ծնոտներ կափկափում են, սիրսս ճմլվում ե, յերբ լսում եմ նյութորկի աղմուկը, հոգուս վրա ամպեր են կուտակվում, յերբ տեսնում եմ այս փառահեղ քաղաքի ծուխը:

Պրոդոբուբորոբոլոսը թափեց դառն և աղի արցունքներ, հետո կարմրած և առանց թարթիչների աչքերը չոեց վիթխարի քաղաքին: Նրա աչքերում սարսափ կար, դեմքի մկանունքները խաղում ելին, և լուռ եր:

Նավը մոտեցավ նավահանգստին, կամրջակը գըցեցին նավից դեպի ամերիկան ցամաքը, սկսեցինք դուրս գալ: Մաքսալին ձևականությունները կատարե-

լուց հետո Պրոդոբորոբոլոսը բռնեց ձեռքս, սեղմեց և ասաց:

— Մնաք բարով, ո՞վ ե իմանում՝ կտեսնենք իրար, թե վոչ:

Նա գնաց, հրաժեշտ տվեց Բալթածիսին և Բըհմըրին: Նրանք ծիծաղով նրան ճանապարհ զբին, վորովհետեւ նրանք չեյին լսել նրա կլանքի վողբերգությունը: Իմ հայացքը հետևեց նրան, մինչև նա կորավ ահարկու քաղաքի փողոցներում:

ՅԵՐԿՈՒ ՀՐԴԵԼ

ՅՆԱԿՎՈՒՄ ԵԻԻ մըստր Ռիգգի տանը: Մր. Ռիգգը մարդկային այն շատ բնական և հասարակ կատեղորիաներից եր, վոր լինում են շատ հիմար, բայց չեն իմանում: Ինձ հետաքրքրողն ել հենց այդ բնականն ու հասարակն եր: Մր. Ռիգգը կլոր, գեր, կարսիր եր, իսկ տիկին Ռիգգը հինար, յերկարահասակ և խոշոր, ցցված և յերկար ատամներ ուներ:

Մր. Ռիգգը հարազցի յեր, նրա հայրը բարձր զինվորական եր յեղել Միացյալ Նահանգների քաղաքացիական պատերազմում չարաչար կերպով պարտված հարավի բանակում: Ամբողջ ութին ամիս իմ հաճախակի պատահումներին՝ մը. Ռիգգը միայն մի նյութի մասին եր խոսում - իր հայրը, նրա քաջազրությունները պարտված բանակում, ապա և նրա պլանատացիոնների անսահման տարածությունը և քաղաքացիական պատերազմով իր հոր կալվածատիրական տնտեսության ավերումը: Յերբ մը. Ռիգգը համուռմ եր պատմության վախճանին, նրա ձախը դողում եր, անկեղծորեն ապրում եր մի փողբերգություն, վոր հատուկ և այն մարդկանց, վորոնք հարուստ ժառանգություն են յերազում և սեփական աշխատանքը համարում են իրենց բնավորությանն անհարմար: Ռիգգի պատմության այդ վերջին մասն եր, վոր ինձ չափա-

կանց հետաքրքրում եր, վորովհետև տիկին Ռիգգը լացակումած աչքերով մոտենում եր իր ամուսնուն, բռնում եր նրա զլուխը և ուզում եր համբուրել նրան, բայց չեր հաջողում, շրթունքներն իրար չելին հասնում, մը. Ռիգգն եր, վոր համբուրում եր իր կնոջ ատամները:

Ես համառորհն ամեն առիթի նրանց պատմել եյի տալիս այդ պատմությունը և, վոր գլխավորն ե, հետաքրքրում ելի այնպիսի մանրամանություններով, վորոնցով մը. Ռիգգը վոգեորգում եր, պատմում եր անընդհատ և մինչև անգամ նամակներ եր քրքրում, վորպեսզի կարողանա ճշտել ամիսը, շաբաթը, որը և ժամը:

Այնքան եր վոգեորգում մը. Ռիգգը, վոր կուրանում եր, չեր կարողանում տեսնել, վոր յես պարզապես ձեռք եյի առնում իրան:

Ապա մը. Ռիգգը պատմում եր, թե իր հայրը ինչ կերակուրներ եր սիրում, վորոնց մեջ աչքի յեր գարնում կաղամբով պատրաստված մի կերակուր, վորի հոտը կաշում եր մինչև անգամ ուտողի զգեստներին:

— Ի՞նչ ճաշակավոր մարդ և յեղել — ավելացնում եյի յես անմիջապես:

Տիկին Ռիգգը զլուխը թեքում եր ուսի վրա, խորը բավականությամբ նայում եր իր ամուսնուն: Ես վոչ մի խոսքի համար այնքան չեմ զղացել, վորքան զրա համար: Դա պատճառ յեղավ, վոր շաբաթը յերեք անգամ տիկին Ռիգգն ինձ համար յեփի կաղամբով կերակուր: Մր. Ռիգգը միշտ գովարանում եր տիկնոջը, վոր ալղքան փափկանկատ և թե ղեպի իր հայրը և թե դեպի ինձ:

Մի առավոտ, նախաճաշի ժամանակ, մեր տան
անկյանը կանգնեց մի ապրանքատար ավտոմոբիլ
դողոաց, հաց ու լսեց: Մր. Ռիգզը, կարծելով, վոր
ավտոմոբիլը մեզ համար կանգնած կարող եր լինել
մուեցավ լուսամուտին և ներքե նայեց, մի պահ ապ-
շած մնաց, հետո վերադարձավ սենյակ, սկսեց ապուշ-
ալուշ նայել կնոջ վրա: Տիկին Ռիգզը, վոր առհասա-
րակ ուշի-ուշով հետեւում եր իր ամուսնու բոլոր շար-
ժումներին, նրանց մեջ միշտ հոգեբանական յերեսութ-
ներ գտնելու հուսով, փոխադարձ սկսեց նայել: Յես,
վոր նրանց շարժումների մեջ առհասարակ միայն մար-
դակազմական յերեսութներ ելի տեսնում, այս անգամ
մր. Ռիգզի աչքերում «տեսա» ինչ-վոր հոգեբանու-
թյուն: Յես ել սկսեցի նայել:

— Սատանան... արտասանեց մր. Ռիգզը և նստեց
աթոռին:

— Ի՞նչ պատահեց, — հարցրեց տիկին Ռիգզը և
վագելով՝ ամուսնու մոտ՝ ձեռքը դրեց ուսերին և ա-
տամները վագրի նման ցցեց նրա նայվածքի մեջ:

Յես վագեցի դեպի լուսամուտը, նախ գլխի չըն-
կա, բայց յերբ տիկին Ռիգզը լիտելցու վագեց, դիտեց և
«ահ» բղավելով՝ սկսեց լաց լինել, յես հասկացա:

Ապրանքատար ավտոմոբիլով տիկին եր մի նեղը
ընտանիք և կահկարսանիքը տեղափոխում եր ներս.
ուրեմն մեզ հարեան ե դառնալու մի սեամորթ ընտա-
նիք, վորը մահացու կերպով խոցում եր հարավի ա-
մերիկյան արխատոկրատների սիրու:

Յերբ մր. Ռիգզը տեսավ, վոր տիկինը բոլորովին

գունատվեց, վազեց պահարանը, կաթիլներ հասցրեց
և նրան հանգստացնելու համար՝ հարեց.

— Անպայման հասցեն սխալ ե, անպայման մի
աղետավոր թուրիմացություն կա:

Տիկին Ռիգզը հավատալով իր ամուսնու ամեն
մի արտասանության, լիներ դա խոսք կամ մլավյուն,
անմիջապես հանգստացավ:

— Յես կդնամ ճիշտ հիմա և կպարզեմ թյուրի-
մացությունը, — ասաց մր. Ռիգզը և անմիջապես հե-
ռացավ առանց նախաճաշի սուրճը խմելու:

— Դուք կարծնեմ եք, վոր այս թաղում թույլ
տրվի սեամորթներին ապրելու, — հարցրեց ինձ տիկին
Ռիգզն իր ամուսնու հեռանալուց հետո:

— Առաջին անգամն ե, վոր յես ալդուիսի բան
եմ լսում, — պատասխանեցի. — ամերիկյան սահմանա-
դրական որենքում գույների հարց չկա, վորքան յես
գիտեմ:

Վորովհետեւ յես չեի ապրել սեամորթների ստըր-
կատիրության համար պատերազմ հայտարարող և այդ
պատերազմում պարտված, ջախջախված հարավի նա-
հանգներում, ինձ շատ տարորինակ թվաց պանսիոնի
համար վճարած իմ փողով մասամբ ապրող այս արխ-
տոկրատների հոգեբանությունը:

— Բայց ինչու համար, տիկին, դուք այդպես...

Տիկին Ռիգզը չթողեց, վոր խոսքս շարունակեմ,
ավելի քաղաքավարի համարեց ինձ չլսելու անքաղաքա-
վարությունը, քան ինձ կողիտ պատասխանելու անքա-
ղաքավարությունը և հեռացավ:

Քիչ անց՝ մր. Ռիգզը ներս մտավ բոլորովին
գունաթափ: Տիկին Ռիգզն անմիջապես վազեց ներս:

— Դժբախտաբար, հասցեյի սխալ չկա, բայց հիմա գնում եմ փաստաբանի մոտ, այսոր ևեթ կը վերջացնեմ այս զգիվելի հարցը, չեմ թույլ տա, վոր մի գիշեր անգամ քննեն նրանք այս տանը իբրև մեր հարևանները:

Յես և մը. Ռիգը միասին դուրս յեկանք տնից, յես գնացի աշխատանքի, իսկ մը. Ռիգը՝ փաստաբանի:

Յերեկոյան, յերբ տուն վերադարձա, հարցը վերջնականապես լուծումն եր գոտել - վոչ մի որենք չեր կարող սեամորթի ընտանիքին դուրս հանել սեփական բնակարանից:

Յես չցանկացա վաչ սի խոսք ասել, թողեցի նրանց անսահման սգի մեջ և հեռացա իմ սենյակը և սկսեցի կարդալ Մարլուի «Դոկտոր Ֆառևստուս»-ը:

Այդ որից վերջ գտավ իմ հետաքրքրությունը դեպի մը. և տիկին Ռիգը, վորովհետև նրանց խոսակցությունը դարձավ անհանդուրժելի ինձ համար. միայն նախաճաշում և ընթրում եյի նրանց հետ առանց իմ կողմից խոսակցություն բանալու, իսկ իրենց խոսակցությունը դառնում եր այն «սարսափելի ընտանիքի» շուրջը, վոր ապրում եր «հարավի արխտոկրատների իբրև հարեան»:

— Իս հայրը չկովեց, վոր սեամորթն իր վորդու հարեանը դառնա, — սիշտ կը կնում եր մը. Ռիգը,

Բայց մի որ ել համբերությանս բաժակը լցվեց, և պատասխանեցի.

— Մը. Ռիգը, ձեր հայրը, այն, չկովեց, վորպեսզի սեամորթը ձեր հարեանը դառնա, բայց նա պարտվեց, վորպեսզի սեամորթը ձեր հարեանը դառնա,

— Զգվելի սրախոսություն, գոռաց մը. Ռիգը և հեռացավ սեղանից:

Յես ընթրեցի, քաշվեցի իմ սենյակը և, այդ կոպության ի պատասխան, վորոշեցի Փինանսական կրեպիս առաջացնել մը. Ռիգը տանը: Առավորան նախաճաշի չգնացի, յերեկոյան դուրսն ընթրեցի: Մյուս առավոտը մը. Ռիգը ժպալով մտավ սենյակս և ասաց.

— Տիկինը կարծում ե, վոր յես ձեզ հետ կոպիտ եմ վարվել. յեթե այդպես ե, ներեցեք:

— Տիկինը ճիշտ և կարծում, բայց ներում եմ, — պատասխանեցի:

— Ուրիմն այսոր նախաճաշի կդմք, հարցը եց մը. Ռիգը:

— Վաչ, — պատասխանեցի, — բժիշկը պատվիրեց ինձ արեկցան կերպարներուտերեւ և յես ցավում եմ, վոր ստիպված եմ հրաժարվել ձեր ծառալություններից:

Մը. Ռիգը հեռացավ տխուր:

III

Միքանի որ հետո, յերեկոյան, յերբ տուն եյի գալիս, իմ գուան առաջ կանգնած եր մեր սեամորթ հարեանը: Կիսալուսի մեջ նրա աչքերը վիալում ելին իրչպես վառվառուն լուցկին սթնում, շըթունքները կախ, հաստ և կարսիր, ատամներն սպիտակ, ինչպես կատարների ձևունը, իսկ սև սորթն ինձ ներշնչեց աղնը-վություն: Յես կանգ առա, նա յերեսը շուռ տվեց, վորպեսզի ինձ չմատնի չբարեկելու անհարմարությանը, բայց յես՝

— Բարե ձեզ, — ասացի:

Նա անմիջապես շուռ յեկավ, մի պահ լռեց և
հաստատ համոզվելով, վոր իրեն եյի բարեռում, դող-
դողալով պատասխանեց.

— Բարե ձեզ:

— Ի՞նչպես եք, — հարց տվի:

— Շատ լավ, — վրա բերեց սկամորթը անմիջա-
պես, սկամորթների հատուկ անգլերեն շեշտավորու-
թյամբ: — Դժուք ինչպես եք:

— Ի՞նչպես ե ձեր նոր բնակարանը, — հարցրի:

Սկամորթը առանց իմ հարցմանը պատասխանե-
լու շարունակեց.

— Դուք յերեի հարավից չեք:

— Վաչ հարավից և վաչ ել հուսիսից, — պատաս-
խանեցի, — յես արեելքից եմ և նախ և առաջ մարդ եմ:

— Ո... — յեղավ սկամորթի պատասխանը:

— Զեղ վոչ մի վտանգ չի սպառնում արդյոք
բնակարանից զրկվելու, — հարցրի:

— Վաչ մի վտանգ որենքով, բայց տիկին միգզը
որենքից հզոր ե յերեռում, — պատասխանեց սկամորթը:

— Ի՞նչպես:

— Մի հարցնեք. յերբ դուան առաջին իմ յերե-
խաները նրանց դիպչում են — «Հեռացեք, հեռացեք,
կերտուտում եք իմ շորերը» բավում ե և անհանդուր-
ծելի կերպարանք ե ցուց տալիս:

Զպատասխանեցի:

— Բարի գիշեր, մը Բուկեր, — ասացի սկամորթին
և հեռացա:

Լուսամուտից յես տեսա մը. Բուկերին, վոր իր
կանգնած տեղում դամված մնացել եր. նըա շրթունք-
ները դողում ելին, աչքերը սիրով և դուրգուրանքով

լցված, լերեռում եր, վոր նա խորապես զգացված եր
իմ վերաբերմունքից. Մի պահ գիտելուց հետո՝ յես
զգացի, շոշափման պես զգացի, վոր նա ցանկանում
եր ինձ գրկել և համբուրել:

Անցավ միքանի որ, յես հանդիպեցի տիկին
Բուկերին իր յերկու զավակներով: Բարեեցի տիկին
Բուկերին, իբր թե ուրիշ անգամ պատահած լինելի
նրան:

— Բարե ձեզ, — պատասխանեց տիկին Բուկերը
լայն բավականությամբ և առանց շփոթվելու, մինչդեռ
նրա յերկու սև փոքրիկները, փաթաթվելով մոր սրունք-
ներին, զլուխները կախ, բայց սեեռուն աչքերով՝ նա-
յում ելին ինձ, ինչպես ձմերուկի սև կետեր, նայում
ելին այն սպիտակ մարդուն, վոր ժպիտով բարեռում
եր իրեն մորը: Մոտեցա մեկին, փաղաքշանքով կմշտե-
ցի նրա սև, ուռուծ և փափուկ թշերը, աղա դառն ալով
տիկին Բուկերին՝

— Ի՞նչ առողջ են, — ասացի:

— Ըսորհակալ եմ, — պատասխանեց տիկին Բու-
կերը, և առաջին անգամ ըմբռնեցի այդ բառի իսկա-
կան նշանակությունը. մի բառ, վոր Ամերիկայուն
ամեն մարդ, ամեն քայլափոխի, ամեն առիթի, ամեն
մի բանի համար գործածում ե:

IV

Եես շուտով ծանոթացա նըանց կյանքի պատ-
մության. մը. Բուկերի հայրն ստրուկ ե յեղել, ինքն
ստրուկ ե ծնվել, քաղաքացիական պատերազմով ա-
զատվել ե: Մը. Բուկերը 20 տարեկան կորցրել ե իր
հորը, իսկ ինքը գինետան մեջ կեղտեր մաքրելով՝
գառել ե գինետան տեր, փող ե ավելացրել, աղա

ծախել ե գինետունը, տեղափոխվել մեր քաղաքը, մեր հարևան տունն ե գնել և զբաղվում ե վերարկուների առևտուրով:

Մի որ փոքրիկ Բուկերներից մեկին բերի իմ սենյակը, շոկոլադ տվի և ուղարկեցի տուն: Յերբ դրսի դուռը փակեցի և յերկու քայլ միջանցքն ուղեցի անցնել, մր. Ռիգզը ցցվեց իմ դեմք, ցասումից շվարած, ուղում եր մի բան ասել, բայց կակազում էր, մինչդեռ տիկին Ռիգզը ճաշարանի շեմքին կանգնած, ատամներն սպառնագին ցցած՝ դաժանորեն նայում եր ինձ:

— Դուք... դուք... դուք անպատվում եք մեր տունը, — հազիվ արտասանեց մր. Ռիգզը:

— Ի՞նչ ե պատահել — հարցրի անտարբերությամբ:

Տիկին Ռիգզը խելագարի պես ճշաց. այնքան դայրացավ նա իմ պատասխանից, վոր ուղւմ եր դռան փայտը կծել:

— Դուք անպատվում եք մեղ գարշելի սկամորթի յերեխան բերելով իմ տունը, — բղավեց մր. Ռիգզը:

— Իմ սենյակն եմ բերել, — պատասխանեցի և ուղեցի հեռանալ յերբ մր. Ռիգզն իմ թերիցս բռնեց անսահման զսպողությամբ:

— Դուք պետք ե հեռանաք իմ տնից, — շարունակեց նա:

— Լավ, թող ամիսը վերջանա, կդնամ — պատասխանեցի և մտա սենյակս:

Դ

Դեռ ամիսը չեր վերջացել: Մի յերեկո ժամը 10-ի մոտերքը տուն յեկա, մեր փողոցը շուռ չեկած՝ տե-

սա, վոր մեր տան անկանը ահավոր բազմություն եր հավաքվել, վոստիկանները կանգնած եյին և կարդ ելին պահպանում: Շտապեցի:

Սևամորթ Բուկերի բնակարանն ալրվ: Եր հրշաջները քարուքանդ եյին անում շենքը, տունն ամբողջ ճարճատում եր, բոցավառվում և փլչում, ջրի մեքենան անդադար աշխատում եր: Զրի ահավոր մի հոսանք իրեկ անդիմադրելի մի պատնեշ կանգնել եր մր. Ռիգզի և սեւամորթի վառվող տան մեջտեղում և պաշտպանում եր Ռիգզի բնակարանը:

Մր. Բուկերը, իր տիկնոջ և զավակների հետ, կանգնած եր բոցավառվող տան դիմաց: Բոլորն ել դիտում ելին հրդեհը ահարկու և ահարեկված աչքերով: Վաղեցի նրանց մոտ: Տիկին Բուկերն արցունքուտ աչքերով զրկեց ինձ և սասց.

— Դեռ չելինք ապահովագրել տունը:

Մր. Բուկերի կարմիր շրթունքները դողում ելին, նրա նայվածքի մեջ մի ամբողջ փոթորկալից ծովի մոայլություն կար:

— Մր. Ռիգզն ե այրել իմ տունը, մր. Ռիգզն ե կրակ գցել իմ բնակարանը, պետք ե որենքը պատժի նրան, յեթե վոչ յես անձամբ կպատժեմ նրան:

Վոստիկանը մոտեցավ մր. Բուկերին, կանգնեց նրա դիմաց ինչպես մի դաժան կոշմար և ցածր ու հատուկ շեշտով սասց.

— Գիտեք, վոր սպառնալիքը քրեական հանցանք ե համարվում:

— Գիտեմ, ամեն բան գիտեմ, գիտեմ նաև, վոր որենքը միայն սկ գույնն ե տեսնում, — պատասխանեց մր. Բուկերը:

— Սուս, սաստեց վոստիկանը, լերհսը դարձրեց
և մեխվեց իր տեղում:

Յես վազեցի իմ տունը, արագ բաց արի ճաշա-
րանի դուռը, ուր մի ամսից իվեր վոտ չելի դրել
Մը. Ռիգը և տիկին Ռիգը ահարեկված ցատկեցին,
սուրձի բաժակները թափեցին: Յես մի պահ կանգ
առա, ապա յերկու քայլ մոտեցա, հառեցի հարավի այդ
յերկու արիստոկրատների աչքերին և համոզվեցի, վոր
հրդեհը նրանք եյին ցցել:

— Սրիկաներ, — բոռացի, — դուք անասուններ, գա-
զաններ եք:

Նրանք չպատասխանեցին: Մոտեցա պատուհա-
նին, տեսա մը. Բուկերին իր կնոջով և յերկու յերեխա-
ներով, վորոնք լուսավորված ելին իրենց բնակարանի
հրդեհի բոցերով, կուչ յեկած, յերեխաները լաց եյին
լինում իրենց մոր հետ, իսկ մը. Բուկերը հառել եր իր
աչքերը բոցավորվող բնակարանի գժոխային լեզու-
ներին:

Մը. Բուկերի բնակարանում բայցի ալրվող նյու-
թերից ալրվում եր նաև ամերիկան սահմանադրական
որենքը և յես լսում ելի նեզրի ալրվող բնակարանի
և կեղծամիտ որենքի ճարճատյունները:

ՄԵՅՐԻ ԸՆԴԸՐՎՈՒՄ

1.

Յերբ յես «Ոլդ Սառու» ապարտըմանում սենյակ
վարձեցի, Մելրին միւնուն հարկի վրա հարազցի
մի սպիտակ ընտանիքում աղախին եր: Առաջին իսկ
որից յես նրան ծանոթացա, — ծանոթացա առանց
հետը խոսելու, մինչև անգամ առանց բարեկլու: Զե-
վականությունների կարիք չկար ծանոթության հա-
մար: Նա մի նեզրուհի յեր, ուրեմն պարզ եր նրա
կյանքի ամբողջ մանրամասն պատմությունը — նեզրու-
հի Միացյալ Նահանգների հարավի քաղաքներից մե-
կում, — դա նշանակում եր լինել որենքի առաջ ազատ,
բայց ստրուկ՝ որենքի կուր աչքերից հեռու, կյան-
քում:

Յերբ կեսորին յես սենյակը վարձեցի, ապարտը-
մանում ինձ ավոչվոք չտեսավ: Յերեկոյան սենյակս
մտնելիս՝ Մելրին կանգնած եր իրենց բնակարանի
դռան առաջ: Նա հետախուզ հայացք նետեց իմ վրա
իրեն նորեկի: Ողային գաղի լուսը, վոր վառվում եր
իմ սենյակի դռան և նրանց բնակարանի դռան միջև,
սանդուղքների ճիշտ դիմացը, լուսավորում եր նրա
գեմքը: Մեսթույր մորթը փայլում եր ինչպես սրբված
կոշիկի քիթը, իսկ աչքերը վառվում եյին անմեղ ու
անվասագաղանի աչքերի նման, գլխին սպիտակ և
մաքուր գլխանոց ուներ, փորի վրա փոքրիկ — ելի

սպիտակ և մաքուր - մի դոգնոց, ուժեղ հակադրությամբ իր մորթի և հազած շորերի հետ, կարծես նա նման եր ու ու սպիտակ ազռավի:

Յերբ յես նայեցի նրան սենյակիս դռան բանալին պատաժ ժամանակս, նա ժպտաց սպիտակ ատամների միջից, վորոնք յեղերված ելին դինու կարմիր և կըքոտ շրթունքներով:

Սենյակումս ամեն ինչ խորթ և ոտար եր թվում, կարծես իրերը նայում ելին ինձ վրա ստոած աչքերով, բաց արի պահարանը. վոչինչ չժպտաց ինձ, պահարանում դարսված իրերը լոեցին. նայեցի ճոճաթուի վրա. կարծես չեր յանկանում ինձ որորել. սկսեցի դիտել պատերից կախված պորտետները. նրանք ինձ չճանաչեցին:

— Վաչ մի բարեկամ իր չկ այս սենյակում, — մըմնջացի ինքս ինձ:

Սկսեցի մի յերգ յերգել. այդ սենյակում վոչ մի իր չլսեց իմ յերգը:

Յերկար չկարողացա մնալ և դուրս յեկա սենյակից. Սանդուղքների վրա հանդիպեցի յես Մելրին: Նա վեր եր բարձրանում աստիճաններից, հոգնած և տիրուր: Յերբ մենք իրար կտրեցինք⁷ և անցանք, միշտանի աստիճան իջնելուց հետո յես յետե դարձա, Մելրին ել կանգ եր առել, դարձել եր յետե: Մեր նայվածքներն իրար հանդիպեցին՝ հինավուրց բարեկամների նայվածքների նման:

Առավոտան, յերբ սենյակից դուրս յեկա, Մելրի դռան առաջ կանգնած եր մի տիկին, յերկարահասակ, չոր, ժամանակից առաջ խորշոմներով պատած դեմքով, չոր և դեղին աչքերով:

— Մելրի, — պոռում եր տիկինը դեպի ներքե, կայրացած:

Յես սկսեցի իջնել. հաջորդ հարկի վրա Մելրին մի ուրիշ նեղորուհու հետ խոսում եր, ըստ յերկութին նա չեր լսու՞ տիկինոջ ձայնը: Մի վայրկան վարանեցա, ուզում եյի ասել նրան, վոր տիկինը կանչում ե: Տիկինը զայրացած եր և կաբող եր նրան պատժել: Մոռացա:

— Զեր տիկինը կանչում ե, — ասացի:

Մելրին ահարեկված վազեց և մոռանալով անդիբեն լեզվում ամենասովորական և ամենակարձրառն արտասահնել - thanks*):

Շարունակեցի իջնել:

Հաջորդ որը յես Մելրիին հանդիպեցի փողոցի մայթի վրա: Նա մտերմի պես մոտեցավ ինձ և

— Յերեկ յիս ձեղ շնորհակալություն չհայտնեցի, ներեցեք, — ասաց:

— Մի մտածեք այդ մասին, — պատասխանեցի:

2.

Անցան միքանի շաբաթներ: Իմ սենյակի իրերը փոխեցին իրենց վերտերմունքը դեպի ինձ. յես սկսեցի հասկանալ նրանց և սիրել: Յերբ յիս ներս եյի մանում, սեղանիս վրա ապրող ջրի կապտագույն շիշը ժպտում եր ինձ, ժպտում եր այնպիսի վարդագույն ուրախությամբ, վոր ինձ համար ջուր խմելը դառնում եր անդիմապրելի: Ճոճաթոսի մեջ նստելիս ինձ թըգում եր, վոր մտերիս և սիրող թեկը ինձ են գրկում: Յես զզացի, վոր իրերն ել ունեն իրենց զգացում-

*) Շնորհակալություն:

ները, փոխադարձ մտելմության ճանաչողության պահանջը:

Ահա հարավի վառ արել փովել և իմ սենյակում, հատակի կանաչ գորգի վրա, աչքերս դեռ կիսաբաց են, բայց տեսնում եմ, զոր սենյակումս ապրող բոլոր իրերը ժամանում են, ուղում են ինձ հետ խոսել, գիշերն ամբողջ ինձ պաշարել են, հսկել փայփայել, և յս քնել եմ նրանց հովանավորության տակ: Մի փոքրիկ կիսանզրի, վոր ապրում ե անկունը դրված յերկարահասակ մի պատվանդանի վրա, կարծես ինձ ասում ե՝

— Դիշերները յերկար կարդում ես և գրում, իսկ առավոտներն ուշ ես վեր կենում. ավելի լավ ե գիշերները քնես և առավոտներն աշխատես:

Իսկ յս պատասխանում եմ նրան.

— Սխալ ես դատում, քար, յես պետք ե զրեմ այն ժամանակ, յերբ բոլոր իրերը հանգստանում են գիշերվա իմ սենյակի մթնշաղում, վորպեսզի նրանք ինձ չզբաղեցնեն իրենց կյանքով. հետաքրքրական ե իրերի կյանքը, բայց յս գրում եմ զրամաներ, և ինձ հարկավոր ե միայն մարդկանց կյանքը, դրա համար պատում եմ իմ լամպը մուգ-կանաչ թղթով. ինձ հարկավոր ե միայն մի կտոր լույս իմ առաջ դրված զրքի մի եջի կամ մի փոքրիկ թղթի լուսավորության համար, ճիշտն ասած, ինձ հարկավոր ե այնքան լույս, վորքան իմ զրքի շուրջը լուսավորված լինի մի մեծ կոճակի չափ:

Կիսանզրին չի պատասխանում, նա լուսմ է: Ի՞րերը շատ շուտ են ըմբռնում մարդուն:

3.

Առավոտյան Մելքիի բնակարանի դուռը միշտ բացվում ե և փակվում: Սենյակիս դուռը բաց եմ անում, տեսնում Մելքիին, վոր մտնում ե և դուրս գալիս, միշտ վոտի վրա, կաթ ե բերում, ձու յե բերում, ապա տաք կարկանդակներ, արթուկը տանում ե դուրս, մաքրում և բերում, սպիտակ շորեր ե դուրս տանում, փոռում և վերադառնում:

Յես և Մելքին արգեն բարեկամներ ենք:

— Բարի լույս, — ասում ե Մելքին:

— Բարի լույս, Մելքի, — պատասխանում եմ:

Նա ժպտում ե սպիտակ ատամներով, աչքերը վառվում են, շրթունքները դողում: Նա աշխատում ե տիրել շրթունքներին, վորովհետև շրթունքները շուտ են մատնում մարդու ներքին զգացումները. բայց նրա շրթունքները դողում են քամու առաջ կախված թիթեղի նման:

— Տիկինդ ալրի՞ յի, Մելքի, — հարցնում եմ:

— Վոչ, բայց... ալո, այրի յի... չե, ալրի չե, — պատասխանում ե Մելքին և բարձր ծիծաղում:

Մելքիի տիկինը յերեսում ե զռան մեջ: Յես անմիջապես քաշվում եմ, մինչեւ անգամ համոզված լինելով, վոր Մելքին վատ ե զգալու իմ կոպիտ վերաբերմունքից:

— Բայց վոչինչ, — մտածում եմ, — հետո կիմանա, վոր յես քաշվեցի, վորպեսզի տիկինը դռան մեջ յիրելուն իմացնեմ:

— Մելքի, — ճշում ե տիկինը զայրացած:

— Այո, մատմ, — պատասխանում ե Մելքին ինքնարելաբար:

Լոռւմ եմ Մելրիի վոտների ձախը: Գնում եմ
ներս:

Ինձ զարմացրեց Մելրիի տարորինակ պատաս-
խանը իր տիկնոջ այրի լինելու մասին:

— Յերանի՛ այրի՛ չլիներ, — մտածում եմ, — այդ
փտած կենդանին ստիպված կլիներ մեկն ու մեկն
զբաղեցնել:

Հաջորդ գիշերը վեր բարձրանալիս տեսա, վոր
մելրին բնակարանի դռան առաջն ե, ինչ-վոր յետի-
վում մի բան և թագցրել: Յերբ տեսավ, վոր վեր
բարձրացողը իս եմ, ծիծաղեց և ասաց.

— Վախեցա թե ուրիշն ե, լավ վոր գուք եք:

Յետել թագցրածը դուրս ըերեց: Դա մի յերկար
կոթով տապակ եր, մեջը խոզի ապուխտ ջարգած:

Նա տապակը յերկարեց գաղի լամպի վրա:

— Ի՞նչ ես անում, — հարցրի:

— Ապուխտ եմ պատրաստում, — պատասխանեց:

— Այստեղ կորիգորում, լուսի՞ վրա:

— Այո, ի՞նչ անեմ:

— Ի՞նչու, ի՞նչ աստճառ կա, վոր այստեղ ես
տապակում, ներսում խոհանոց չունեք:

— Ունենք, — պատասխանեց Մելրին, — բայց տի-
կինս չի թողնում, գաղի անտեսություն և անում:

Յերկարեցա տապակն առի Մելրիի ձեռքից:

— Ի՞մ գաղի վրա կտապակեմ և քեզ կտամ, — ա-
սացի:

— Ծնորհակալ եմ, — ասաց Մելրին:

Երա աչքերը կատվի աչքերի նման փայլեցին:
Հաջորդ օրը, կեսգիշերին, նա ինձ սպասում եր
դռան առաջ:

— Ալո՛, Մելրի:

— Ալո՛, բարի մարդ, — պատասխանեց Մելրին:

— Տներ տապակը, — ասացի:

— Այսոր վոչինչ չունեմ տապակելու, ամեն որ
չեմ ունենում, յերեկ ներքեկի հարևանն եր տվել ինձ,
այսոր չի տվել:

Բռնեցի. Մելրիի ձեռքից:

— Մի մերժի, Մելրի, — ասացի, — դու ինձ բարի
մարդ ես կոչում, բարի չեմ, այս աստղի վրա բարու-
թյուն չկա, արի սենյակս, միասին ընթրենք:

— Տիկինս կիմանա:

— Զիմանար, դուռը բաց կթողնենք. յեթե ձախն
լովի, դուրս կգաս:

Բայց Մելրին հեռացավ:

Մելրին յերկար ժամանակ չուզեց իմ սենյակը
գալ: Շատ դժվար եր սպիտակամորթի համար համո-
զել սեամորթին, վոր սպիտակամորթն անկեղծ ե: Աշ-
նան մեջերքում, մի գիշեր, աստիճանների վրա, բռնե-
ցի յես Մելրիին:

— Սյոր անպայման պետք ե գաս իմ սենյակը
սիասին ընթրելու, — ասացի:

— Այժմ յես քեզ հավատում եմ, — պատասխանեց
Մելրին, — կգամ, բայց պետք ե սպասես, մինչև տիկինս
քնի:

— Լավ, կսպասեմ:

Ժամից ավելի սպասեցի յես Մելրիին. աշնան
քամին սուլում եր դուրսը, վողբալի յերգում մերկա-
ցած ծառերի ճյուղերի մեջ, քամին գարնվում եր
իմ սենյակի լուսամուտների փեղկերին, ինձ հետ առ-
բող իրերը բոլորն ել նախում ելին ինձ, նրանք հաւ-

կանում ելին տարրերի յերգը, իսկ յես զբաղված ելի
Մելրէին դիմավորելու:

— Մելրին պիտի գա ինձ մոտ և միքիչ հանգըս-
տանա, նրա հոգին պիտի հրճվի, նրա սև մարմինը
պիտի զգա սպիտակ հանգիստը: Սպասումն ինձ մա-
շշնում ե, բայց զգում եմ, վոր ներքին ուրախու-
թան մի տիրական ալիք ինձ հեղեղում ե, ուրախ եմ,
վոր հոգիս խոնարհ ե, այսքան խոնարհ, վոր կարող
ե հրճվել մի սկամորթի յերջանկությամբ:

Դուռը թխկացնում են:

— Մտեք:

Մելրին—առաջին անգամ—մտավ իմ սենյակը:
Իմ իրերը նրան սիրով ընդունեցին, ժամացույցը
հնչեց 1. հայելին զրկեց Մելրին, Մելրին ժպտաց
հայելու խորության մեջ, սեղանիս սպիտակ սփոռոցը
հրճվում եր, պատրաստ եր տարածվելու իմ հյուրի
առաջ սպասարկելու համար: Իրեն ուզում ելին ծա-
ռայել, նրանք ստրուկ չեն, նրանք հոփարակամ են:

Մելրին ավելի շատ խոսեց, քան կերավ:

— Իմ տիկինն ալրի յեռ ու այրի չե, նրա ամու-
սինը հենց մեր բնակարանումն ե, յետեւ սենյակում
պառկած, յերկու տարի յեռ նա հիվանդ ե, անկարող ե
անկողնից վեր կենաւ ինձ բերին այստեղ, վորախողի
նրան խնամեմ, կեղտոտությունը թափեմ. կողը դարձը-
նեմ, վոտները, կռնակը, թերեր շփեմ, ջղալին հիվան-
դություն ունի:

— Սպա ինչո՞ւ յես ասում, վոր քո տիկինն ալ-
րի յե. չե վոր ամուսին ունի:

— Ունի, բայց նա ի՞նչ ամուսին ե, տիկինն
միշտ ասում ե,

— Ավելի լավ ե բոլորովին ալրի, քան կես այ-
րի լինել:

Մելրին պատմեց, վոր յերբ պարոն Հյուզը մե-
կին կանչում ե, տիկին Հյուզը գուրս և զալիս ե ներս
ուղարկում Մելրին:

— Գնա ներս,—ասում ե,—անասունը հուզված ե:

— Ես գնում եմ ներս,—շարունակեց Մելրին,—
իսկ տիկինը զզվանքով հեռանում ե և գնում պա-
տըշտամ:

— Կորիգորում յերբ յես տիկնոջս հանդիպում
եմ,—ասում ե՝ խոզ ե դարձել ուլիշ վոչինչ:

— Բայց պարոն Հյուզը շատ ազնիվ մարդ
ե. իր տիկնոջ ներկայությամբ ասում ե.—Մել-
րի, սիրելիս, դու հագար անգամ ավելի արժես,
քան իմ կինը: Տիկինը կատաղում ե, կատաղում ե վոչ
թե իր ամուսնու վրա, վոր պատասխանատուն ե աս-
ված խոսքերի, այլ իմ վրա: Նա միքանի անգամ ինձ
ծեծել ե իմ ստացած գովասանքի համար: Ասում եմ
լավ ե, վոր յես այստեղից հեռանամ, յես յեկել եմ
պարոն Հյուզին ծառայելու, նա հիվանդ ե, դրան ել
համաձայն չե, պիտք ե ծառայեմ, բայց չգիտեմ ինչ-
պես պետք ե անեմ, վոր զովասանքներ չստանամ:
իսկ պարոն Հյուզը համառությամբ կրկնում ե.—Մել-
րի, դու սև ես, բայց հոգին սև ե: Միքանի անգամ խընդ-
րեցի ու. Հյուզից ինձ չզովաբանել, բայց նա ավելի
կատաղեց, նա յերեկ մինչեւ անգամ ասաց տիկնոջ
ներկայության:—Յեթե յես լավանամ, պիտք ե զցեմ
իմ կնոջը և մի ներգը, բարի աղջկա հետ ամուսնանամ:
Յես զիտեմ, տիկինս սպասում ե, վոր իր ուզած մի
քանը միքիչ ուշ կատարեմ, վոր նա ինձ ծեծի:

— Թող արդ բնակարանը, Մելքի՛, — ասացի, — և
գնա մի ուրիշ տեղ աշխատելու, յեթե յես կին ունե-
նայի, քեզ կվերցնելի մեղ մոտ:

— Վոչ, ուրիշ տեղ չեմ գնա, յես խոսք եմ տվել
պ. Հյուզին խնամել իրեն, մինչև լավանա կամ մեռնի:

Մելքին այս խոսքերն արտասանեց այնպիսի
վճռականութիւմբ, վոր ալես վնչ մի առաջարկու-
թյուն չարի:

— Դու բարի աղջիկ ես, Մելքի՛, — ասացի:

Մելքին վեր կացալ և

— Բարի գիշեր, — ասաց:

— Բարի գիշեր:

Դուրս գնալուց առաջ յես խնդրեցի Մելքին
այսուհետեւ ամեն գիշեր գալ ինձ մոտ և միասին
ընթրել:

— Կամ, — ասաց Մելքին ժպտալով:

Ես նրան ուղեկցեցի մինչև կորիզուս: Մելքինց
բնակարանի դուռը բաց եր, և շեմքի վրա ցցվել եր
նրա տիկինը:

Մթնում ինձ թվաց, վոր մի եղ վագր և դարա-
նակալ սպասում մի մարդկացին զոհի. նա մազերը
գանգուր անելու համար թղթի կաորներ եր փաթա-
թել, վորոնք ցցված եին զլիսի վրա մեփիստոփելլան
վոճով: Տիկին Հյուզն իր դեղին աչքերը մխրճեց Մել-
քի աչքերի մեջ:

Մելքին կանգ առավ, նայեց ինձ, կարծես նա
ուղում եր աղեկառը մի ճիշ արձակել: Ես անմիջա-
պես առաջ անցա:

— Ներեցնք, տիկին, — ասացի, — յես եմ խնդրել
Մելքին ինձ հետ ընթրելու:

— Ես ձեզ ծանոթ չեմ, — կոպտաբար պատաս-
խանեց տիկին Հյուզը և ներս գնաց:

Մելքին ներս գնաց նրա յետելից և դուռը փա-
կեց: Կես ժամի չափ յես կանգնեցի նրանց դռան
առաջ, ականջ դրի, բայց վնչ մի ձայն չլսեցի:

4.

Առավոտյան յես Մելքին չհանդիպեցի: Մինչև
անգամ ներքեւ իջնելուց հետո յել նորից վեր բարձրա-
ցա, իրը թե մի բան եմ մոռացել սենյակումս, ելի
չհանդիպեցի նրան:

Յերեկոյան դարձյալ չհանդիպեցի: Համոզված ելի,
վոր նա յեթե վախից չուզենար ընթրիքի գալ գեթ
կզար և կհայտներ: Մելքին ելի չերեաց: Գիշերը, ամ-
բողջ գիշերը յերկար մտածեցի նրա մասին:

— Յերեկ տիկինը խստիվ արգելել ե նրան ինձ
հետ խոսել և մինչև անդամ զգուշանալ կորիզուս
կամ սանդուղքների վրա ինձ պատահելուց:

Հաջորդ որը առավոտյան յես իջաներքելի հարկը
և սպասեցի, մինչև վոր Մելքիի բարեկամ նեգրուհին
դուրս յեկավ: Մոտեցա նրան և հարցըրի:

— Անցյալ գիշերվանից Մելքին չե յերեւմ, ինչ
է պատահել:

— Մելքին հիվանդ ե, — պատասխանեց նեգրուհին:

— Ի՞նչ ե պատահել:

— Մըսել ե:

Խնդրեցի նեղությունուց գնալ Մելքիի մոտ և հայտ-
նել իմ ցավակցությունը:

— Թող բժիշկ կանչի, յես կվճարեմ բժշկի ծոխուը:

— Պ. Հյուզը բժիշկ կանչել և արդեն:

— Կարսղ ես հարցնել նրան, թե ինչու յե հիվանդացել:

Նեգրուհին ծիծաղեց:

— Հիվանդության համար վորոշում չի կայացրել—պատասխանեց նեգրուհին, —հիվանդին կհարցը նմն, թե ինչու յե հիվանդացել:

— Խնդրում եմ հայտնել նրան այդ և աղատ լինել ծիծաղելու:

Յես զգացի, վոր տիկին Հյուզը մի չարություն ե արել խեղճ Մելրիին: Կարծես մեկն ինձ ասում եր այդ:

Յերեկոյան յես շուտ վերադարձա հատկապես Մելրիի մասին տեղեկություն ստանալու: Նեգրուհին կանգնած եր ու ինձ եր սպասում:

— Պարոն, դուք ճիշտ եք, ահա թե ինչու յե նա հիվանդացել. ձեզ մոտ ընթրելուց հետո՝ տիկինը նրան պատժել ե, քշել ե նրան պատշաճմը և ամբողջ գիշերը չի թողել. վոր ներս գա, մըսել ե նա. պատշաճմում և թռքերի բորբոքում ե ստացել:

Ուզեցի պատասխանել նեգրուհուն, բայց նա ահմիջապես շարունակեց.

— Ներողություն եմ խնդրում, վոր ծիծաղեցի յերեկ, դուք ճիշտ եիք:

Նեգրուհին ամեն որ ինձ տեղեկություններ եր բերում Մելրիի մասին: Վատանում եր նա: Պ. Հյուզը կնոջ հետ կովելով ամեն որ բժիշկ եր կանչում, բայց վոչ մի բարելավում: Պ. Հյուզի ջղակնությունը հասել եր իր զագաթնակենտին, վորովհետեւ լսում ելի նրա ձայնը, վոր բզավում եր.

— Անիծխալ ես դու:

Պարզ եր, վոր նա բղավում եր կնոջ վրա:
Յես կանգնում եյի իմ դռան առաջ, վորպեսզի
պատահարար հանդիպեմ տիկին Հյուզին, ու զում եյի
թքել նրա յերեսին, բայց նա յերբեք չեր յերեսում:
Նեգրուհին ասաց, վոր նա տան գործերն սկսում ե
անել այն ժամանակ, յերբ յես հեռանում եմ տնից:

Մելրիին տասն և չորս որ եր պառկած եր: Յերե-
կոյան նեգրուհին ինձ հայտնեց, վոր շատ վատ ե
Մելրին, ել չի կարող խոսել:

5

Հաջորդ առավոտյան կանուխ դուռս թխացրին:
Այդ թխացը ծանր քարի նման ընկալ իմ սենյակի
մեջ: Իրերը բոլորն ել հառեցան ինձ տխուր և վող-
բազին:

— Մտեք:

Ներս ընկալ նեգրուհին և գլուխը կախ՝ կանգ-
նեց շեմքից ներս:

— Մելրին գիշերը մեռավ, —մընջաց նեգրուհին:

— Ուր ե նրա գիտակը, ուզում եմ տեսնել:

— Կեսպիշերին մահակառքը յեկավ և տարավ:

6.

Պ. Հյուզը, հակառակ՝ իր տիկինոջ ստորոտթյան և
գաղանության, կարգադրել եր Մելրիին թաղել սպի-
տակների գերեզմանոցի Հյուզի ընտանիքին պատկա-
նող կալվածում:

— Ի՞նչպես կարելի յե մի այնպիսի արտառոց
կարգադրություն անել —ասել եր տիկին Հյուզը, —ի՞նչ-
պես կարելի յե թաղել նեգրին սպիտակների գերեզ-
մանոցում, հարավային սահանգներից մեկում:

— Ավելի լավ կանես գու՝ լոես, վոճրագործ,— պատասխանել եր ջղային հիվանդը, գալարվելով իր անկողնում:

Սևաթուզը աղջկա դադաղի վրա յես սպիտակ ծառիկներ տարի, նրա հոգու չափ սպիտակ ծաղիկներ: Իր բարեկամ նեղուժին նրան հազցընել եր սև շորեր, սպիտակ գլխանոցով և սպիտակ զողնոցով: Նրա դագաղին միայն հետեւցին 4 հոգի: միայն յես եյի սպիտակը նրանց մեջ:

Մելրին հանգստանում եր իր դադաղում և ժըպտում: Յես խորապես զգացի այդ հանգիստը:

Մեյրիի հողակույտի վրա, իմ սփոած սպիտակ ծաղիկների մեջտեղում, գերեզմանապահը մի տախտակ դրեց հետեւյալ մակագրությամբ.

ՄԵՅՐԻ ԸՆԴԾՐՎՈՒԴ. 1905—1922

Աշնանային դեղնած միքանի տերևներ ընկան նրա հողակույտի վրա:

Սենյակ վերադարձիս՝ իրերն ինձ կառչեցին. նընանք կարծես մի բան ելին ուղում իմանալ, բայց նրանցից վոչ մեկը չխոսեց:

— Մեյրին մեռավ, թաղեցինք Մելրիին, — բղավեցի բարձրածայն:

Տրտմության մի լայն շունչ իջավ իմ սենյակում:
7.

Անցավ 15 որ: Մեյրիի սպիտակների գերեզմանոցում թաղվելու լուրը համառորեն տարածվեց նեղրատաց հարավի քաղաքում:

— Ի՞նչպես կարելի յես սրբապղծել սպիտակների հանգստարանը:

— Ի՞նչպես կարելի յես կեղաստել սպիտակների հաղին:

Կու-կլուքս-կլանի*) ղեկավարները դաժան պրո-պագանդ մղեցին պ. Հյուզի կարգադրության դեմ: Տիկին Հյուզը, իր ամուսնու աչքերից հեռու, միացավ կու-կլուքս-կլանի պլուպագանդին: Ահավոր ստեր հորինեց «ազնվական տիկինը» բարի Մելրի Բնդըր-վուդի շուրջը: Քաղաքի սպիտակ բնակչությունը զինվեց նեղութեալ Մելրի Բնդըրվուդի անզոր դիակի դեմ:

Մելրիի թաղումից 20 որ հետո՝ կեսպիշերին, կու-կլուքս-կլանի կազմակերպության անդամ 15 հերոսներ, իրենց սպիտակ յերկար և գլխի վրա սրածագած մեռքերին հագած, ձեռքերին բոցավառ ջաներ տարագները հագած, ձեռքերին բոցավառ ջաներ խուժեցին սպիտակների գերեզմանոցը, փորեցին նեղութեալ Մեյրի Բնդըրվուդի գերեզմանը, հարցին նրա նեխած դիակը, հոհուալով, ծաղեկով և ծանցին նակելով, փողոցները ման ածելով, տարին և նետեցին նեղութեալ գերեզմանոցը:

Մեյրի Բնդըրվուդի դիակը յերբ անցկացըին մեր փողոցով, տիկին Հյուզը կանգնած եր լուսամուտի մեր փողոցով, տիկին Հյուզը կանգնած եր հողոտող շան առաջ, առամիները ցցած՝ հրճվում եր հողոտող շան նման:

Յես գլուխս դուրս հանցի իմ լուսամուտից և թքելով տիկին Հյուզի յերեսին, բղավեցի.

— Վոճրագործ:
— Կեղաստ ոտարական, — պոռաց նա ինձ ու ներս քաշվեց:

*) Ամերիկայի ֆաշիստական կազմակերպությունը:

Առավոտյան յես վաղեցի նեղուերի գերեզմանոցը:
Մերի Ընդըրվուղի գիւակն ընկած եր գերեզմանոցի
պատի տակին, բորբոսնած և անձանաչելի:
Գնացի ներս, վճարեցի գերեզմանափորին, վոր-
պեսղի փոս փորի ու թաղի սպիտակ սեամորթին:

ԳԵՐԾՌՈՒԴ

Գերարուղը ֆերմերի աղջիկ եր, կապույտ աչ-
քեր ուներ և վոսկեգույն մազեր, թեթև կարմրավուն
շրթներով, վազում եր Միջին Արևմուտքի ազատ գաշ-
տերում, նրա ձայնը կարկաչում եր ինչպես այդ գաշ-
տերի արծաթյա առուները, նրա կրծքերը դեռ նոր-
ուր ելին բարձրանում, բումբերը լցվում եյին, և
զեղձի նման, աննշան, անտեսանելի աղվամազով
ծածկվում:

Մի որ, յերբ Գերարուղը տուն վերադարձակ
դաշտից, իրենց բակում տեսավ մի յերիտասարդ, վոր
սափրված յերես ուներ, մազերը սանրած եր յետեից
գեղի ճակատը՝ զլխի ճաղատը ծածկելու համար, վոր-
պեսղի ճակատը՝ զագել, քիթը բարձր ման եր գալիս,
սորդի շորեր եր հազեր, քիթը բարձր ման եր գալիս,
նա ձեռքին՝ մտրակ: Յերբ Գերարուղը նրան նայեց, նա
ատամները բաց արեց, և յերեսի յերկու կողմերի վրա
յերկու առուներ կազմվեցին, վորոնք իջնում եյին
ներքե և բերանի յերկու ծայրերում կորչում:

Գերարուղն ինքնարերաբար բարեկց նրան, ծի-
ծաղեց բարձր և վաղեց ներս:

— Ո՞ւմ հետ եյիր ծիծաղում, — հարցը կց Գերարու-
ղին նրա հայրը:

— Վահվոքի հետ, բայց ինչ ծիծաղելի մարդ է:
— Ո՞վ, — ելի հարցը եց նայրը:

— Զեմ իմանում ով է, մեր բակում մի մարդ է
ման գալիս, — պատասխանեց Գերարուղը:

Հոր դեմքը կծկվեց, այծամորուսն սկսեց շարժվել: Գերտրուդի մայրն անմիջապես մոռեցալ իր ամուսուն:

— Սիրելիս, ինչու յես բարկանում, թող միքիչ սպասի և գնա, — ասաց:

— Ինչու պետք ե սպասի, յես նրան պատասխանել եմ, չեմ կարող:

— Կձանձրանա և կզնա:

Հայրը վեր կացավ, հրացանը պատից վար առավ և վայրկենաբար գուրս թռավ: Վաչ Գերտրուդը և վաշ ել մայրը չկարողացան նրան բռնել: Հայրը կանգ առավ պատշզամի վրա և դոչեց:

— Զենտլմեն, յեթե չգնաք, ձեզ կիսիմ:

Ճաղատ գլխով յերիտասարդը քմծիծաղով հեռացավ բակից: Հայրը ներս յեկավ և տեսավ, վոր իր կինը Գերտրուդի հետ ծնկի յեկած՝ աղոթում եր: Ֆերմերի պապերը կովել եյին հնդիկների և բնության տարերքի գեմ, բայց զգացվեց, նետեց հրացանը, մոտեցավ իր յերկու հարազատներին, փաթաթվեց նրանց վզերին և յերկար համբուրեց:

Յերկորդ որը Գերտրուդը հանդիպեց ճաղատ գլխով յերիտասարդին գյուղամիջում: Նա խոսում էր գյուղացիների հետ և բացատրում իր վաճառած ավտոմորիի առավելությունները: Յերբ յերիտասարդը տեսավ Գերտրուդին, նրա ատամերը նորից ցցվեցին: Այս անգամ յերիտասարդը գլուխ տվեց: Գերտրուդը չուզեց պատասխանել, հիշեց իր նոր զայրութը, հրացանը, մորը և իրենց հուսահատական աղոթքը, բայց յերիտասարդը կանգնեցրեց նրան:

— Ինչու հայրդ այդքան չարացել ե, — հարցրեց նա:

— Նա չի սիրում, յերբ մարդիկ նեղություն են պատճառում իրեն, — պատասխանեց Գերտրուդը:

— Յես ուզում եմ նրա սխալը հասկացնել մի ավտոմորիլ ահազին գործ կտեսնի:

— Բայց մենք փող չունենք, մի ձին ել բավական ե:

— Յես փող չեմ ուզում, թող առնի ավտոմորիլը, յերբ վոր կարող կլինի, այն ժամանակը թող վճարել:

Գերտրուդը զարմացավ, վոր իր հայրը չեր համաձայնվել այդ պայմանների հետ: Իսկույն վագեց տուն, հայտնեց ամեն ինչ իր մորը: Մայրն ել զարմացավ:

Յերեկոյան Գերտրուդը և մայրը պատմեցին ֆերմերին, վոր ավտոմորիլը կարելի յե գնել հեշտ պայմաններով, և նա զուր և այդքան բարկացել բարի վաճառականի վրա:

— Ինձ պայմաններ չի առաջարկել, — պատասխանեց ֆերմերը, յեթե այդպես ե, կզնեմ: յես իմանում եմ, վոր ավտոմորիլը մեծ շահ կբերի:

Գերտրուդը հորից գաղտնի, առավոտյան, գնաց, զտավ վաճառականին և շնորհակալություն հայտնելով ասաց, վոր զա և նորից տեսնի իր նորը:

Ֆերմերը ավտոմորիլը գնեց շատ հեշտ պայմաններով: Վաճառականը գնաց քաղաք և ուրիշ պատվերների հետ միասին ուղարկեց նաև ֆերմերի ավտոմորիլը:

Յերբ առաջին անգամ գաղունը լցրին, դարձրեցին պտուտակը, և ավտոմորիլն սկսեց խռիսալ և հեվաւ, Գերտրուդն իր սրտում ուրախության մի վլու-

դում զգաց, նա զգաց, վոր մինչեւ անգամ ուզում եւ լաց լինել, յերգել պարել: Ֆերմերն իր այծամբուսը յերեցրեց, մըթմթաց քթի տակ և զրկելով իր կնոջը՝ մըմնջաց.

— Զգում եմ, վոր քո մաղերը սեանում են:

Կինը չկարողացավ պատասխանել, նայեց Գերարուդին, ուզում եր ասել, վոր նա յէ այդ բոլոր ուշրախության պատճառը:

* *

Դեռևս հունձքը չեր քաղվել, յերբ ֆերմերին տարան գյուղի նոր կառուցված գերեզմանոցը և թաղեցին: Այդ գերեզմանոցի հինգերորդ հավիտենական բնակիչը գառավ ֆերմերը: Գերարուդը և մայրը մընացին մենակ ավտոմոբիլի հետ: Ճին վաղուց ծախել ելին:

Մայրն ուժգին փաթաթվեց Գերարուդին և ասաց:

— Ամեն ինչ կորցրի, դու մնացիր միայն:

Ֆերմերի մահից մի ամիս հետո Գերարուդինց բակում ելի հայտնվեց քաղաքի վաճառականը: Նա Գերարուդին հանդիպեց սանդուղքների վրա, խորը բարևեց: Գերարուդը փոխանակ նրա բարեին պատասխանելով՝ սկսեց լաց լինել:

— Ի՞նչ ե պատահել— հարցրեց քաղաքի վաճառականը և կիսադրկեց նրան:

Գերարուդը չպատասխանեց: Մայրը դուրս յեկավ և յերբ տեսավ քաղաքի վաճառականին, ինքն ել սկսեց լաց լինել: Գերարուդը և մայրը իրար փաթված լաց յեղան:

— Շատ եմ ցավում, — ասաց քաղաքի վաճառականը, զգալով, վոր ծերունի ֆերմերն այլիս չկա:

Արցունքներին հաջորդող յերկար լությունից հետո քաղաքի վաճառականը խզեց լությունը.

— Ծանր ե ինձ համար, բայց յես ել ֆերմայի ներկայացուցիչ եմ, պետք ե վճարեք առաջին վճարումը:

Մայրը աչքերը չուց Գերարուդի վրա, վորովնետև Գերարուդը հավատացրել եր մորը, վոր քաղաքի վաճառականն իրենց նեղը չի գցի:

— Հայրիկի մահվանից հետո, դուք գիտեք, վոր մեղ համար անկարելի յէ ճիշտ ժամանակին վճարել, մենք վստահ ենք, վոր դուք բարի յէք, — կմկմաց Գերարուդը և բոնեց քաղաքի վաճառականի ճեռքը:

Քաղաքի վաճառականն ատամերը բաց արավ ինչ-վոր մլավեց: Մայրը և Գերարուդը սրտատրով սպասում եյին:

— Ավելի լավ ե մեքենան յետ առնենք, քանի վոր չեք կարող վճարել, վոչինչ վճարած չեք լինի, այսքան ժամանակ ել ձրի գործածած յեղաք:

Գերարուդը գլուխը կախ արավ, նրա աչքի առաջից անցավ հոր դագաղը: Գերարուդի սիրտը հետեւ այդ դագաղին մինչեւ գլուզի նոր գերեզմանոցը, և աչքերը ելի լցվեցին արցունքով:

— Հայրիկը ձին ծախեց, յեթե մեքենան ել տանեք, ինչնվագ պետք ե աշխատենք, — հաղիվ արտասանեց Գերարուդը:

— Յիս կարծում եմ, վոր դուք պետք ե ձեռք քաշեք գլուղի տնտեսությունից, յերկուսդ ել կին եք, չեք կարող գլուխ տալ, դուք պետք ե փոխադրվեք

քաղաք, ծառայության մտնեք, յերկու հոգով շատ
հեշտ և քաղաքում ապլիկլ:

— Յես քաղաք չեմ դա, — անմիջապես պատաս-
խանեց մայրը:

Դերտուղը չլսեց մոր պատասխանը, նրա աչ-
քերը փայլեցին արցունքների միջից, փայլեցին ու-
րախության ցոլքերով:

— Յես կդամ քաղաք, կաշխատեմ և մայրիկին ել
կապրեցնեմ, մայրիկը թող մնա մեր տանը, — վճռակա-
նորեն ասաց Գերտուղը:

Հաջորդ առավոտ քաղաքի վաճառականը հան-
գուցյալ ֆերմերի ավտոմոբիլի վրա նստեցրեց Գեր-
տուղին և տարավ քաղաք:

Գերտուղի մայրը մնաց մենակ հին տանը ծե-
րունի ֆերմերի և Գերտուղի անմոռանալի հիշա-
տակներով շրջապատված:

* *

Գերտուղը հեռվից նշանակ ծխի ընդարձակ
մի տարածություն: Այդ տարածության միջից տեղ-
տեղ յերկում եյին բարձր շենքերի գաղաթները և
բարձրաբերձ ծխնելույզները: Որը պայծառ եր, աշնա-
նային դուրեկան արեով և կապույտ յերկնքով: Գեր-
տուղը զարմացավ, վոր արևոտ, ուրախ այս որվա
մեջ մշուշ և իջել դիմացի վիթխարի քաղաքի վրա, և
միաժամանակ հարցրեց.

— Զարմանալի, յերկինքը պայծառ ե, և մշուշ և
իջել:

Քաղաքի վաճառականն ատամները բաց արավ,
հեգորեն ծիծաղեց և թեթև կմշակով Գերտուղի
մեր թշերը, ասաց.

— Քաղաքի զործարանների ծուխն ե, դա մշուշ
չե:

— Այդ քաղաքը պետք և գնանք: — հարցրեց
Գերտուղը:

— Այն, այդ քաղաքը, Զիկապո:
Գերտուղի հոգին մռայլվեց, հիշեց կանաչ դաշ-
տերը և իրենց արևաշտ սենյակը:

Յերբ մատան վիթխարի քաղաքը, թեթև անձրի
սկսեց մաղվել: Ավտոմոբիլների, զնացքների, ապրան-
քատարների, կառքերի և միլիոնավոր բնակչության
յերթեեկության խուլ խլբացունի աղմուկն իջավ ծանր
յերկաթի նման Գերտուղի հոգու վրա: Ել չեր խո-
սում, նայում եր ապշած բազմություններին, ածուխով
սեացած մարդկանց գեմքերին, ավտոմոբիլների վրա
շնիկներ զըկած միլիոնատերերի կանանց, բարձր,
յերկնակարկառ շենքերին, ցերեկ ժամանակ բացվող
և փակվող միլիոնավոր լուսերին:

Գերտուղին զգաց, վոր կորսվում և քաղաքի
ժխորում:

— Յես ուզում եմ յետ գնալ — մրմնջաց Գեր-
տուղը:

Քաղաքի վաճառականը ծիծաղեց:

— Կոովորես, — ասաց կամաց, և տեսնելով, վոր
յերկու իրար կտրող փողոցի մեջտեղում կանգնած
ցավի մյուս փողոցը:

Քաղաքի վաճառականն ավտոմոբիլը կանգնեց-
րեց մի մեծ շենքի առաջ, վորի դռան վրա յերկու
նեգրեր մոմի աշտանակների նման կանգնած ելին:
Ներսից մի յերըորդ նեգր վագեց դուրս, մոտեցալ

ավտոմոբիլին, առավ Գերարուղի գյուղական պայուսակը և աճապարեց ներս, մինչդեռ քաղաքի վաճառականը Գերարուղի ձեռքից լուսած իջեցրեց նրան ներքեւ, և ներս մտան միասին:

Յերբ սենյակ բարձրացան, քաղաքի վաճառականը հեռախոսով կարգադրեց, վոր նոր շորեր բերեն 17 տարեկան միջահասակ մի աղջկա համար: Կես ժամից հետո Գերարուղի համար շորեր ստացվեցին: Գերարուղը ամաչեց հաղնվել, բայց քաղաքի վաճառականը համոզեց նրան, վոր պետք ե թողնի գյուղական սովորությունները՝ այսպիսի բաներ ամոթ չեն համարվում քաղաքում, գյոյություն ունի:

Գերարուղը կարմըելով հանեց իր գյուղացիական շորերը, հազար նոր շորերը և յերբ մեծ հայելու առաջ տեսավ իրեն, խորունկ ուրախություն զգաց, նման այն ուրախության, վոր իր հոգում ծաղկեց, յերբ առաջին անգամ ֆերմերի գնած ավտոմոբիլն իրենց բակում խոխոաց և հեաց:

Յերեկոյան քաղաքի վաճառականը նրան շլացուցիչ պատմություններ պատմեց, պատմեց, վոր Գերարուղը կհարստանա, առատորեն կողնի իր մորը, կապրի աղատ, անկաշկանդ, առանց հոգսի և չքավորության, Գերարուղը հրճվեց այդ պատմությունից, բայց մտածում եր, թե յերբ հնար կլինի մարդիկին փող ուղարկել ձմեռվա բոլոր պաշարի համար:

Կես զիշերն անց եր, յերբ նրանք վերադաշան հլուրանոց ջահաղարդ մի դահլիճում ընթրելուց և միքիչ խմելուց հետո, Գերարուղը հոգնած եր յերկար

ճանապարհից, քաղաքի ժխորից ու տպավորություններից և ուղեց քնիլ: Քաղաքի վաճառականը չհեռացավ, և մեծ յեղբոր» նման Գերարուղի շորերը հանեց և պառկեցրեց նրան փափուկ մահակալի վրա: Գերարուղը լայնորեն հրճվեց այդ բոլորից, նրան թվաց, վոր յերազումն է: Դեռևս բոլորովին չեր քնիլ, աշքերը հեշտավետ կերպով փակլում ելին և բացվում, յերբ զգաց, վոր մի տաք շունչ մոտեցավ իր շրթներին ու համբուրեց իրեն: Գերարուղը ցնցվեց, աչքերը խոշոր բաց արեց և ահաբեկված նայեց քաղաքի վաճառականին:

— Քնեցե՞ք, քնեցե՞ք:

Գերարուղն ելի փակեց աչքերը: Այս անգամ քաղաքի վաճառականը կիսաբաց արավ նրա վերմակը և գրկեց նրան. Գերարուղը չդիմադրեց:

* *

Առավոտյան Գերարուղը խնդրեց քաղաքի վաճառականից, վոր իր համար մի գործ ճարի:

— Իսկույն եթ, — պատասխանեց քաղաքի վաճառականը և նրան տարավ Զիկագոյի Ավտո ընկի լության գրասենյակը, վորի ագենտն եր ինքը՝ վաճառականը և կարգադրեց, վոր շաբաթական 6 դոլլարով նրան մի գործ տան: Կեւորին Գերարուղն սկսեց աշխատել: Նրա գործն եր ընդարձակ գրասենյակում նմուշի համար գրված ավտոմոբիլների փոշին մաքրել, լուսամուտները սրբել, սեղանները, տթուները փայլեցնել, շենքի առաջի մարմարյա տրոտորալը մաքրել որեկան միքանի անդամ:

Գերարուղը միքանի որ ել մնաց հյուրանոցում քաղաքի վաճառականի ընկերակցությամբ և փոխա-

գրվեց քաղաքամիջում գտնված մի սենյակ, շաբաթական յերկու դոլլար վարձով։ Քաղաքի վաճառականը նրան 25 դոլլար տվեց մորն ուղարկելու համար։ Գերտրուդը ուղարկեց եր, վոր կարողացավ մայրիկին անմիջապես ոդնել և մի գործ ունենալ և ապրել։

Որերն անցնում եյին: Գերտըռողն աշխատում կը յոթն անգամ ավելի, բան իր հոր տանը և մտածում եր, վոր քաղաքի աշխատանքի կիսովը կարող եյին նրանք՝ ինը և իր պարավը, ապրել հանգիստ և լիովանել:

Որերն անցնում ելին, և Գերարուդն զգում եր կենդանի շարժում իր կրծքի տակ և զող՝ իր հոգում: Քաղաքի վաճառականը չեր յերկում, ուզում եր հայտնել նրան:

— Նա անպայման ամեն բան կկարգադրի, այս-քան բարի չե, — մտածում եր Գելաբուղը, բայց նա քա-ղաքում չեր:

Մի որ դիմեց զբասենյակի կառավարչին և խընդ-
րեց նրանից իրեն ագենտի հասցեն տալ: Կառավարիչը
չուր-չոր պատասխանեց.

— Նա մեղանից հեռացել ե, հասցեն չենք իմա-
նում:

Այդ յերեկո Գելաբուղը գնաց իր անշուք սե-
նյակը, գըկեց իր ծնողների լուսանկարը, համբուրեց
և արցունքներով ամբողջովին թրցեց:

Ոլերն անցնում եյին: Մոտենում եյին ծննդաբերության որերը: Կապույտ աչքերով, վոսկեգույն մազերով այս աղջիկը փակվեց իր սենյակում, քաղցած և ծարավ, չուղեց գուշակ ու ուղարկում գալ ուռած փորով և անսամբուսին: Տանտիքուհին միքանի որ խղճաց, կոփե և հաց տվեց, բայց հետո նա յել չերեաց:

Գեղարվուղը հուսահատված հիշեց, վոր իլրենց
կյուղի քարոզիչն ասում էր. «Յեթե հոգնած եք, աղքատ
եք, անողնական, դիմեցեք Քրիստոսին, և նա կիբեկի
ձեղ»:

Գերտըռուդն ուրախացավ, վոր գաղավ փրկութիւն
յելքը: Նա դիմեց քաղաքի միսիոնարական ընկերու-
թյան, վորպեսզի նրան ոգնեն մինչև յերեխան ծնվի,
և մի գործ գտնի ապրելու: Գերտըռուդն անկեղծորեն
պատմեց, թե ինչպես անզութ կերպով խաբել եցին իրեն:
Ընդունող պատվելին ակնոցի տակից նայեց նրան,
յերկար քմծիծաղեց և պատասխանեց.

— զենք կարող է լինել առաջարկ այս գործության համար:

— Աւընդի սուտ եր գյուղի քարոզչի ասած՝
մտածեց Գերարդովը և զզվանքով հեռացավ:

— Տան տիրուհիդ ասաց, վոր նեղութիւն սեչ սու.
իս քիս կառող եմ ոգնել, — ասաց կինը:

— Ծնոլիսկալեմ, — մը մնջաց փերտը ուղեւ:

Առանց պայմանների, առանց սակարկության
սկզբ հագած կինը դըեց նրան ավտոմոբիլի մեջ և փո-
խադրեց ծննդաբերական հիվանդանոց։ Ճանապարհին

կինը Գերաբուզին տարորինակ կերպով նայում եր,
զննում, ինչպես դնորդն ալլահնքն և զննում: Գեր-
աբուզը վոչինչ չհասկացավ. նա միայն հավատաց,
վոր գաֆան, ցուրտ, ծխոտ, յեսասեր և անբարոյական
քաղաքում դեռ չի մեռել մարդասիրությունը:

Գերաբուղը ծնեց, իր նորածին մահուկը նման եր իրեն, Կա կապույտ աչքեր ուներ և վոսկեղուն մազեր:

* * *

Աւեր հագած կինը վեց ամիս հետո պահանջեց
Գերտըռուղից իր արածների համար վճարել։ Գերտըռու-
դը ապշեց։

— Յես չեմ լսնդրել ձեղանից վորեե բան, — սկսած լսանեց զերտը ուղար:

— Այս, ճիշտ ե, չես իւնդըն, բայց բարոգապես պարտական ես ինձ:

— Ի՞նչ կարող եմ անել, — հարցվեց միամտութեան գլուղացի աղջիկը:

Կինը նրան տարավ իր «տուն»-ը, ծանոթացրեց
նրան իր մյուս «աղջիկ»-ներին: Աղջիկները կիսամերկ
ելին, շպարված յերեսներով, կարմիր ներկած շրթնե-
րով: Կինը թերաբուժին թողից մենակ այդ աղջիկների
հետ և հեռացավ: Աղջիկները նրան պատճեցին, վոր
որական 10 դոլար են աշխատում, և աշխատանքն ել
հեշտ է, միայն միքանի հաճախորդ են ընդունում,
ոգնում են իրենց ծնողներին, լավ են ապրում, հա-
րուստ մարդկանց հետ պտույտի յին գնում, նրանց
հետ զիշերում, փող ստանում և զվարճանում:

Գերտըռուզը չպատասխանեց: Նրա տիսուր աչքերն
ավելի մոայլվեցին, ինչպես ամպամած յերկնքից

Հետո անձրես և սկսում մաղվել: Լոեց լերկար: Իր հոգու մոռավության մեջ սպիտակ վարդերի նման փայլեցին իր արծաթյա մազելով մայրը և կապուտ աչքերով ու գոսկի հգույն մազերով իր մանկիկը, վորոնք կարող էին անհետ կորչել, յեթե ինքը լեսասիրաբար համասեր գոհել իրեն:

Գերարուղը դայակին հանձնեց իր կապույտ աչքեց
ըսպ և վոսկեգույն մազերով յերեխային և փոխադրվեց
սևեր հագած «բալի» կնոջ «տունը» և սկսեց յեռան-
գուն կերպով հաճախորդները ընդունել տոկոսների հա-
մար: Խայտաբղետ ելին հաճախորդները, ծեր, կեղտոտ
մորուքներով, հարբած, յերիտասարդ, չար, դաժան և
լկտի: Հանրատան բոլոր մյուս աղջիկները նախանձե-
ցին նրան, վորովհետև հաճախորդները բոլորն ել Գեր-
տրուդին ելին ձգտում, նա ջահել եր, կապույտ աչքե-
րով, վոսկեգույն մազեցով, նրա աշքերի անսեղությունը,
մարմնի առողջ հոտը, մայթ պատշաճ ուռուցքները մզում
ելին բոլորին դեպի նրան: Ամբողջ գիշերը խմում եր
պարում, մարմնի հազար և մեկ գալարումներով զվարճաց-
նում իր տոկոսները վճարող հերոսներին: Յերբ հար-
բում եր Գերարուղը և այլևս չեր կարող հաճախորդ-
ների թիվը միտք պահել սևեր հագած բարերար կինը
վոչ մի տոկոս չեր վճարում նրան: Գերարուղն ուրախ
եր, վոր առատ փող եր հասցնում իր պառակ մորը,
վոր ապրում եր գտուղի հին տանը ծերունի ֆիքմերի
հիշատակով, և իր փոքրիկ մանկիկին: Յերբ Գերարուղը
յերբեմն ապատվում եր հաճախորդներից, վագում եր
տեսնելու իր փոքրիկ մանկիկին: Նրան տեսնելին ու-

լախություն եր և աղեխարշ տանջանք, վորովհետեւ զսպում եր իրեն՝ չհամբուրելու անմեղ մանկիկին, չըհամբուրելու, վորպեսզի հազար ու մի կեղտու բերանների հպած իր շըթները չքսվեցին անմեղ մանկիկի մարմնին:

Գերտրուդը հանրատան մեջ դարձավ կեղծավոր, շողոքորթ, նա շպարեց իր գեղջկուհու պայծառ հոգին ինչպես եմալե մի աման:

Յերբ Փրկության Բանակի աղջիկները գալիս ելին հանրատուն քրիստոնեյության համար սուրբ գիրք, վոսկեղոծ հոգևոր յերգաբան և կրօնական բրոշուրներ ցրվելու, մեկմեկ նա առնում եր դրանցից, միքանի տող կարգում և շպրտում մեկ կողմ:

Մի որ նրա մոտ յեկավ մի մարդ, վոր կարճ ու սրածար մորուք ուներ, աճապարում եր, ուզում եր շուտ դուրս գալ Յերբ Գերտրուդը նրան առաջարկեց խմել (Գերտրուդը ծախված խմելիքից տոկոս եր ստանում), նա մերժեց: «Խմելիքի փողը չեն քեզ կտամ», ասաց սրածար մորուքով հաճախորդը: Գերտրուդն ուրախացավ: Յերբ սրածար մորուքով մարդու գեմքը կուցավ Գերտրուդի կրծքին, նրա պիշտակի տակից կաթոլիկ կղերականի սուրբ վոսկի խաչը: Գերտրուդն ապշեց:

Մի զարմանար, զավակս, — ասաց կաթոլիկ հայրը, — մենք ել մարդ ենք, բոլորի նման:

Այն ժամանակ Գերտրուդը հասկացավ, թե ինչու խմելիքի փողն ուղեց վճարել միայն թե շուտով հաճոյանալ ու դուրս գալ:

* * *

Անցան տարիներ: Գերտրուդի մայրը մեսով հին տանը: Նա չցանկացավ գնալ վորպեսզի դիակին չը-

համբուրի, անազարտ պահելու համար այն վերջին համբուրը, վոր դյուզացի պառավը դրոշմել եր նրա շրթներին: Քիչ անց մեռավ Գերտրուդի կապուտ աշշերով և վասկեղույն մազերով մանկիկը, վոր մեծաքերով և բայց հիվանդ եր, գծուցուն և նիհար: Գերտրուդը ցել եր, բայց հիվանդ եր, գծուցուն և նիհար: Գերտրուդը կորցրեց իր մարմնի բոլոր փառքը, ուսուցքները ու քեցցին, յերեսներն ակսոներ պատեցին, ատամները թացին, յերեսներն ակսոներ պատեցին, ատամները թացին, յերեսներն ակսոները պոչ առաջվա չափն ունեները նվազեցին, տոկոսները վոչ առաջվա չափն յին և վոչ ել առատությունը: Հանրատան կինը, այն յին և վոչ ել առատությունը: Հանրատան կինը, վոր նրան «Գրկել եր» աղքատությունից, առաջարկեց հեռանալ տնից:

Սրանից հետո հանգիստ ապրելու համար միայն մի միջոց կա, աղջիկս, — ասաց հանրատան կինը նրան, — վերաբեր միսսիոնարական ընկերության, նրանք քեզ Արեգիմիս միսսիոնարական ընկերության, նրանք քեզ կըարողես և վելք կուղարկեն, այսաեղ տիրոջ խոսքը կըարողես և կապը յերջանիկ: Հիսուս Քրիստոս քեզ կների, կըապը յերջանիկ: Հիսուս Քրիստոս քեզ կների, վորոնք զարձի յին ների նա բոլոր մոլորվածներին, վորոնք զարձի յին գալիս և յերկնքի համար են ծառայում:

Գերտրուդը հիշեց իր հին դիմումը, բայց ուղեց փորձել Միքանի որ հետո հանրատան յերկու ընկերունիների հետ, մի-մի վոսկեղոծ ու զիրք և հոգևոր յերգան ձեռքներին՝ դիմեցին միսսիոնարական ընկերության ծառայությամբ համար:

Գերտրուդն արտակարգ անկեղծությամբ անկետացրեց, արցունքոտ աչքերով, մոռաված դևմքով և գողուն ձեռքերով:

Գերտրուդը կորցրել եր իր մարմնի փառքը և հարկավոր եր քրիստոնեյության համար:

Ընկերության նախագահությունը քննեց նրանց
անկետաները և ուղարկեց Գերտրուդին Զինաստան՝
տիրոջ խոսքը տարածելու չին կուլիներին, մյուս յեր-
կուսին ել՝ դեպի Փոքր Ասիայի հայ քրիստոնյա մոլոր-
վածներին քրիստոնելության գերկը դարձնելու նպա-
տակով, առանց անդրազառնալու իրենց յերկրի միլի -
նավոր «մոլորվածների» մասին, այն յերկրի, վորն
ունի ամբողջ աշխարհի վոսկու 62 տոկոսը:

թ Ա Ա

I

Թոմը մեզ մոտ յեկավ Միացյալ Նահանգների
հարավային քաղաքներից: Նա լսել եր, վոր հյուսի-
սում մարդկակ ավելի սառն են, բայց ավելի բարյացա-
կամ դեպի «գունավոր» մարդիկ:

Հյուսիսում առաջին որն իոկ նա ընկավ մեր
միջավայրը: Մենք ոտարականներ եյինք, մեր մեջ չեր
վառվում դեպի սեամորթներն ամերիկյան սպիտակնե-
րի ատելության հուրը:

Մենք Թոմին ընդունեցինք յեղբայրաբար: Նա
ծառայող դարձավ արևելյան գորգի մեր վաճառատան
մեջ, ուր մենք ել ծառայողներ և բանվորներ ելինք:
Յերբ առաջին որը Թոմին հարցըինք հարավից հա-
զար ու մի նեղություններով դեպի հյուսիս փախչելու
պատճառները, նա չասաց: Թոմը դեռևս կասկածում
եր մեր մասին: Նա կարծում եր, վոր արևելյան սպի-
տակամորթն ել կունենա վորոշ նախալաշարումներ
դեպի նեղը:

Սկզբում մենք հեգնությամբ վերաբերվեցինք
Թոմի կասկածներին: Թողեցինք, վոր ժամանակը պար-
զի մերներքին զգացումների գեմքը, և Թոմին իսկապես
մեզ ընդունի իրեն իր յեղբայրները:

Մի որ յիս նրան ասացի.

— Թոմ, լավ լսիր ինձ, միթե դու կարծում ես,
վոր յիս և դու տարբեր ենք իրարից:

— Այս, կարծում եմ, — պատասխանեց Թոմը:
 — Ինչո՞ւ, ի՞նչ տարբերություն կա:
 Թոմը ծիծաղեց: Նա կարծեց, վոր յես նրան ձեռք
 եմ առնում: Նրա ծիծաղի ներքին իմաստն այդ եր:
 — Ասա, ինչո՞ւ:
 — Պարզ ե, գու սպիտակ ես, իսկ յես՝ ուե:
 Այս անգամ յես ծիծաղեցի:
 — Չե՞ վոր յես և գու միենույն աշխատանքն
 ենք կտարում այս գորդի վաճառատան մեջ, չե՞ վոր
 միենույն փոշին ենք կուլ տալիս, միենույն ծանրու-
 թյամբ գորդեր ենք շալակում, միենույն մութ նկու-
 ղում գորդ ենք լվանում և միենույն ոռձիկն ենք ստա-
 նում: Աշխատանքից ստացած վարձարությունն ե,
 վոր մեզ դարձնում ե միենույն դասակարգի մարդը,
 իմ սպիտակ մորթն ինձ վոչ մի առավելություն չի
 տալիս:

Թոմի աչքերը փայլատակեցին: Նա զգաց, վոր
 չեր կարող խուսափել իմ խոսքերից, բայց նա պա-
 տասխանեց.

— Հարավում այդպես չե, հարավում սպիտակ
 գույնը մարդուն դարձնում ե աղնվական, առանձնա-
 շնորհյալ, սպիտակ գույնը մինչեւ անգամ մարդուն խե-
 լոք ե դարձնում:

— Ճիշտ ե, հարավում այդպես ե, բայց հարա-
 վի այդ սպիտակները, վորոնք աշխատում են ուրիշ-
 ների համար, պիտի գիտակցեն մի որ:

Թոմը կամաց-կամաց խորագույն վստահությամբ
 լցվեց գեղի ինձ և իմ ընկերները: Մենք նրան հա-
 ճախ տանում ելինք դասախոսությունների: Վորովհե-
 տե նա միշտ մերժում եր գալ մեզ ետք սպիտակների

թատրոնը, մենք ելինք գնում նեղրերի թատրոնն իր
 հետ:

— Թոմ, — մի որ դիմեցի նրան, — զու մեզ չպատ-
 մեցիր, թե ինչու հարավից փախար գեղի հյուսիս:

— Այժմ կպատմեմ, — ստաց Թոմը և հայտնից,
 վոր նա հարավից փախել եր լինչի դատաստա-
 նից խուսափելու համար: Հարավցի սպիտակամորթ-
 ներն ամբաստանել ելին նրան, վոր սիրահարվել և
 սպիտակ աղջկա վրա: Հարավցի սպիտակամորթները
 վորոշել ելին նրան լինչի դատաստանի լինթարկել:

— Դու սիրում ոյիլ սպիտակամորթ աղջկան, —
 հարցը թոմին:

— Այն, սիրում եյի, բայց իս այդ աղջկա հետ
 շեյի խոսել անգամ, միայն ամեն որ կանգնում ելի փո-
 ղոցի վերևը, վորպեսզի յերբ աղջիկն անցնի, տեսնեմ:
 Այս եր իմ բոլոր սերը, սպիտակամորթները նշմարել
 ելին և վորոշել ելին ինձ հողոտել: Ուրախ եմ, վոր
 չեկա հյուսիս, հանգիպեցի ձեզ, — վերջացրեց Թոմը:

— Ինչո՞ւ մեզ այնքան հավանում ես, — հարցը ի:
 — Զգիտեմ, կարծես դուք ել սկ եք, կամ կար-

ծես ձեր մեջ յես ել եմ սպիտակ:

— Այն, մենք կամ սկ ենք կամ սպիտակ բոլորս
 միասին, մենք սոցիալական սիենույն շերան ենք
 կաղմում, մարդկունց մեջ տարբերություն գնողը մոր-
 թը չե, ալ...

— Ցես ձեզ հասկանում եմ, — պատասխանեց Թո-
 մը և չթողեց, վոր շարունակեմ:

Բայց Թոմի մեջ կար մի միտք, վոր արմատա-
 ցած եր մինչեւ նրա հոգու խորքը: Նա միշտ կըրկ-
 նում եր.

— Քո բոլոր ասածները ճիշտ են, բայց մի բան չառ սխալ է:

— Վժը և այդ:

— Այն, վոր ասում ես, թե մարդասիրություն չկա, ամեն բան տնտեսական լերեռյթների արդյունք է. բայց կա մարդասիրություն, մարդասիրությունը տընտեսական լերեռյթների հետ կապ չունի:

Յես հեգնորեն ծիծաղեցի:

Թոմը զայրացավ: Իմ բերած բոլոր որինակների դեմ նա հանդիսավոր կերպով հայտարարեց.

— Ապա լինքընը, միթե լինքընը մարդասեր չեր:

— Դու մատնանշեցիր մի անուն, վորով կարեւի յե պարզաբանել ամեն բան:

Թոմը քիչ մնաց իրեն կորցներ—լինքընը և վոչ մարդասեր—վորուե սեամորթ կարող եր խելագարվել:

Յես նրան անմիջապես հանգստացրի:

— Լինքընը միծ մարդ՝ ե, և ամբողջ մարդկությունը լիրախտապարտությամբ պետք է հիշի նրա անունը, բայց պաղարյաւնությունդ չպետք է կորցընես, վորպեսզի ամեն ինչ հասկանաս:

Յես թոմին տվի մի փոքրիկ բրոշյուր և ինորեցի նրան ուշի-ուշով կարդալ այն և հետո լսել ինձ:

— Շատ լավ, կկարդամ:

Այդ գիրքը թվում եր Միացյալ Նահանգների քաղաքացիական պատերազմի պատճառները:

Յերբ թոմը գիրքը վերջացրեց և յետ բերեց, յիս ասացի նրան.

— Տեսնում ես, լինքընը միծ մարդ լինելուց չի դադարում, բայց սեհրի պատագրության պատճառ-

ները տնտեսական են, սևերը տնտեսական պատճաներով են ազատագրվել և վոչ թե մարդասիրական պատճառներով:

— Ճիշտ ե, ճիշտ ե, — պատասխանեց թոմը:

II

Թոմը կամաց-կամաց խորացավ սոցիալական գիտությունների ամբողջ պաշարը գործադրում եր մի բանի հաստատման: Եղանակը լինչու յես իրավունք չունենամ սիրելու մի սպիտակ և աղքատ աղջկա:

Բայց թոմն իր սոցիալական գիտությունների ամբողջ պաշարը գործադրում եր մի բանի հաստատման:

— Ուրեմն ինչու յես իրավունք չունենամ սիրելու մի սպիտակ և աղքատ աղջկա:

— Իհարկե իրավունք ունես, — յես հայտարարում եմ անկեղծորեն:

— Ապա ինչու, ինչու... — Թոմը չեր կարող շարունակել հուզվում եր և լաց լինում: Արցունքի կարունակել գլորվում եին նրա սե և փայլուն այտերի վրայից:

— Նա սիրելում եր քեզ:

— Ի՞նչ իմանամ, յես նրա հետ չեմ խոսել, յես նրան միայն տեսնում եյի:

Տիրում եր լուսություն:

Յես խղճում եմ այս յերիտասարդ՝ սեամորթին, վորի սպիտակ եր, կարծես հաց լիներ: Մի անգամ, յերբ պես սպիտակ եր, կարծես հաց լիներ:

— Գիտես, — ասում եր թոմը, — նրա մարմինն այնպես սպիտակ եր, կարծես հաց լիներ: Մի անգամ, յերբ նա ունիսերսալ խանութում դնումներ եր անում, յես

մոտեցան նրան, այնքան մոտ ելի էս նրան, այնքան
մոտ, վոր հոգիս ճնճղուկի պես թոշկոտում եր: Նրա
մարմինի բուրումը նման եր նոր լողացած մանկան
մարմինի բուրումին: Նա մի անգամ ինձ նայեց, յես
կորսվեցի նրա աչքերի ովկիանում:

— Թոմ, — ասացի նրան, — մոռացիր այդ բուրոր:

— Յեթե իրականություն լիներ, կարող ելի մ..
ուանալ, բայց այդ բուրորը յերազ և չեմ կարող մո-
ուանալ. լեռաղնավելի յե հզոր, քան իրականությունը

III

Հուսիսում թոմը հետզհետե ձեռք բերեց արժա-
նապատճեթյան զգացում: Հարավում նրա մարդող
սոցիալական պահանջն և յեղել այն, վոր մարդիկ փի-
զիկական ցավ չպատճառեն իրեն, մնացած բուրոր ցա-
վերը, վիրավորանքները արժեքից զարկ են յեղել:

— Բավական եր, վոր չծեծելին և կախ չտային
ծառից, — ասում եր թոմը, մնացած բուրոր հայնոյանք-
ներն ինչ արժելին...

Բայց թոմը հետզհետե զգաց, վոր մարդկային ի-
րավունքն ավելի անսահման եր, քան ինքը և իր յեղը
հարավում հավատացել ելին:

Թոմը կասուցեց արժանապատճեթյան խոր զգա-
ցում, այդ խնդրում նա ավելի զգալուն դարձավ, քան
մենք, սպիտակամորթներս: Թոմն սկսեց ապրել հզոր,
բոցավոտ մի սեակցիա, ամենափոքրիկ անուշագրու-
թյուն դեպի իր անձը նրան լցնում եր ցասումով, զա-
զանացած փալիում ելին նրա աչքերը: Նա չափա-
ղանց զգուշ եր նաև այն բանից, վոր մինի թե մի
վորովհանել

— Ճեղնուածեղը կտոր-կտոր կանեմ, — ասում եր նա:
Յես հրձվանքով դիտում ելի, վոր թոմը կորցը-
նում եր իր ցեղային ստրկության ավանդական ըս-
պիները:

Թոմը միաժամանակ չափազանց հարգալից եր
գեպի իր ընկերակիցները, վորովհետեւ նա համոզվեց,
վոր իրենց փրկությունը պիտի լիներ սոցիալական
հողի վրա:

Թոմը նախ և առաջ թողեց սկսերի հատուկ պար-
գևներ ստանալու սովորությունը:

IV

Մի որ, յերբ գորգի վաճառատան սպիտակա-
մորթ գանձապահը թոմին ոռճիկ եղ տալիս, 5 սեն-
տի մասն չլինելու պատճառով գանձապահն առաց.

— Այդ 5 սենտը քեզ:

Թոմի աչքերը փայլատակեցին. նա նայեց գան-
ձապահի աչքերին և ատամներով կծեց շրթունքները:
Գանձապահը վոչինչ չհասկացավ:

— Քեզ թող լինի, մեծ վող չե:

Մեծ փող չեր, բայց նեզրին 5 սենտ տալու
սպիտակամորթ գանձապահի բավականությունը կըտ-
րատում եր նեզրին ելեկտրական հոսանքի նման:

— Վոչ մի սենտ չեմ ընդունի իբրև պարզե, — ա-
սաց թոմը և լոեց:

Աչք լուսթյան մեջ զայրացած մի գաղան եր
շղթայված:

Յես անմիջապես գրանցանիցի 5 սենտ և
ավելի թոմին:

— Տաւր գանձապահին, — ասացի, — դու հետո ինձ
կտաս:

Թոմը 5 սենտը հանձնեց կանձապահին և հեռացավ:

Գանձապահը, վոր գորգավաճառի լակեյն եր, սուր-սուր նայեց ինձ և զոռաց:

— Կոմաց-կամաց լրբացնում եք այդ կեղտուս նեղին:

— Իհարկե, քեզ դուք չե գա, վոր մարդիկ արժանապատվություն ունենան:

— Արժանապատվությունս վժըն ե, ավելի 5 սենտն աչք կծակի:

— Եյն, կծակի, ավելի լավ ե դու մտածես, թե ինչպես պետք ե անել վոր բոլորս ել ստանանք այն, ինչ արտադրում ենք, և վոչ թե 5 սենտ ավել տաս իբրև վողորմություն:

Տիրեց լսություն: Յես զգացի, վոր զանձապահի համար շատ խրթին հարց ելի հարուցիլ: Նո մեքենա-ի վրա սկսեց գումարութեար անել, իսկ յես դուրս յե-կա փողոց:

Լույսերը վառվում ելին յերկար, լայն, հարուստ և ցոփակյաց փողոցում: Յես մի սլունի տակ կանգ-նած՝ միաք ելի անուս, յերբ մի աղջիկ մոտեցավ ինձ, ժպաց և կանգնեց: Նայեցի յես նրա աչքերին և հաս-կացա նրան:

— Ժամանակ չունեմ, — ասացի:

— Տրամությունը լավ բան չե, — պատասխանեց աղջիկը:

Յերեսս շուռ տվի: Նո հայհուեց ինձ և կորսվեց ցոփակյաց փողոցում:

Դեռևս յերկու քայլ չելի արել, յերբ Թոմը դեմս ցցվեց:

— Բերի քո 5 սենտը, — ասաց:

Փողն առնելուց հետո առաջարկեցի Թոմին դնալ և դարեջուր խմել:

— Գնանք, — համաձայնից Թոմը:

Մենք մտանք մոտակա զինետունը:

— Յերկու գարեջուր, — ասացի մատուցողին:

Մատուցողը բերեց միայն մի բաժակ գարեջուր և դրեց իմ առաջը:

— Յես յերկու բաժակ խնդրեցի, — ասացի մա-տուցողին:

— Մենք սեամորթին չենք ծառալի, — պատասխա-նեց մատուցողը և հեռացավ:

Թոմը ժամանակ չտվեց ինձ, վոր մի բան անելի, անմիջապես աճապարեց մատուցողի յետնից:

— Պարզն, — ասաց Թոմը: Պուք ինձ՝ անպատ-վեցիք:

— Հենց ուզում եյի անպատվել, — պատասխանեց մատուցողն ամենացինիկ տոնով:

— Համեցեք փողոց, — առաջարկեց Թոմը:

Այլևս ուշ եր միջամտել: Թոմի աչքերը փայլում եյին ինչպես մութի միջից պրոֆեկտորին նայող գա-զանի աչքեր:

— Յես քեզ հետ չեմ զիջանի կովել, — պատաս-խանեց մատուցողը և սկսեց գոռալ «ոզնություն»: Դի-նետան սպիտակամորթները հավաքվեցին: Թոմը բո-լորին բացատրեց, թե ինչ և պատահել: Սպիտակները լուցին: Վոչվոք չարտահայտվեց: Ներսից լեկավ գի-նետան տերը և հրամայեց Թոմին դուրս գալ գինե-տնից: Թոմը մերժեց դուրս գալ և ելի առաջարկեց մատուցողին փողոց գալ մենամարտելու: Գինետան

տերը հալհոյեց թոմին: Թոմին արձակեց իր զալրութիւնի աները և դուրս քաշեց գրպանից իր ածելին: Յերբ թոմին ածելին դուրս քաշեց, սպիտակները բոլորն ել քաշվեցին: Թոմը կանգնած եր դինետան մեջտեղը, փայլատակում ելին յերկու բան—նրա զայրացած աշքերը և ածելին: Մասուցողը փորձեց փախչել բայց թոմը նետեց ածելին նրա վզին, արյունը վողողեց նրա սպիտակ բլուզը: Յերբ սպիտակներն առան գետին ընկած թոմի ածելին, թոմը գրպանից մի ուրիշը դուրս բերեց և սպառնաց շպրտել վորևե մեկի յերեսին: Սպիտակներից մեկը մոտեցավ տելեֆոնին, թոմը հարձակվեց, քաշեց տելեֆոնի թելը և կտրեց, և ածելին ձեռքը՝ կտմաց-կամաց նահանջեց գեպի դուռը և կորսվեց բազմամարդ փողոցում.

Բոլորը մոտեցան ինձ և նրա հասցեն հարցրին: — Զգիտեմ,—ասացի յես, — նրան սպատահարար հանդիպեցի վողոցում:

ԳՐՈՂԻ

Ուոլտը Գրողըին ամերիկան համալսարանում թե իմ ընկերն եր, թե դասընկերը: Յերկուսս ել աման ելինք լվանում համալսարանին կից ձաշարանում՝ որական յերեք անգամ ճաշ և շաբաթը ութ դոլար ստանալու համար: Յես կաել եյի իմ դասերին և ամանին, ծախսում եյ՛ իմ ստանալիքը ամենասպարզուել ձեռվ, վորպեսզի ունեցած վեց դոլարի պարտքը չափելանա, վորովհետեւ ահա տասն ամիսը անցնում եր, և յես չելի կարող այդ պարտքս վճարել:

Յես և Ուոլտը Գրողըին պատմության և փելիք սովորության ֆակուլտետի ուսանողներ եյինք, և դուստիթ եր տալիս Գրողըուն ինքն իրեն յենթարկելու կծու ծաղրի:

— Բավական չե մեր քաղցածությունը, — ասում եր նա, — վիլխոսովիայություն ենք ուսանում: Ի՞նչ ուգուս, յեթե միքանի տարուց ստանանք «պսակալոր փիլիսոփայության» կամ մինչեւ անգամ «գոկտոր փիլիսոփայության» արտղոս: ավելի քաղցած պիտի մնանք, դրա վրա ավելացած և հոգեսր քաղցածությունը «փիլիսոփա» դառնալուց հետո:

Յես չեյի զարմանում, վոր 19 տարեկան մի պատանի այդքան զործնական ըմբռնում ուներ կցանքի մասին, վորովհետեւ նա ամերիկացի յեր: Ամերիկացին լեթե գործնական չե, տուաքինի չի համարվում. մինչեւ

անգամ Միջին Ասիայում քըխստոնելություն քարոզող ամերիկացի «իդեալիստ» միսսիոնարը գործնական նպատակներ և հետապնդում առավելապես:

— Ե՞ն, — պատասխանում եյի յես Գրողը, — ավելի լավ ե աման լվանալ և ապրել հոգեոր կանքով:

— Աման լվանման դա մարդու գործ չե, անասունի գործ ե, պետք ե փող ունենալ և ազատվել աման լվալուց, — պատասխանում եր Գրողը իշխացած:

Յես գարմանում եյի, թե վ՞որ անասունն եր, վոր պիտի ցանկանար կամ կարողանար աման լվալ ամանն իսկապես մարդը պետք ե լվար, և այսպիսով միիթարվում եյի:

Գործնականության տեսակետից յես միայն մտածում եիի իմ վեց դոլլարի պարտքի մասին և ուրիշ վոչինչ, ինձ միայն հետաքրքրում եին դոկտոր Մընրոյի դասախոսությունները հունական փիլիսոփայության զանազան դպրոցների մասին։ Յերբ դուրս եինք դավալիս դրկառը Մընրոյի Սոկրատի մասին կարողացած դասախոսությունից, պատմում եյի Գրողը, վոր յես աչքերովս տեսել եմ Ակրոպոլիսը և Սոկրատի բանտքարայրը։

Գրողը ապշելով բացականչում եր.

— Ի՞նչ տգետ եմ յես։ Յեվ դու դեռևս ասում եօ, վոր փողը հարկավոր չե. պետք եմեծ փող աշխատել և տեսնել արդ բոլորը։

— Վեց դոլլարից ավելի չեմ ուգում. վեց դոլլար լիներ, ավելին քեզ կտայի, — պատասխանում եյի Գրողը:

Գրողը ծիծագում եր իմ վրա, վոր յես միայն

վեց դոլլարով կարող եյի լերջանիկ լինել, բայց յես հաստատ համոզված եյի, վոր նա ժպտալով կառներ, յեթե նրան վեց դոլլար տար մեկը։

Մի որ Գրողը աման լվալու ժամանակ մոտենալով ինձ՝ առաջ:

— Թռ, մի միլիոն դոլլար աշխատելու ճանապարհը գտել եմ։

Ուոլտը Գրողը կատակ անել չեր իմանում, նրա բոլոր խոսքերը լուրջ ելին և ծանրորեն կշռված, զրա համար յես իսկ լրջացա:

— Ի՞նչպես, — հարցը:

— Միլիոն աշխատելուց հետո կասեմ, — առաջ և լոեց:

Զմտահոգվեցի այդ մասին. զբաղված եյի Սոկրատի վիրջին ճառով, վոր նա արտասանել եր աթենացիների առաջ իր դատավարության ընթացքում։

Յերբ ամանները լվացինք և դուրս յեկանք յուղերի ու կեղտերի աշխարհից՝ Գրողը ելի խոսք բաց արավ և առաջ։

— Համալսարանից վոչինչ դուրս չի դա. տիտղոսները ուրիշին կթողնեմ, իսկ յես կգնամ իմ բախմաը շինելու. — Ելի կը կնեց, վոր աման լվալը անասունի գործ ե. Բայց յես համոզված եի այլս, վոր վոչ մի անասուն այդ գործը չի ստանձնի և ավելորդ ե զրա մասին մտածելը։

Ելի հարց տվի Ուոլտը Գրողըուն.

— Ի՞նչպես ես փող աշխատելու, այն ել մի միոն դոլլար։

— Միլիոնը ձեռք բերելուց հետո կասեմ, — կը կնեց Գրողը, — Միլիոնի որով արձակուրդ եմ առաջել, պետք

և ուրիշ քաղաք զնամ. յեթե հաջողեմ, ել համալսարան չեմ վերադառնա, իսկ յեթե չհաջողեմ, համարաւանը չի փախչի, ելի կվերադառնամ:

Իսկապես Ուռլաըր Գրողբին միքանի որից զնաց և 15—20 որից վերադառնավ բոլորովին փոխված, թռիչքներով և մհծ-մհծ մտքերով տոկորված:

— Ինչ փոխված ես, Ուռլաըր, — տսացի, — վոկեորված ես:

— Վոգեորությունը զրոշի արժեք չունի, մինչև չեկը գրապահնում չլինի—պատասխանեց Գրողբին, բայց նրա աշքերը հեռվուած կարծիս տեսնում եյին մի միոնի չեկը, վոր թոշում եր գեպի իրեն,

— 1,000,000 դոլար, դալիս և շուտով իմ զրապահիկս մտնելու:

— Հիմա կարող ես պատմել ինձ, թե ինչպիս պետք ե աշխատես մի միլիոնը:

— Իհարկե կարող եմ,—պատասխանեց Գրողբին, — բայց պալմանով, վոր առայժմ վոչվոքի վոչինչ հայտնես, մինչև յես քեզ հայտնեմ ուրիշին հալտնելու ժամանակը:

— Շատ լավ, — ասացի:

— Հիշում ես, — սկսեց Ուռլաըր Գրողբին, — «Միներվա» իմիշըը:

— Հիշում եմ, ինչպիս չե, — պատասխանեցի:

— «Միներվա» խմիչքից պատրաստված եյին միլիոնավոր շշեր ե, ինչպիս զիանիս, ամբողջ Միացյալ Նահանգներում ռեկլամ եր յեղեւ լավ ել խմիչք եր, բայց այդքան վիթխարի ծախսերից հետո «Միներվա» չըռնեց, չծախվեց, միլիոնավոր շշերը մնացին պահեստում և հիմա միայն նրա շիշը արժեք ունի:

Հետման

— Ցես միքիչ մտածեցի և «Միներվայի» անհաշվողության պատճառը դառ: Այս միքանի որերը, վոր հեռացա համալսարանից, զնացի Զիկանգո մի հարուստի մոտ, ամբողջ յերեք որ խնդրեցի նրա քարտուղարից ներկայանալ նրան, բայց ինձ չհաջողվեց: Վերդապիս մի բացիկ զրեցի:

Հարգելի պարան

Ցես կարող եմ ցույց տալ ձեզ միիններ աշխատելու միջոցը, յերե ինձ յերկու բառի լսելու բարուրյան ունենամ:

Այսքան: Յերետկալիք, հաջորդ առավոտը ինձ կանչեց այդ հարուստը՝ մը. ի. ի. Հարտընը, և յես կարող եմ ցույց տալ «Միներվա» նրան ասացի, վոր կարող եմ ցույց տալ մի միլիոնից անհաջողության պատճառը, յեթի ինձ մի միլիոն դոլար տալու մի պայմանագիր ստորագրի, հաւատու նա ստորագրեց այդ պայմանագիրը:

Ուռլաըր Գրողբին զը պահնից հանեց պայմանագիրը և ցույց տվեց: Ճիշտ եր:

— Այդ պայմանագիրը գեռես շատ ջուր կվերցնի, — ասացի յես, ուզենալով միքիչ ել ինքս զործնական գառնալ կարծելով, վոր առետրի մեջ կասկածելը հեռատեսություն և գործնականություն և նշանակում:

— Գու կտեսնես, — պատասխանեց ինձ Գրողբին յերկաթե համոզումով: — Մը. ի. ի. Հարտընը արդեն գնեց բոլոր պատրաստի «Միներվայի» շշերը իրու գիշեց աշխատանքը շարունակվում և համապատին իմ ցուցմունքների, — վերջացրեց Գրողբին:

— Բայց ինչ են քո ցուցմունքները, — հարցրի:

— Հետո կասեմ,—պատասխանեց Գրողըին, — հիմա՝ յերբեք:

Մեկ յերկու որից Գրողըին ելի մեկնեց Զիկագո, իսկ յես շարունակեցի իմ առողջան խոհանոցում և համալսարանում:

Ուոլտըր Գրողըու մասին վոչինչ չնեցի ամբողջ վեց ամիս, ինքոն ել մի բացիկ չգրեց: Հասաւատ համոզվեցի, զոր նա իր յերիտասարդության փառահրդությանը զարկեց բատիսի ժայռերին և փշրեց:

Յերեմի հիշում եկի նրան, մինչև անգամ իմ ուսուրիշ մտերիմներից միքանիսին պատմեցի: Նըանք ել միացան ինձ և սկսեցին ծիծաղել:

— Մեկ միլիոն դոլար, հե՞տ, համալսարանը չհավանեց, մենք զոր ավարտինք, առնվազն 200 դոլար ուսումիկ կստանանք, և դա կգոհացնի մեր ֆանտազիան, — ասում եր այդ պատմությունը լսողներից մեկը:

— Շատ ընդունակ ուսանող կարող եր դառնալ, յեթե այդպիսի զարհուրելի ֆանտազիա չունենար, — ասում եիի յես, — վարովինեան Ուոլտըր Գրողըուն վոչինչ չեր պակասի. ընդհակառակը նրան խանգարում եր յերեակայության չափազանց բոցավառությունը:

Յերկորդ սեմեստրի քննությունները տված եկի և պատրաստվում եյի մեկնել զուզո, դաշտային աշխատանքներ կատարելու թե ապրելու և թե այն վեց դոլարի պարտքս վճարելու համար: Մի որ մեկը ավտոմոբիլով զոանս կանգնեց և ուզեց ինձ տեսնել: Լուսամուտից նայեցի — Ուոլտըր Գրողըին եր: Վաղեցի, վողջագուրեցի: Ավտոմոբիլը քշեց, և մենք զնացինք լճի ափին կանգնած մի կափի:

— Ի՞նչպես ես, մի միլիոնը աշխատեցիր, — հար-

ցըրի անմիջապես և պատրաստ ելի բացասական պատասխան ստանալ և համոզել նրան, վոր ելի համալսարան վերագառնա:

— Ի՞արկե, — պատասխանեց Գրողըին: Նրա ձախում վոչ մի պատրանք չկար:

— Մեզ «Ապոլլո» տվեք, — ալսովը սպասավորին: «Ապոլլոն» նոր դուրս յեկած մի խմիչք եր:

— Յես սիտեմ, — սկսեց Ուոլտըր Գրողըին, — դուշատ ես ծիծաղել ինձ վրա. քեզ չեմ մեղաղըում, յես մեղաղըում եմ հույն փելիսոփա Սոկրատին. այդ փիլիսոփաներն են մեզ խանգարողը:

Ալա ինձ հարցընեց:

— Ի՞նչպես և «Ապոլլո» խմիչքը, դուր գալիս ե:

— Շատ դուրեկան խմիչք ե, — պատասխանեցի:

— Դա այն միենույն «Միներվա» խմիչքն ե:

«Միներվայի» անհաջողությունը կայանում եր նրանում, վոր սպիտակ գույն ուներ. յես գտա, վոր այդ խմիչքին պետք ե գույն խառնել և կծախովի: Ուրիշ վոշինչ: Մը. ի. ի. Հարտընը համոզվեց զրան, ստորագրեց ինձ հետ մի միլիոն դոլարի պայմանագիրը, և յես նրան տվի այդ գաղտնիքը: Մը. Հարտընը գնեց միլիոնավոր շահերը դատարկ շիթ գնով, գույն խառնեց, փոխեց անունը և հիմա հսկայական քանակությամբ ծախում ե: Նա ինձ արդին վճարեց մի միլիոն դոլարը: Արդեն ե: սկսել եմ նոր առեսուր իմ սեփական գրամագլխով և ինձ համար:

Յերբ Ուոլտըր Գրողըուց պիտի բաժանվելի, նա ինձ ասաց.

— Մի խնդիրք ունեմ, շատ եմ ցանկանում, վոր չմերժես:

Յես չզիտեմ—ինչպես և ինչու կարծեցի, թե Գրող-
քին ուզում ե իր առետրական տանը մի պաշտոն տալ
ինձ:

— Յեթե ինձ պաշտոն ես առաջարկելու, յես հա-
մալսարանը չեմ թողնի, —պատասխանեցի:

— Վաչ վնչ, սիրելիս, գու անպետք մարդ ես
առեւրի համար, —ասաց Գրողքին, —ավելի լավ ե դու
փշանաս քո Պատոնով և Սոկրատով. քո ի՞նչ դորձն
ե առեւրը:

— Յեթե ակադեմիական կյանքիս չմնասի, կը ն-
դունեմ, —պատասխանեցի անմիջապես:

— Թուլլ տուր ինձ քեզ վեց գոլլար տամ, վոր
այն պարտքդ վճարես, —ասաց Ուոլտը Գրողքին:

— Շնորհակալ եմ, —պատասխանեցի:

Միքանի տարի հետո՝ Նյու-Յորկում, վեթխարի
ոյդ քաղաքում, պատահմանը հանդիպեցի Աւոլտը
Գրողքուն Բրոդուեյի վրա մի կոոջ հետ: Կոոջ դրկում
մի սպիտակ շուն:

Իմ խոհանոցի ընկերս ամբողջովին փոխվել եր,
մոնոկլ կար մի աչքի անկյունում, խոսում եր դան-
դաղ, անուշադիր և անպատճառաբանված ծիծաղում
եր: Անգլիոնի իր հնչյունները դառել եյին մաքրա-
կրոնական, քարոզչական:

— Ո՞հ, դուք, ի՞նչպես եք...

— Յես ավարտեցի, —ասացի պարզ կերպով:

— Ո՞հ, Անգլիատ, —խորոց Գրողքին ու ծի-
ծաղելով հեռացավ:

ՏԻԿԻՆ ՊՈՒԼՄԵՆԻ ԾՆԻԿԸ

Տիկին Պուլմենը յերբ ավտոյով պտույտի լեր
դնում Միասխանիպի գետի ափին յերկարած ծառուղինե-
րով, իր հինգ տարեկան յերեխային թողնում եր դա-
յակի մոտ և հետը վերցնում իր յերկու տարեկան
շնիկին:

Տիկին Պուլմենը և իր շնիկը սերտ կապերով ե-
լին կապված իրար հետ:

Յերբ դայակը նոր վոտ յելած յերեխային ըե-
րում եր իր մոր մոտ, յերկու բոպելում մալրը ձանձ-
րանում եր.

— Հոգնեցի, —ասում եր նա դայակին, —տար:

Դայակը գրկում եր յերեխային և հեռանում, իսկ
շնիկը գրավում եր մանկան սեփական մայրական դիր-
կը և ժամեր անցկացնում տիկնոջ հետ:

Մինչև անգամ հետճաշչա հրավերների ժամանակ
տիկին Պուլմենը հոգածությամբ գրկում եր իր մտե-
րիմ շնիկին և հոգութիւն պատմում նրա բարեմանու-
թյունների մասին: Հրավերների կես ժամանակը նը-
լիրվում եր նրան, շնիկին: Հրավիրված կանաչք ա-
մենայն ուշագրությամբ լուսն ելին տիկին Պուլմենի
պատմությունը, նրանք ել իրենց հերթին խատում
եին շնիկին և սիրում: Տիկին Պուլմենն անտարերու-
թյամբ չեր կարող գիտել յերբ կանաչք շոյում ելին
իը մտերմին:

Այն որից, յերբ տիկին Պուլմենն այդ շնիկը ուշնեցավ, փոխեց իր ամեն տարվա ամառանոցի վայրը, վորովհետև լնտանեկան բժիշկը հայտնեց տիկին Պուլմենին, վոր իր գնացած ամառանոցը վատ կարող եր անդրադասնալ շատ քիչ մաղ ունեցող շան վրա:

Բժշկի այս կարծիքը յերբ տիկին Պուլմենը հայտնեց տիկին Ռւիլիամսին, այս վերջինս բացականչեց.

— Բարի յեք, տիկին Պուլմեն, Քրիստոսի նման բարի յեք:

Այն ժամերը, վոր ալկին Պուլմենն անց եր կացնում իր մտերմի հետ, նրա կյանքի ամենահաճութիւնի ժամերն ելին, այդ ժամերը տիկնոջը տալիս ելին դպայությունների ամենաբուռն տեսակը:

* *

Յերջանկությունը յերբեմն յերկար չի տևում նաև միլիոնատերի կնոջ համար:

Տիկին Պուլմենն ել, մի առավոտ, մետաքսյա բարձիկների վրա պառկած, դառնորին արտասվեց. Նրա արցունքի կաթիլները զլորվեցին արցունք չտեսած բարձիկների վրա:

Տիկին Պուլմենի շնիկը մեռել եր միքանի թեթև հաջոցներից և գալարումներից հետո:

Տիկին Պուլմենն աղի արցունքներ եր թափում ամեն անդամ, յերբ հիշում եր շնիկի վողբազին հաշցները:

— Վաչվոք չկարողացավ հասկանալ նրա ցավը, — ասում եր տիկինը և ծանրորեն մեղաղլում ընտանեկան բժշկի գիտական անզորությունը:

* *

Ենիկի մահվան յերկըորդ որը քաղաքի բուրժուական թերթերը հրատարակեցին տիկին Պուլմենի և իր շնիկի լուսանկարները, մեկը՝ «Տիկին Պուլմեն» ու իր շնիկը, յերբ շնիկը վողջ եր, իսկ մէուսը՝ «Տիկին Պուլմեն» ու իր շնիկը»—շնիկը փոքրիկ դագաղի մեջ, ծաղիկներով վողողված, իսկ տիկին Պուլմենն ել սղի շորերով:

Մամուլը չեր մոռացել միքանի միթարական լսութերի հետ միասին տալ նաև շնիկի կենացքությունը:

* *

Տիկին Պուլմենն ընտանեկան ոլաստորի միջոցով թաղել տվեց իր մտերմին քաղաքի գերեզմանոցի ընտանեկան սեփական կալվածում:
Թաղումից հետո պատորները քրիստոնեական Պուլմենին մինչև նրա ապարանքը քրիստոնեական յեկեցու պարտավորությունները լրացնելու համար: Ապարանքում պատորը և գերք կարգաց և չերմագին աղոթեց:

Տիկին Պուլմենը պատորին պատմեց հանգուցյալի մասին: Պատորը տիրությամբ, տրտում հոգով լսեց հանգուցյալի մասին:

Յերբ պատորը հրաժեշտ եր առնում, տիկին Պուլմենը նրան հաղորդեց, վոր 2000 դրամ և նվիրում այս մահվան առիթով քաղաքի «Յերիտասարդաց Քրիստոնեական Ընկերության»:

Բուրժուական մամուլն այս լուրը հաղորդեց խոշոր տառերով և առանձին գնահատականով:

ՈՒԹՆ ՈՐՎԱ ԿՆՈՇ ԾԱԽՍԸ

Յերբ մր. Կուլինզը մատավ Նյու Յորկի «Ուալդուրֆ-Աստորիա» հյուրանոցն իր առնունն ստորագրելու և սենյակ ստանալու մի շաբաթվա համար, նրան մոտեցավ 30 տարեկան, սև մետաքս հագած մի գեղեցիկ կին, բարեկց և ուղեց հետը խոսել: Մր. Կուլինզն իր 40 տարվա առևտրական և քսան ու հինգ տարվա ամուսնական կյանքում ճանաչել եր միայն յերկու տեղ: — իր առևտրական վիթխարի տունը, 13 հարկանի, գորի մեջ աշխատում ելին ավելի քան 10.000 ծառայող, և իր ընտանեկան տունը, — կինը և յերեխաները: Մր. Կուլինզն ուներ նաև յերկու ամուսնացած վորդի, վորոնք ապրում ելին առանձին:

Մր. Կուլինզը 60-ից քիչ անց մի առուրդ ծերունի յեր, քսան տարեկանից սկսել եր ծառայել այն միևնույն առևտրական տան մեջ, վորի սեփականատերն եր հիմա, Սկսել եր նա իր ծառայությունը շաբաթական 4 գոլլար վարձով՝ պլատֆորմի վրա իբրև ամեն բանի հասնող ճարպիկ մի յերիտասարդ, և հասել եր այդ հակա առևտրական տան տիրոջ դիրքին: 40 տարվա ընթացքում կարողացել եր նա այդ առևտրական տան տերը դառնալ, նվիրելով իր ամրող կյանքը այդ տան տերը դառնալուն, մոռանալով ծաղիկները և կանանց:

— Ի՞նչ կարող եմ անել ձեզ համար, — հարցրեց

մր. Կուլինզը գեղեցիկ կնոջը, յերբ կինն արդեն ըլունել եր նրա սպիտակ ձեռքը և հաղորդել եր նրա մարմարին այն միևնույն դողը, վորն ստացել եր մր. Կուլինզը 35—36 տարի առաջ, յերբ հանդիպել եր իր կնոջը:

— Վոչինչ, — պատասխանեց գեղեցիկ կինը յերգող ձախով, — ուզում ելի ձեզ հետ ծանոթանալ. իմ ամուսինն ել ձեզ նման հայտնի առևտրական եր, յերբ նա գեռես ապրում եր:

Մր. Կուլինզը մի պահ յերերաց, իր կարճ հասակից գիտեց սլացիկ հասակով կնոջը, ժպտաց և՝

— Գնանք դուքս, — ասաց:

— Գնանք, — պատասխանեց գեղեցիկ կինը:

Յերբ փակ ավտոն սլանում եր Հըդաըն գետի ափերով, մր. Կուլինզը և գեղեցիկ կինը ավտորի մեջ վոհ մի խոսք չելին փոխանակում: Գեղեցիկ կինը կը ծըլվել եր մարմարով փոքրիկ ծերունու գրկում: Յերբ վերադառն «Ուալդուրֆ-Աստորիա» հյուրանոցը, մր. Կուլինզը մոտեցավ ստորագրության տետրին և ստորագրեց:

— Տեր յեվ սիկին Ու. Մ. Կուլինզ:

Նրանք բարձրացան սենյակի:

Յերկու ժամից հետո մր. Կուլինզն իջավ դահլիճ, մի հեռագիր իմբագրեց և ուղարկեց կնոջը՝ ըստ տարիների սովորության.

«Ուսող եմ. գործերս մի օաքարից
կվերջացնեմ յեվ կվերագառ-
նամ. բյուրավոր համբուլըներ.»

Ուալդո»

ինքն անձամբ տարավ հեռագիրը դիմացի դեղաւ
տան մեջ գտնված հեռագրական բաժինը, վորպեսզի
հյուրանոցի ծառալոյները չիմանալին, թե իր կինը
հետք չեր գոնվում հյուրանոցում, Միքիչ հետո գե-
ղեցիկ կինը, վոր տիկին Զեպմեն եր կոչվում, շոթերը
փոխած՝ իջավ գահինը, մի գաղտագողի շնական ակ-
նարկ նետեց հյուրանոցի կառավարչին. կառավարիչը
ժպտաց, Տիկին Զեպմենը զուրս լիկավ, նստեց ավտոն
և կորավ վիթխարի քաղաքում:

Սուլինը հեռագիրը տալուց հետո շտապից
իր առևտության գործիքն:

Նա ավելի քան 2.000 000 դոլարի ապրանք եր գնելու իր առևտրական տան համար նկություններից զա- նազան մեծաքանակ ընկերություններից։ Յերբ նա առաջին անգամ մտավ Աւուլուորթ շենքը 5 և 10 սեն- տանոց ապրանքներ գնելու, զգաց, վոր տիկին Զեպ- մենը մտքից չի հեռանում, հիշում և նրա ձայնը Սիրտն ուղեց անմիջապես վերադառնալ հյուրանոց, բայց սովորությունը նրան մղեց դեպի առևտուր, և թեկուզ նա կարծում եր, վոր դեպի հյուրանոց և վե- րադառնում, բայց խոսում եր Ուուլուորթի վաճառողի հետ։ Իր վորոշման համաձայն՝ մը. Կուլինդն շտապեց յերեք ընկերությունն այցելել։

Տիկին Զեպմենի ավտոմոբիլը կանգնեց Հըդաըն
գետի ափի մի վիլայի տուաջ, զբսի յերկաթյա դռւուը
բաց արեց, ծաղկիկներով յեղերված փոքրիկ կածանից
անցավ և յերբ մոտեցավ վիլայի մեծ դռանը, յերկու նեղը
դռւուը լայնորեն բաց արին, և տիկին Զեպմենը մտավ
ներս և բարձրացավ ուղիղ մը. Հոպկինսի ննջասե-
նյակը:

Մր. Հովկինսը մի ծերացած՝ կապիտալիստ եր, վոր քաշված առևտրական կյանքից, ապրում եր այդ վիլայում և տառապում եր անքնությունից: Մր. Հովկինսը իր կնոջը և իերէխաներին ուղարկել եր Գերմանիա, վիսբադեն քաղաքը և ինքն այդ վիլայում փրոնում եր քննելու միջոցներ:

Տիկին Զեպմենը գնում եր մը. Հոպկինսի մոտ,
որական յերկու ժամ նրա գլուխը շփում, վորապեսի
շփման այլ հեշտանքի տակ մը. Հոպկինսը քնի. Տի-
կին Զեպմենը մեկ-մեկ մը. Հոպկինսի չորացած և
վոսկը աղջին ալկոհոլ եր քսում. Այդ
բոլոր գործողությունը կատարվում եր պրիմիտիվ
անմեղությամբ, վորովհետեւ մը. Հոպկինսը վազուց
մոռացել եր իր անասուն լինելը:

Յերբ յերկու ժամը վերջացավ, տիկին զեպսիսը վերջանեց, հոգնած և ձանձրացած, առանց աղվոտի կանգնեց, սոգնած և սեղանի վրա դրած 1000 գոլլարի չեկը մուկի վերցրեց սեղանի վրա դրած 1000 գոլլարի չեկը և հեռացավ՝ չխանգարելու համար մը. Հոպկինսի քունը:

Մը. Հոպկինսն իր քարտուղարի միջոցով սա-
մակ եր գրում Վիսբադեն, իր կնոջը, փոր բժիշկներին
հաջողլեց մի քննոքեր դեղ գտնել, և ինքը վերջերս
քննում ե:

Յերբ տիկին Զեպմենը վերադարձավ «Աւալորֆ-Աստորիա» հյուրանոցը, մր. Կուլինդն արգեն վերադարձել երև և իրեն անհանդիստ եր զգում տիկին Զեպմենի ուշանալու համար:

Մը Կուլինզը գրկեց տիկին Զեպոմենին, և մին-
չե կես գիշեր ձքնեցին արանք:

Տիկին Զեպմենը մը, Հոպկիսորոն քաղցրոց, և մը, Կուլինզին չթռղեց, վոր քնի:

Մր. շաբաթը լրանալուց հետո մր. կուլինդը հայտնեց տիկին Զեպմենին, վոր իր առևտրական գնումները վերջացել են, և պետք է մեկնի. Տիկին Զեպմենն առանց պատասխան տալու՝ ախրեց, և մր. կուլինդը նշմարեց, վոր տիկինը լերկու կաթիլ արցունք ե կախել իր սե և խոշոր աշքերից. Մր. կուլինդը խոստացավ նրան շուտով վերադառնալառևտրական գործերի պատրվակով և միքանի որ ևս անցկացնել իր հետ և ինդրեց նրանից իր հասցեն:

— Հասցեյի կարիք չկա, — պատասխանեց տիկին Զեպմենը, — Ես կիմանամ, թե դուք յերբ կլինեք ՆյուՅորկում:

Մր. կուլինդը չստիպեց, վորովհետեւ ճիշտ եր տիկին Զեպմենը: Յերբ մր. կուլինդը Նյու-Յորկ եր գալիս, իր գալուց լերկու որ առաջ իր պատկերն են հրատարակում Նյու-Յորկի թերթերը և հայտարարում նրա գալը:

Տիկին Զեպմենը հրաժեշտ տվեց մր. կուլինդին և հեռացավ հյուրանոցից.

Մր. կուլինդն իր փոքրիկ պալուսակի մեջ տեղավորեց իր շապիկները, ոձիքները, գուլպաները, թաշկինակները և թղթերը, ելեկտրական կոճակը սեղմեց, վորից հետո անմիջապես նեզը տնկվեց իր առաջ:

— Տար պայտասակը ներքեւ, յես գնում եմ:

— Շատ լավ! — ասաց նեզը և թուափ:

Մր. կուլինդը միքանի բոսկ հետո իջավ ներքեւ հյուրանոցի կառավարչից խնդրեց իր հաշիվը:

Նյուրանոցի կառավարիչը ժամանեց դեմքով ներկայացրեց նրան հաշիվը — 250.000 դոլար:

Մր. կուլինդն ապշեց: մի շաբաթ և 250.000 դոլար ծանրա:

— Խնդրեմ այս ծախսերի մանրամասները տվեք ինձ, — ասաց մր. կուլինդը խիստ և խորապես վրդաված տանով:

Հյուրանոցի կառավարիչը դուրս բերեց հաշիվների մանրամասնությունները «տիկին կուլինդի» ստորագրած ստացականներով: Դրանից հետո պարզ ցեղավ մր. կուլինդի համար, վոր «տիկին կուլինդը» ցեղավ մր. կուլինդի համար, մարդարիտներ, մանյակներ, 15-20 տեսակ շորեր և այլն:

Մր. կուլինդն ուզեց ասել վոր այդ կին: Իր կինը չեր, այլ մի պատահական կին, բայց հիշեց, վոր ստորագրության տետրում գրել եր՝

«Տեր և տիկին Ու. Ա. կուլինդ»:

Մր. կուլինդը մի բոսկ կծոտեց իր շրթունքները, հանեց իր զրպանից չեկի տետրը, 250.000 դոլարի չեկը զրեց և դուրս յեկավ հյուրանոցից:

Հյուրանոցի կառավարիչն անմիջապես մտավ հեռախոսի բուդկան և զանգահարեց տիկին Դորոթի Զեպմենին:

— Հըլմ, հըլմ, Դորոթի, ծերունի հիմարը մեկնեց, չեկն ստացաւ Յեկ սկսեց շնականորեն հոհուալ հեռախոսի բուդկայում:

„ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԿՈՄԵԴԻԱ“

Մեր վաճառատան կառավարիչը հեռախոսի լաւ-
փողը կախելուց հետո՝ մոտեցավ ինձ և ասաց.
— Շնուր սննի՞ մո՞ գույք.

— Ծուտ գնամ մր. Ֆինկլշտայնի տունը և աես,
թե ինչ արեկեցան զորդիր կան, վորոնք կարիք ունեն
նորոգվելու և մաքրվելու:

— Ծառ լավ, — ասացի և դուրս յեկա անմիջապես դեպի մը. Ֆինկլշտայնի ապարանքու:

Մր. Ֆինկլշտայնը Ամերիկայի Միացյալ Նահանգների միլիարդատերերից մեկն էր. Ամերիկայում շատ հարուստների տներում յեղել ելի շնորհիվ արեգելյան գորգերի սպեց լինելու, բայց մինչև այդ չելի յեղել Ֆինկլշտայնի բնակարանում:

Մր. Ֆինկլշտայնի բնակարանը գտնվում էր առիստոկրատների թաղում, բլուքի ամենաբարձր կետի վրա, շրջապատված զանազան տեսակի ծառերով, վորոնց լուրաքանչյուր ճիւղին դիպել էր մարդկային ձկրատը և արվեստական ձև տվել:

Դեռևս ծառուղին չմտած՝ իմ դեմ տնկվեցին յերկու նեզը, վորոնք պաշտպանում էին մը. Ֆինկլ-շտանի բնակարանի մուտքը. Անմիջապես ներկայացրի մեր վաճառատան այցելումը, և նրանք բաց արին դուռը. Դուանը ինձ դիմավորեց յերիտասարդ և գեղեցիկ մի սպասուհի, վորի սպիտակ գլխանոցը միայն մասնում էր նրա սոցիալական դրությունը: Բարեկեցի

սպասուհուն և լերկարացրի մեր վաճառս տան այցե-
տոմմաբ: Սպասուհին էսկույն ինձ հրաժիրեց դեպի
գահին, ինպրեց նստել իսկ ինքը հետացավ այցե-
տոմմաբ ձեռին:

— Յերեխ ի թրիտասարդության բաւարար, —
ծեցի, — կամ ինքը ցանկացի է, վոր վարձու արվեստա-
ւունեասառը քանդակե ի բեն:

գետը լիրիտասարդ քամովակն է բայց
Պատի ոջախում դարսված Ելին համաչափ փայ-
տերը վորոնց լետեռում վասվում եր ելեկարակտն կար-
միր մի լամպ՝ սոսկ վառվելու իլլուզիան տալու հա-
մար։ Աջակողմյան լուսամուտներից, ծառերի արան-
քում, յերեռում եր փոթորկալի մի ծով, իսկ ծովի ան-
միջապես յետերը ցցվում եր հարևանի տան կտուրը։

— Այս քաղաքում ծով չկա, — սահմանից է, ծով ե, զոր յերկում ե:

Յերբ շարունակեցի նայել զիլու ըստ՝ և ու թողարկածի ամենահասական մի նկար:

- Դուք յեկել եք արևելյան գորգերը տեսնեւ
լու:
- Այս, մադամ, —պատասխանեցի և վոտի կանգ-
նեցի:
- Գնահատ, ցույց տամ:
Յես հետեւեցի նրան:
- Նա ինձ առաջնորդեց մատենադարանը և խնդրեց,
վոր մատենադարանի արևելյան գորգերը նորոգեմ,
լվամ և արդուկեմ:
- Շատ լավ, —պատասխանեցի մեքենայաբար,
վորովհետև այդ լուպեյին իմ աչքերը հափշտակված
եյին մատենադարանի գրքերով:
- Համաշխարհային ամբողջ գրականությունն այս-
տեղ կար, բոլորը վոսկեզոծ, լուրաքանչյուր դարաշըր-
ջանի և աղջութիւնն գրականությունը դարսված միա-
չափ հատորներով և միագույն շապիկներով: Ընրինակ՝
հելենական գրականությունը ամբողջական դարսված
ե դահլիճի արևմտյան պատի վերևում, վոչ մի անուն
պակաս չեր, հունական յերկնքի նման կապուտ շա-
պիկով:
- Կյանքում առաջին անգամն եր, վոր խորապես
նախանձեցի հարուստին: Գրքեր, գրքեր—ահա իմ
կյանքի յերազը:
- Պետք ե խնդրել մադամից, վոր թույլ տա-
աչքի անցկացնելու բոլոր գրքերը, —մտածում եմ, յերբ
տեսա, վոր պառավը դնում եր դուրս:
- Պառավի յետեցի յես ել դուրս յեկա և զնացի
վաճառառուն կառք բերելու և տանելու գորգերը նո-
րոգելու և լվալու համար:
- Վերտպարձիս արդեն վորոշել եմ խնդրել, վոր

- ինձ թույլ տար գեթ տեսնելու Դանտելի «Աստվածային
Կոմեդիայի» մեծ հատորը, վորի վրա շլացուցիչ տա-
ռերով գրված եր—«Արքայական հրատարակություն»:
Վաղուց լսել եմ, վոր «Աստվածային կոմեդիայի»
մի այդպիսի շքեղ հրատարակություն գոյություն
ուներ, վորի նկարազարդումը գերազանցել եր վորին
գրքի նկարազարդումը:
- Անպայման այդ հրատարակությունը կլինի, —
մտածում եմ:
- Յերբ վերտպարձա մր. Ֆինկլշտայնի ապարան-
քը, ելի ինձ դիմավորեց նույն գեղեցիկ սպասուհին:
- Ի՞նչ լուս բնակարան ե, —ասացի սպասուհուն
միջանցքներով անցնելիս, վորպեսզի մի խոսք բանամ
և հետզհետե հասնեմ գրքերի հարցին:
- Լուս ե, այն, և շատ ել տիսուր, —պատասխա-
նեց սպասուհին:
- Տիսուր, ընդհակառակը, լավ ե այսեղ, լուս,
խորը:
- Այս հսկա տան մեջ միայն այդ պառավը ե և
մին ել մր. Ֆինկլշտայնը, նրա ամուսինը, ուրիշ վոչ-
վոք չկա, շատ զործ ել չկա, վոր չտիրեմ: Յես գի-
մավորում հմ միայն այցելողներին և ձանապահ
գցումներանց, ձաշն ել դրսից և զալիս, վոչինչ չկա
անելու, այնքան տիսուր եմ, վոր յերբեմն մտածում
կանու գուրս, լինել զործազուրկ բայց լինել մարդ-
կանց մեջ, աղմկի մեջ:
- Կարդացեք, —ասացի զսպված բարկությամբ, —
կարդացեք, կարդացեք, ախ, լեթե յես ժամանակ և
գիրք ունենամ կարդալու...
- Կարդում հմ, —պատասխանեց սպասուհին, —շապ

եմ կարդում, «Կապույտ գիրի» վերջին համարն ամբողջ վերջացրել եմ, ուզում եք ձեզ տամ, կարդացեք:

— «Կապույտ գիրի» չեմ ուզում, — ասացի և մուտենագրան չմտած՝ ըռնեցի նրա ձեռքը: Զդիմադրեց:

— Մի վախենաք, — փափսաց նա:

— Մի բան եմ խնդրում քեզանից:

— Պատրաստ եմ, — պատասխանեց սպասուէին: Նրա դիմքի վրա հրճվանքի մի մեծ ալիք բացվեց:

— Սպասիր, գորգերը հավաքեմ, կտսեմ:

Գորգերը հավաքեցի, հանձնեցի նեղրին, վոր դարսի կառքի մեջ, և մոտենալով սպասուէուն՝

— Յերիտասարդ լեզի, — ասացի, թուլ տուր տեսնեմ Դանտելի «Աստվածային կոմեդիայի» մեծ հատուը:

Սպասուէին ապշած նայեց իմ աչքերին և սկսեց բարձր ծիծաղել և հոնուալ.

— Խնդրեմ, խնդրեմ:

Առանց ուշը դարձնելու կանացի հոհողին՝ արագորեն վերցրի «արքայական» հատորը: Թիեթե եր, փորձեցի բանաբ բայց չկարողացա, դեռ դեն շուռ տվի՝ անողուտ: Սպասուէին շարունակում եր դաժանորեն ծիծաղել:

Զայրացած՝ գետին շպրտեցի Դանտեն:

— Այս բոլոր գրքերը կարտոնից են չինված, — հարեց սպասուէին, — ավելի լավ ե, վոր վերցնես «Կապույտ գիրի» և կարդաս:

— Ծնորհակալ եմ, — պատասխանեցի և սկսեցի քայլել գեպի դուրս:

Միջանցքից լսում եյի, վոր սպասուէին ծիծառում եր անգութ կերպով:

ՀԱՅՐԵՆԱԿԻՑՈՒ

Յերբ նա մտավ մեր վաճառատունը, ինձ թվաց, վոր թշվառությունն ինքն և մարմնացել արդ մարդու մեջ ինձ թվաց, վոր ապրում և նա իրու թշվառության պատկեր:

Դիվային կմախքով և Ամերիկայում չտեսնված ցնցուիներով նա կանգնեց պատից կախ արած մետաքայա Շիբազի գորգի առաջ և նայվածքը հառեց իմ վրա: Մոտեցան բարեցի: Դողում եր:

— Ազաշում եմ, — սկսեց նա հայերեն լեզվով, — տեղավորեցեք ինձ մի հիվանդանոցում, գեթ փողոցում չմեռնեմ:

Յես չկարողացա անմիջապես պատասխանել և, վորպեսզի մի բան խոսած լինեմ, հարցըի:

— Վորտեղացի յեք... բայց զգացի, վոր հարկ չկար մեռնող մարդուն այլպիսի հարց տալ իսկուն չկար փոխել խոսակցությունը, բայց նա շարունակեց:

— Յես քո հորը լավ եմ ճանաչում, ինչ մարդ եր, ափսոս... դու ինձ չես հիշում, այն ժամանակ փոքր եյիր, չես քեզ գրկել և մաս եմ ածել իհարկե չես հիշում, դու հազեվ հինգ տարեկան եյիր, յերբ յես հեռացա հալքենիքից: Լսել եմ, վոր հայրի մեռել ե, բայց ինչողես ե մայրիկ, ինչպես են յեղբայրներդ՝ բայց ինչողես ե մայրիկ, ինչպես են յեղբայրներդ՝ մայրը, գեռուպը, կոռուը: Ի՞նչքան ես մեծացել: Մոշակորը,

ռացել եմ քո անունը, բայց միուսների անունը լուր
եմ հիշում:

— Ի՞նչ տեսակ հիվանդանոց ես ցանկանում, —
հարցրի:

— Հիվանդանոցի տեսակի դեմ չեմ առարկի,
միայն ձրի լինի, փող չունեմ, տեսնում ես:

— Անմիջապես, անմիջապես, —պատասխանեցի:
Վազեցի հեռախոսին և զանգահարեցի քաղաքի առողջապահական բաժնին և խնդրեցի թույլ տալ մի մարդու մի ձրի հիվանդանոցում մեռնելու:

Իմ խոսելու տոնն այնքան մեղմ եր և աղաչական,
վոր բաժնի վարիչը պատասխանեց.

— Յես՝ հեռախոսեմ «Сото» հիվանդանոցը,
վոր ընդունեն նրան:

— Շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ:

— Հանգիստ իր վոսկրներին, —ասաց բաժնի վա-
րիչը, ավանսով հանգիստ մաղթելով իմ հայրենակցի
հիվանդ վոսկրներին:

— Շնորհակալ եմ, պրն. Նիկըլս, շատ շնորհակալ
եմ:

Հեռախոսը վակեցի. գլխարկս դրի և իմ թշվառ
և հիվանդ հայրենակցիս հետ գուրս յեկանք փողոց:
«Сотո» հիվանդանոցը հեռու յիր: Առաջարկեցի հի-
վանդին տրամվայ նատել, բայց նա չհամաձայնվեց:

— Այս ցնցոտիներով ամոթ ե, —ասաց, —քայլենք,
դեռևս ուժ ունեմ:

— Աղքատությունն ամոթ չե, —պատասխանեցի, —
նստենք:

Հիվանդը չհամաձայնվեց: Ոթոմորիլի համար ել
յես փող չունեի: Սկսեցինք քայլել: Շոր եր: Կիզիչ

արկ: Սալահատակի ցեմենտը կակդել եր և կպչում եր
կոշիկներին: Քըտինքը վազում եր իմ ճակատից, բայց
ուղեկիցս զողալուց դադրեց:

— Քայլելն ինձ ոգտակար ե, լավ եմ զգում, —
ասաց:

Ուրախացա: Վախենում եյի, վոր ճանապարհին
մեռնի, և իմ զործու ավելի դժվարանա և հոգիս ավելի
ցավի:

— Յերեկ ձեզ հարկավոր չե հիվանդանոցում
ուղուկելը, ձեզ հարկավոր ե ողափոխություն, —հարեցի:

— Թափառում եմ յերկրեցերկիր, դրանից ավե-
լի ողափոխություն, իմ նպատակը մեռնելն ե:

— Մեռնելու համար շատ կարճ միջոց կա:

— Դրանից վախենում եմ, ուզում եմ հանգիստ
մեռնել —պատասխանեց հայրենակիցս:

Սիրտս սղմվում եր:

— Կյանքն ինչքմն գաժան պետք ե լիներ,
վոր մարդ ուզենալ մեռնել —մտածում ելի, —իհարկե,
ցնցոտիներն այնքան ել զրավիչ չեն վոչ-փիլիսոփա-
ների համար:

Մի ժամից «Сотո» հիվանդանոցը,
ներկայացանք գլխավոր բժշկին, վոր հեռախոսով ար-
քեն հրահանգ եր ստացել իմ հայրենակցի մասին:
Բժիշկը կարգադրեց, վոր հիվանդի շորերը հանեն, լո-
ղացնեն և պառկեցնեն, մինչև ինքն ի վիճակի կլինի
նրան քննության լինթարկելու: Բժշկի կարգադրու-
թյունից հետո զարձա հայրենակցիս և տեսա, վոր
շոր եր նա իր աչքերը, բյուրեղլա գնդերի նման ան-
շարժ և անարտահայտիչ, չեր շարժվում, չեր ել դող-
զողում:

— Բժիշկ, մեռնում ե իմ բարեկամս, — պատճի պաղատական տոնով:

Բժիշկը քննեց զարկերակը և քմծիծաղով

— Ամեն ինչ նորմալ ե, տարեք, — ասաց:

Հայրենակցիս թերց բռնելով՝ հեռացանք գլխավոր բժշկի սենյակից և մտանք հանդերձարանը, ուր պետք ե փոխվեյին հիվանդի շորերը: Հիվանդը դանդաղ և դժոն շարժումներով շորերը հանեց, բոլոր ցնցոտիները թողեց հատակի վրա, բայց սև և կեղանատ ներքնաշապիկը կլորեց և պահեց կուան տակ: Հանդերձարանապետը մի փայտի վրա առավ ցնցոտիները և նետեց աղբի արկղի մեջ և խնդրեց, վոր կուան տակի շապիկն ել տա:

— Աղաջում եմ, այս շապիկն ինձ մոտ թող մնա, յես ուզում եմ այս շապիկը զրկած մեռնել:

Թարգմանեցի հիվանդի վերջին ցանկությունը:

— Զի կարելի: Առնվազը մենք պետք ե լվալ տանք և հետո հանձնենք իրեն, կեղանատ շորերով չի կարելի անկողին մտնել:

Ելի թարգմանեցի:

Հայրենակցս վճռականորեն պատասխանեց.

— Չեմ տա:

Հանդերձարանապետը կանչեց հիվանդանոցի տղամարդ ծառայողներից մեկին, իրեկ բիրտ ուժ, և հրամայեց նրան կեղանատ շապիկն առնել հիվանդի ձեռքից: Ծառակողը բռնեց նրա թերը, թեթևակի դարձրեց և առավ շապիկը:

Հապկի վրա մի ծրար եր կարված, վորի մեջ գտնվեց 4000 դոլար թղթաղրամ և յերկու յերկար թուղային արժեթղթեր, վորոնցից լուրաքանչյուրն արժեր 10,000-ական դոլար:

— Ներեցեք ինձ, — կմկմացի, — յես չեյի իմանում ալիք, յեթե վոչ չեյի վկայի նրա աղքատության համար, — և զլուկիս կախեցի կրծքիս վրա: Ամոթից չելի ուղում շարժվել:

Հայրենակցս թերը պարզած փողերին, աչքերը չուած և կազզուրված՝ աղաջում եր...

— Իմ փողերը, իմ թղթերը:

— Կասսայում կպահենք և յեթե չմեռնեք, ձեղ կտանք, — ասաց հանդերձարանապետը:

Յես շուռ յեկա և գուրս եյի կնում, յերբ մեկն ինձ բռնեց յետելից:

— Ասացեք, խնդրում եմ, թող տան իմ շորերը, յես չեմ ուզում մեռնել, յես կհեռանամ ալստեղից: Յես միայն ուզում եյի հանգստանալ:

Թարգմանեցի:

Աղբի արկղից դուրս բերին իմ հայրենակցի շորերը, հանձնեցին նրան իր փողերի և արժեթղթերի հետ: Նա հագնվեց արագությամբ, հիվանդապին սեղմեց փողերը և թղթերն իր ափերի մեջ առանց վոչպի հետ խոսելու՝ դուրս յեկավ հիվանդանոցից և արագ քայլերով հեռացավ:

ԻԶԱԲԵԼԼԱ ՍԵՐՐԱՆՈ

Սպանիայի հարավում, Անդալուզիայում առատ է գինին և պարը: Այնտեղ մարդիկ հագնդում են ծիածանի բոլոր գուշներով, ներքեսում—սաթի դեղին շապիկը՝ ծովի կապույտ, արյան գույն, բոսոր, լայն յերիգներով, Անդալուզիացիները պարում են փոթորկահուղ՝ ճիշտ ծովի ալիքների նման, գալարում ևն իրենց մարմինները, պարում են յերազարին աչքերով, պարում են ամեն որ, պարում են անվերջ և անպարտասեւն: Նրանց մարմինները ճկուն են, ինչպես արար ձիավորի նիզակը, վոր յերբեմն սլացել և Անդալուզիայում, ճկուն ինչպես ուժենու ճյուղն արարատյան դաշտում: Նրանք սիրում են պարել լուսնիա գիշերներին: Յերբ աստղերը թփերից պոկված սպիտակ ծաղիկների նման թափվում են մաքրամաքուր յերկընքում, նրանք սիրում են պարել պարել ալիք աստղերի տակ: Նրանց վոաները կալթում են զետնի վրա, ինչպես մակուկը ջրում:

**

Իզաբելլա Սերրանոն Անդալուզիայից եր, Սեփիայի մոտիկ գլուղերից: Նա մտավ նավ լիսսաքոնի նավահանգստից: Գնում եր Ամերիկա: Նրան ընկերանում եր մի ագենտ, վորը տեսել եր իզաբելլա Սերրանոյին Սեփիայի մոտիկ մի գյուղում, ժողովրդա-

կան տոներից մեկում պարելիս: Ազենտը ցիլինդրավոր, խորշոմած դեմքով, խորամանկ, փոքրիկ աչքերով, փոքրիկ վոլորված բեզերով մի մարդ եր Բուենոս-Այրեսից, վորը գնացել եր Սպանիա հատկապես առևտրական նպատակներով: Յերբ իզաբելլա Սերրանոն վոտը դրեց նավի վրա, ամերիկյան թերթերի թղթակիցները ըրջապատեցին աղենտին, տեղեկություններ ստացան իզաբելլա Սերրանով նասին և աճատարեցին հեռագրել Ամերիկա:

**

Հարավի արևը կարծես կաթիլ առ կաթիլ սուզվել եր իզաբելլա Սերրանով մարմնի մեջ, այնքան վողորկ, ջերմագին և անփայլ եր նրա մարմինը:

Նրա աչքերը սկ ելին, պալմայի տերենների նման մուգ, յերկար և սուր թարթիչներով, մազերը թափվել եյին բաց ուսերի վրա, հագել եր թեթև կարմիր բլուզ, կապույտ և կարճ քղանցքներ, ծնկները բաց, կարճ և կապույտ գուլպաններով:

**

Ընթրիքին իզաբելլա Սերրանոն, իր ազենտի հետ սիասին, նստել եր սեղանին: Նրանց դիմաց նստած եր մի յերիտասարդ, յերկար մազերով: Յերիտասարդը բարի և խոհուն աչքեր ուներ: Ծխամորճը բերանին՝ նա ինչ-վոր մտքերով եր տարվել բայց յերբ նշմարեց իզաբելլային, աչքերը հառեց նրան, կարծես զտավ նա իր կորցրած մտքերի թելը: Իզաբելլան բարձրացաւ թերթերունքները և նայեց յերիտասարդին: Յերեց թերթերունքները շարունակեց նայել իզաբելլային, վոր պալմայի տերենների նման մուգ, յերկար և սկ թար-

թիշներ ուներ, վորոնք ստվերում ելին նրա աչքերի խորքը:

Եերբ իզաբելլան ընթրիքը վերջացրեց, վոտի կանգնեց մի կարմիր խնձոր ձեռքին: Ագեհսը նրա մահիշակագույն ուսնոցը նետեց նրա ուսերին: Նա դարձավ յերիտասարդին և ժպտաց: Յերիտասարդն անմիջապես վոտի կանգնեց, խոնարհվեց, մինչև իզաբելլան հեռացավ:

Ժպիտը յերևաց իզաբելլայի դեմքի վրա, ինչպես առաջին աստղն և բացվում պաղպաջուն յերկնքում: Նա քայլեց և հեռացավ, ինչու մակուէկը ջրում:

Առավոտյան նախաճաշին իզաբելլան մենակ եր: Ծովին որորում եր նավը թեթև փետուրի նման: Ճամփորդների իննուուն տոկոսը չէր կարողացել հեռանալ անկողնից: Մութ եր առավոտը, բայց շոգենավի ճաշադահճում վառվում եր ջահը: Դուրսը կատաղել ելին մուգ-կապուտ կոհակները, ծեծում ելին նավի կողերը:

— Դոննա իզաբելլա, յեղել եք դուք Ամերիկայում, — հարցրեց յերիտասարդը:

— Դուք վհրտեղից գիտեք իս անունը:

— Առավոտյան թերթից, չի՞ք կարզացել թերթը, — հարցրեց յերիտասարդը և յերկարեց նրան նավի թերթիկը:

Իզաբելլա Սերբանոն արագորեն նայեց թերթիկի վրա և գառնալով յերիտասարդին:

— Վհչ, — ասաց, — առաջին անգամն ե, վոր գուրս եմ գալիս Ամերիկա, առաջին անգամն ե, վոր գուրս եմ գալիս Անդառողիալից:

Յերիտասարդն ելի նոյեց նրան, նո կարծես ճանաչեց իզաբելլա Սերբանութին:

Նախաճաշից հետո նրանք յերկուսով բարձրացան վերև և կանգնեցին նավի կամրջի վրա: Ծովը մանչում եր, փրփրելախ կոհակներ ելին բարձրանում: Նրանք որորվում ելին բաց և մոալ ծովում:

— Ի՞նչպես ե ձեր անունը, — հարցրեց իզաբելլան յերիտասարդին:

— Եմիլ:

— Ազգանունը:

— Ալմբանը բավական ե, Փրանսիացի լեմ, — վերջացրեց յերիտասարդը:

— Դուք խորհրդավոր մարդ եք, առանց ազգանունի, — հարեց իզաբելլան:

— Յս գաղտնի լեմ գնում Ամերիկա, միայն այսքանն իմացեք, զոննա իզաբելլա, — բարի տոնով պատասխանեց յերիտասարդը:

Իզաբելլան չուզեց շարունակել և խորը փոխելով՝ հարեց.

— Ծովը կատաղի լի, բայց լես սիրում եմ կատաղի ծովը:

— Ամերիկյան կյանքն ել կտտաղի լի, ինչպես այս ծովը: Դոննա իզաբելլա, զգուշ յեղեք այդ կատաղի կյանքում:

Հանկարծ մոալվեցին իզաբելլայի աչքերը, Ապա նա պատմեց, վոր ինքը մի գուղացի աղջիկ ե, ագնաց տեսել ե իրեն պարելիս, ծանոթացել, յեկել ե գենաը տեսել ե իրեն պարելիս, ծանոթացել, յեկել ե իր մոր մոտ, առատ փող ե տվել և մի տարով պայտիր մուգօրվել ե տանելու իրեն Ամերիկա՝ պարելու համար:

— Մի տարուց պետք ե վերադառնամ Անդա-
լուզիա, — վճռական տոնով վերջացրեց իգարելլան:

— Միթե կարիք ունելիք աղենտի տված փո-
ղին, — հարցրեց Եմիլը:

— Այս, մեծ կարիք ունելինք. հայրս նոր եր
մեռել, բուլուս փոքր են, իսկ մայրս՝ բոլորովին ան-
պաշտպան:

— Ամերիկայում զգուշ յեղեք, գոնսա իգարելլա,
Ամերիկայում այնքան փող կա, վորքան գինի — Ան-
դալուզիայում:

Իգարելլան նորից նաև Եմիլին, և իգարելլայի
նախածն այնքան մոռալ եր, վորքան ծովը:

Նավի ճառաչողներից մեկը մոտեցավ իգարել-
լալին:

— Մյուսայո դը-Վալերան ձեզ խնդրում ե, — ասաց:

— Շուտով կվերադառնամ, — հարց իգարել-
լան Եմիլին և իջավ կամրջակից ներքեւ:

Սանդուղքներից իջնելիս՝ քառին թոցնում եր
նրա մանիշակագույն ուսանոցը, և նա նման եր թե-
վատարած թռչող առասպելական թռչունի:

Եմիլը դեռևս կանգնած եր կամրջակի վրա և
դիտում եր արեւը, վոր նայում եր նոր ձեղքված մի
ամպի միջից, յերբ իգարելլան վերադարձավ:

— Դը-Վալերան գլուխը չի կարող բարձրացնել
անկողնից.

— Ինչու յե ձեզ կանչել, դոնսա իգարելլա:

— Ցանկացել ե տեսնել ինձ, ուրիշ վոչինչ:

— Նա նայում ե ձեզ վրա, ինչպես վաճառականն

եր ապրանքի վրա, — ասաց Եմիլը:

— Ինչու յեք այդպես կարծում, նա շատ բարի

յե գեղի ինձ և դեպի իմ ընտանիքը:

— Այս, այնքան ժամանակ, վորքան դուք կը-
կարողանաք պարել, — պատասխանեց Եմիլը:

— Դուք այնքան բարի աչքեր ունեք, բայց չար-
բաներ եք ասում, — հարց իգարելլան մոայլ և աը-
խուր:

— Իմ ասածները չար չեն, միայն ցանկանում
եմ, վոր զգուշ լինեք հրդեհից, վորպեսզի հանկարծ չը-
բանկվեն ձեր սեառատ մաղերը:

— Դուք ինչ գործով եք զբաղվում, — հարցրեց
իգարելլան:

Բանաստեղծ եմ, — պատասխանեց Եմիլը:

Արել փալում եր լեղակի գույն ովկիութի ալիք-
ների վրա, բայց իգարելլա Սերբանոն մոայլ եր ինչ-
պես առավոտյան ծովը:

* *

Յերեկո յեր, յերբ շողենավր հասավ Նլու-Յորկի
հավաճանգիստր: Վիթխարի հրդեհի նման վառվում եր
Նլու-Յորկը: Բոլոր ճամպորդները տախտակամածի վրու-
իկին: Ֆրանսիացի բանաստեղծը և Անդալուզիայի
զեղջունին կանգնել ելին նավի առաջակողմում և
դիտում ելին ահավոր քաղաքը:

— Ահա Նլու-Յորկը, — ասաց ֆրանսիացի բանա-
ստեղծը:

— Յես կկորչեմ այս մեծ քաղաքում, — մըմնչաց
իգարելլան:

— Ամբողջ Նլու-Յորկը ճանաչում ե ձեզ հիմա, —
շարունակից բանաստեղծը, — բոլոր թերթերը հիմա
հրատարակած կլինեն ձեր լուսանկարը. ձեր ագենտը
շատ ճարպիկ ե:

— Դուք ելի սկսեցիք ձեր չար խոսքերը:

— Յես յեղել եմ այս յերկրում, տեսել եմ այս յերկրը հաստակից մինչև վերև, մինչև վոսկեզոծ կեղտոտությունները, ելի յեմ ասում, զգնւշ յեղեք, դժոննա իզաբելա, վերցրեք միայն այնքան դրվար, վորքան հարկավոր ե ձեզ և ձեր ընտանիքի համար և շնոր, շատ շուտ վերադարձեք Անդալուզիա:

Նավը կանգ առավ, խարիսխները ձգվեցին վայրենի ոփթմով: Համպօրդները բոլորն ել իրարանցման մեջ ելին, բոլորն ել աճապարում ելին դուրս գալ: Իզաբելան և բանաստեղծը դարձան յետ նայեցին և տեսան դը-Վալերալին՝ շրջապատված նոր մարդկանցով: Այդ նոր մարդիկ ելի թղթակիցներ ելին, վորոնք յեկել ելին նավ հատկապես տեղեկություններ ստանալու համար սպանացի պարունու մասին: Ազենտը նրանց ծանոթացրեց իզաբելլայի հետ: Իզաբելան յերկուզով եր նայում արագախոս այդ մարդկանց: Հանկարծ շրջապատեցին իզաբելլա Սերբանոյին լուսանկարչական զործիքներով, փայլեցին բոցավառ լույսեր՝ նկարելու համար: Իզաբելլան բնազրորեն մոտեցավ բանաստեղծին և փսխաց նրան.

— Յես ուզում եմ ձեր հասցեն իմանալ, դուք իմ բարեկամն եք:

— Այժմ հասցե չունեմ, բայց յես ձեզ կգտնեմ: Դը-Վալերան մոտեցավ իզաբելլային: Նրա զեմքի վրա դժգոհություն կար:

— Դուք շատ եք զբաղվում այդ թեթևամիտքանաստեղծով, — ասաց նա:

* *

Նյու-Յորկի «Աստորիա» հյուրանոցը, վորտեղ ագենտը տեղափորեց իզաբելլային, տիսուր եր նրա

շամար: Նա նստել եր լուսամուտի առաջ և դիտում եր Նոր Աշխարհի մեծագույն քաղաքը: Նա հիշում եր Անդամությունները, լուսնիս գիշերները, հիշում եր մորը և գալուզիան, վայերները, հիշում եր լաց լինել: Փոքրիկ քույրերին: Իզաբելլան սկսեց լաց լինել:

Դը-Վալերան չափազանց զբաղված եր իր առանձին սենյակում, ուր ընդունում եր թատրոնական գործիչների և պայմանագրերի կնքում: Կես ժամվա մեջ նա արգեն վաճառել եր իզաբելլայի բոլոր գիշերները — պարեր, անվերջ պարել:

Յերբ դը-Վալերան վերադարձավ իզաբելլայի մոտ, նրա արցունքներն արդեն սառել ելին:

— Դունան իզաբելլա, — սկսեց դը-Վալերան, — ինչպես գիտեք, յես խոստացա ձեզ տարեկան 10,000 դոլար:

— Այս, այդպես ել գրված ե մեր պայմանագրում: յեթե զրանից պակաս ե լինելու, խնդրում եմ վճարեք իմ ձանապարհի ծախսը և յես կվերադառնամ իմ մոր և քույրերի մոտ, գեղի Անդալուզիա: անտեղ լավ եր, այստեղ այնպես խաղաղ եր ու հանդիսաւ:

— Մի ապաճարեք, որնաև իզաբելլա, — վրա ըլվեց դը-Վալերան ժպառուն և կերծ զուրգուրանքով: — յես թեկուղ խոստացել եմ 10,000 դոլար, բայց կայս եմ վճարել ավելի, քան այդ զումարը, վորովհերով եմ զործերը լավ են գնում: Յես ձեզ կվճարեմ 20,000 դոլար տարեկան:

— Ի՞նչ բարի յեք, — բացականչեց իզաբելլան ու ժպառաց: Նրա ժպիտը նման եր մռալլված ծովից հետո ծովի վրա բացվող արևին: Իզաբելլայի աչքերը դարձյալ սկսեցին փայլել ինչպես Անդալուզիայում:

— Սուտ եր նա, — մըթմըթաց ինքն իրեն իզաբելլան:

— Յես հասկանում եմ ձեզ, Դոննա իզաբելլա, — հարեց դը-Վալերան, — Ֆրանսիալի բանաստեղծը ձեզ ստեր եր փչուժ, և դուք հավատում ելիք այդ ստերին և ահաբեկվում: Յես զգուժ ելի, վոր նա ձեզ զանազան պատմություններ եր պատմուժ. բայց լյանքը ցուց կտա, թե ով ե ստախոսը:

— Դուք բարի յեք, — հարեց իզաբելլան անվերապահ անկեղծությամբ:

— Ահա ձեզ 10,000 դոլար իմ խոստումներից և պլյամանագրից դուրս, գեռևս շատ հազարներ կլինեն, յերբ հաջողություն լինի, — գոռոգությամբ հայտարարեց դը-Վալերան և հանձնեց նրան չեկը:

Իզաբելլան խնդրեց դը-Վալերայից, վոր մորը հեռագրի նկու-Յորկ հասնելու մասին:

— Արդեն հեռագրել եմ, — պատասխանեց դը-Վալերան, — և հեռագրով փոխադրել եմ 2.000 դոլար:

— 2 000 դոլար:

— Այս, այս, յես լիովին կկատարեմ իմ խոստումները:

Իզաբելլան ուրախությունից վոստոսեց, ինչպես նոր խաղալիքներ ստացած մանուկ:

Դը-Վալերան ներողություն խնդրեց իզաբելլայից և հեռացավ: Իզաբելլան մնաց մենակ: Նա դարձյալ դուրս նայեց լուսամուտից ահավոր քաղաքին, և նրան թվաց, վոր որորվում ե յերջանիկ և հոտավետ մի յերազում:

Հանկարծ թխկացրին իզաբելլայի սենյակի դուռը, Ներս մտավ մի համազգեստով ծառա, և նրան մատուցեց իրիկնային թերթերի հավելվածները: Իզաբելլան բաց արագ թերթերը և տեսակ իր լուսանկարներն

առաջին եջերուժ: Իզաբելլան սկսեց վորոշ ատելություն զղալ դեպի ֆրանսիացի բանաստեղծը, վոր ճըգնել եր պղտորել իր կրանքը, վոր ճգնել ել եր սկ քողեր քաշել իր յերջանկության վրա: Յերբ դը-Վալերան վիրագարձավ իզաբելլայի մոտ, նա պատմեց նրան բանաստեղծի ասածները:

— Նա ասում եր, — ասաց իզաբելլան, — վոր դուք նայում եք իւ վրա ինչպես վաճառականն իր ապրանքի վրա:

Դը-Վալերան հեգնորեն, բարձր և կոպիտ հոհուց:

— Խեղճ անմիտ բանաստեղծ, նա կարծում է, վոր փողը միեւնույն նշանակությունն ունի մեզ համար, միշտ քաղցած և թեթեամիտ բանաստեղծների հարիչպես քաղցած և անմիջապես աճապարեց դեպի մար:

Խոսակցությունը յերկար չշարունակվեց, վորով հետեւ ծառան նորից անհանգստացրեց նրանց, ներկայացնելով դը-Վալերային մի այցեատում: Դը-Վալերան կարդաց այցեատումը և անմիջապես աճապարեց դեպի մնակության դահլիճը:

— Ինձ ցանկանում է տեսնել Ամերիկայի ածուխ թագավորի վորդին, — կես ահաբեկված արտասանեց դը-Վալերան և աճապարեց ներքեւ:

Իզաբելլան կասկածեց դը-Վալերայի խոսքի անկեղծությանը:

— Ի՞նչ զոլծ ունի ածուխի թագավորի վորդին իմ ագենտի հետ, — մտածեց իզաբելլան:

Բայց իզաբելլան սիսալվում եր: Խսկապես այցեատումը պատկանում եր Ամերիկայի ածուխի թագավորի վորդուն, մը, Ռոբերտ Շրայտերին:

Յերիտասարդ Շրայտերը համարվում եր նկու-

Յորկի «լ արձը հասարակության» ամենագալառատ ժարդը: Նա ժսիում եր իր հոր վուկու գեղերը, մասնավորապես թատրոնների կուլիսներում, իր մասնավոր ապարանքում և իր տնձնական նավի վրա, վորը կոչվում եր «Պոսիգոն»:

Դը-Վալերան ներկայացավ մը. Շրաբտերին ընդունելության դահլիճում ժպիտով և խոնարհությամբ:

Յերբ դը-Վալերան վերադարձավ դահլիճից, հայտնեց իզարելլալին, վոր իր նյու Յորկի առաջին յելութից հետո՝ հյուրասիրվելու յէ ածուխի թագավորի վորդու անձնական նավին վրա:

— Այժմ, — չարունակեց նա, — պետք և գնանք ներքեւ և ծանոթանանք մը. Շրաբտերի հետ:

Իզարելլա Սերբանոն ագենտի հետ գնաց դահլիճ փոստուն քայլերով: Դահլիճում դիմավորեց նրան ածուխի թագավորի վորդին, Նյու-Յորկի բարձր հասարակության ամենագալանտ մարդը: Իզարելլան մոռացավ ամեն ինչ, միայն հիշեց, վոր այժմ յիրջանիկ են իր մայրը և քույրերը, վորոնք այժմ փող ունեն, հիշեց, վոր պարտք չունեն, հիշեց, վոր իր քույրերը պարում են ուրախ՝ Անդալուզիայի լուսնկա գիշերներին:

— Յես ձեր անունը լսել եմ, — ասաց մը. Շրաբտերը իզարելլալին, — ցանկանում ելի ահմանել ձեզ: Ամերիկան հյուրասիր յիրկիր և, մասնավանդ ձեզ նման արվեստագետների համար:

Իզարելլալի համար պարզապես ապշեցուցիչ եր ածուխի արքալի վորդու պարզությունը, նա խոսում եր հասարակ մարդու նման:

*
Առավոտյան իզարելլան և Շրաբտերը շրջում են նյու-Յորկում: Պատերի վրա, լուրաքանչյուր փողոցում, թերթերում, կաֆեներում, տրամվայներում, ստորերկրյա տրամվայների կայարաններում, ճաշարաններում, քաղաքի ամեն մի կետում փակցված են իզարելլա Սերբանոյի ափիշաները:

Եզաքելլա Սերբանոն

պարելու յես սպանական

Փանտասիկ պարել

1. «Թեգալուզիայի արեվածագը»,

2. «Միրս փորորիկը»,

3. «Մովք»:

Մը. Շրաբտերի շոփերը կանգ առաջ Հըդուն գետի ափին մի ճաշարանի առաջ: Մը. Շրայտերը թեթև բանեց իզարելլայի թիկից և ցած իջեցրեց նրան: Այստեղ կճաշենք, յիթե հավանեք, ասաց Շրայտերը:

— Լավ, — համաձայնվեց իզարելլան:

— Մենք Անդալուզիայի գինի չունենք, բայց ունենք Բորդո, — հարեց Շրայտերը: Իզարելլան խմեց Բորդոն Անդալուզիայի գինու ցանկությամբ:

Մը. Շրաբտերը յերկար նայեց նրա մուգ աչքերին, վողորկ և թուխ թևերին, նայեց նրա պալմայի տերեների նման մուգ, յերկար և սուր թարթիչներին և կծեց իր ցանկագրությունը ըթունքները: Յերբ վիրջացը ըստ աշըլ, մը. Շրաբտերը մի հարյուրանոց նետեց սպասագրին, և նրանք դուրս յեկան: Ավառյի մեջ

իգաբելլան հեշտանք եր զգում, ամեն բան սրան յերադի նման եր թվում, ամեն բան ուրախ և թեթև։
Հյուրանոցի դահլիճում Ա-Վալերան դիմավորեց սրանց ժպիտով և քննանքով։

— Կյանքը գեղեցիկ է, չէ՞ — հարցրեց նա իդա-
բելամին:

Իզաբելլան չպատճսիսկիում

— Յերիտասարդ լիդին պետք և հանգստանա, —
մը. Շրայտերը:

իզարելլան ներողություն խնդրեց հեռանալու։
Յերբ սա ձեռքը յերկարեց մը, Շրայտերին, սա պինդ
բռնեց և յերկար համբուրեց իզարելլայի ձեռքը։ Իզա-
րելլայի հեռանալուց հետո՝

— Այսպիսի յերջանկության յեօ յերբեք չեմ
հանդիպել իմ կյանքում, —խոստովանեց Շրայտերը:
Դը-Վալերան ատամները բաց արած՝ ձախ ձեռ-
քով իր փոքրիկ բեղերը վոլորեց և ժպտագեմ պա-
տասխանեց.

— Ինչպես վոր կամենում եք, մը. Շբալտիո,

և 15.000 դոլարի մեջ չեկ գրելով՝ հանձնեց զբաւելքային:

— Խակ Ճեղ կտեսնեմ Տիառ, — ասաց մի. Շրայ-
տերը դիմակարարն:

Մր. Շրաբները հեռանալուց առաջ հանձնեց նաև
մի պայքառում՝ վրան զրած: Դը-Վալերան աճապարան-
քով կարգաց տոմսը—«Պի մոռանաք՝ ծովի գիշերը»:
Կարդալուց հետո աճապարեց վեր: Իզարելան ընկել
եր անկողնի վրա և հանգստանում եռ:

Դոննա իզաբելլա, բացականչեց գը-վարե-

բան, վորից Իզաբելլան ընդուստ կեր ցատկեց. —Ամերիկայի ածուխի արքայի վորդին սիրում ե ձեզ, ահա սիրո ապացուց:

Ագենտը նրան հանձնեց սիրո ապացուցը - 15.000 դոլարը և այցելում մար:

— զեմ հասկանում — ծովի գիշերը... — մըմնջաց
իզաբելլան:

— զե՞ս վոր մենք նրա հյուրն ենք լինելու իր անձնական նավի վրա, ձեր առաջին լեռութից հետո, — ապատասխանեց դրավագլերան:

իզմարել այս լւ և լու համար կար նայեց տարածության մեջ և
ժպարելլան յերկար նայեց տարածության մեջ և

2

ԳՐԱԺՈՅԵՆ

Իզարելան ալիս վոշինչ չտեսավ, միայն զգաց,
վոր մթնշաղային բեմի վրա սահում են իր վոտները
թեթևորն և ավելի ու ավելի լին արագանում հետզ-
հետեւ բացվող լուսերի մեջ: Մթնշաղը պայծառա-
նում եր, արեածագն եր, արեածագն Անդալուզիա-
յում: Իզարելայի մարմինն սկսեց փոթորկվել փո-
թորկվել այնպես, ինչպես արեն և փոթորկվում Անդա-
լուզիայում, նրա թերեն ուղիղ վեր եյին բարձրացած,
ամբողջ մարմինը գալարվում եր վեր, ուղիղ ինչպես
արեի շողը, ինչպես նետը սլացիկ գեպի վեր, ինչպես
յերկինք թոչող մարմարը գոթական կառուցվածքի:
Հանկարծ իզարելան կծկվեց հատակին և սկսեց գեպի
վեր բարձրանալ հետո կանգնեց՝ գլուխը լետե զցած,
իրանը՝ առաջ, սրունքները՝ կորացրած, ճիշտ նման
հարցական նշանի: Շողերն ավելի առատությանը
թափվեցին բեմի վրա, և իզարելան շարունակեց
խոռվահույզ, ալեկոծ և խելակորույս պարը արեի
ծագման:

Դահլիճը վորոտաց, ինչպես ծովը եր վորոտում
միքանի որ առաջ:

Քրտինքը, կաթիլ առ կաթիլ, վազում եր իզա-
րելայի քունքերից, ինչպես զարնանակին ցողը կանաչ
տերեի վրա:

Զարդասենակում դը-Վալերան կռացավ և համ-
րուրեց իզարելայի վոտները:

— Որհնալ ե քո մայրը, զոնսա իզարելա, որհ-
նալ ե քո ծնունդը, դոնսա իզարելա, — բացականչեց
դը-Վալերան:

Ծափահարությունները շարունակվում եյին: Իզա-
րելան յերեաց բեմի վրա: Դահլիճը լցվեց ծափահա-
րությամբ և բեմը՝ ծաղիկներով:

Յերբ իզարելան վերադարձավ զարդասենակ, ու-
վալերան հայտնեց նրան, վոր բեմը լցրել և ծաղիկ-
ներով ինքը՝ Ամերիկալի ածուխի արքայի վորդին:
— Նա գահիճմում ե, — հարցրեց իզարելան:
— Մթիթի չտեսաք նրան, աջ կողմի ոթյակում:
— Վո՞չ, յիս վնչվորի չտեսա:

* *

«Պոսիդոն»-ը կանգնել եր նվու Յորկի նավահան-
գը սուում և սպասում եր մր. Շրայտերի հրամանին՝
բաց ծով գուրս գալու համար: Իզարելա Սերբանոն
կիսամերկ, փաթաթված յերկար վերարկուի մեջ, ուռու
լեկավ թատրոնից և մտավ մր. Շրայտերի ավտոյի
մեջ: Մր. Շրայտերը վաղուց սպասում եր նրան:
Նրանցից առաջ նաև ելին գնացել նյու Յորկի «բարձր
հասարակության» անդամներից մոտ հիսուն հոգի:

Նավի ջահաղարդ դահլիճը լուսավորված եր տո-
նական որվա նման: Յերբ իզարելա Սերբանոն և մր
Ռոբերտ Շրայտերը նավ մտան, հյուրերը նրանց զի-
մավորեցին ծափահարություններով: Սպասուհիները
թարմ ծաղիկներով և բուրումնավետ ջրերով վողողեցին
սպանացի պարունուն և Ամերիկալի ածուխի արքայի
վորդուն:

Իզարելան վերացել եր. նա զգում եր, վոր այս
բոլորն իր համար եր — իր հաղթանակը:

Դը-Վալերան շողոքորթ շնիկի նման դառնում եր
մր. Շրայտերի շուրջը և ժամանով հաճուախոսու-
թյուններ անում նրան, հիշելով, վոր մր. Շրայտերն
ասել եր. «Իսկ ձեզ տեսնեմ հետո»: Դը-Վալերան
գիտեր, վոր իր ծափահարությունները կվարձատրվեն

լիովին, վոր ինքը կհագենա փողից և նվերներից: Մը. Շրայտերի կարգադրությամբ նավի փոքրիկ որկեսարն սկսեց նվագել պարի լեղանակ: Իզարելան վերարկուն նետեց ուսերից և սկսեց պարել: Նրա ալս պարն տվելի լեզենդային, ավելի սրտազին եր, քան այն պարերը, վոր պարել եր այդ յերեկո Բրոդուելի հասարակության համար:

Նավը ճեղքում եր Առլանտիայի լեղակի մուղ ալիքները, որկեսարը նվագում եր, իզարելան՝ պարում, հյուրերը ծափանարում ելին խելահեղ, իսկ մը. Շրայտերը տրորում եր ցանկությունից փրփրած իր շրթունքներն ատամներով:

**

Շրայտերը ծծում եր իզարելայի շրջունքները, ծծում եր հարավի արևը նրա շրջունքներից, հարավի արևը, վոր, կաթիլ առ կաթիլ, սուզվել եր նրա թուխ մարմնի մեջ:

Հրամայիր, վոր նավը քշեն մինչև Անդալուզիա, - մրմիջում եր իզարելան Շրայտերի գրկում, իսկ Ամերիկայի ածուխի արքայի վորդին ծծում եր նրա շրթունքներից հարավի արևը, վոր, կաթիլ առ կաթիլ սուզվել եր նրա թուխ մարմնի մեջ:

Դահլիճը տակն ու վրա յեր, Հյուրերից վոմանք ընկել ելին թափշա հեշտաթոռների վրա և հարածությունից չելին կարողացել վեր կենաւ սեղանի ծաղիկների թաղարները կործանվել ելին և հատակին կոխոտվել, շշերը թափվել ելին և կոտրտվել, կոնսերվաները թափված ելին ամեն կողմ, մի բարձր ջրաշուշան կանգնած եր գեռևս սեղանի անկյունում և տխուր նայում եր գահիճի ավերակին:

Այդ դահլիճը տեսնողը կարող եր գուշակել այն դաժան որգիան, վոր տեղի յեր ունեցել նոր Աշխարհում հին աշխարհի ձեռվի:

Առավոտյան նավը կանգ առավ Մեյնի ափերին: Իզարելան դուրս յեկավ նավից մը. Շրայտերի հետ՝ տրորված, նման ծաղիկներին, վոր կործանված եյին և թափված հատակին: Իզարելայի աչքերի վրա պղտորսության մի քող եր իջել, միայն հանդարտորեն փակվում և բացվում ելին պալմայի տերեների նման մուգ, յերկար և սուր նրա թարթիչները:

**

Իզարելան շարունակեց պարել համաձայն դըվալերայի կնքած պայմանագրի: Մը Շրայտերը մուացավ իզարելային, զոլլարները նոր զգայություններ պարտադրեցին նրան: Դըվալերան ծանոթացրեց սպանացի պարուհուն նորանոր փոքր և մեծ Շրայտերների հետ:

Թափվեցին Անդալուզիայի գեղջկունու աչքերի աստղերը հատիկա-հատիկ: Իզարելան սկսեց ապրել եր վաղահաս տերեաթափը: Վողբագին և աղեկտուր: Նրա ճակատից դեղին տերեներ ընկան: Նրա մարմինը կորցրեց իր ճկունությունն ու ալացիկությունը, սըրությունները կապարացան, նրա արևոծագի վառը չուզեց հասարակությունը: միայն միքանի բարի ձեռքեր ծափահարեցին ի հիշատակ հին, վաղեմի պարունու:

**

Տարիներ անցան:

Իզարելա Սերբանոն Ցնաց մենակ և տխուր:

Նրա թերթերունքները փակվում ելին աչքերի

վրա, ինչպես կափարիչն և փակվում մահկամարդ աղջըկա դագաղի վրա:

Մի որ նա նստել եր իր սենյակի անկյունում,
հայելին ձեռքը դիտում եր իր տվերված դեմքը, յերբ
մի այցետում ստացավ, նրա աչքերը վայրկենաբար
վառվեցին:

— Ներս, ներս հրավիրիր իմ վաղեմի բարեկա-
մին, — ասաց իր աղախնին:

Ֆրանսիացի բանաստեղծն եր:

Նրանք փաթաթվեցին իրար այնպիս սեղմ, այն-
պիս անբաժանելի, ինչպես լուսն ու տաքությունը:

Արցունքները խեղդվեցին իզարել լլայի կոկոր-
դում, նո նայեց եմիլին թարմացած և վերածնված:
Նա բարձրացրեց պալմայի մուգ, յերկար և սուր տե-
րևների նման իր թարթիչները և զորովագին հարեց
բանաստեղծին.

— Դու ասում եյիր՝ զգուշ յեղիր տուաջին
քայլեց, բայց ինս արի առաջին և բոլոր քայլերը, —
մրմիջաց իզարելլան:

— Վերադարձիր Անդալուզիա, վերադարձիր դե-
պի Անդալուզիայի ժողովրդական տոները, այժմ ճա-
նաչում ես Ամերիկայի վուկեղոծ կեղար, — շնչաց
բանաստեղծ:

Նրանք փաթաթվեցին իրար այնպիս սեղմ և այն-
պիս անբաժանելի, ինչպես լուսն ու տաքությունը:

ԱՐԱԲԱԿԱՆ ԲԱԼԼԱԴԱ

1.

Մի որ Ուինալըն տեղական գորգի վաճառատան
արեելլան զորդերի բաժանմունքում, ուր յես ծառա-
յում եյի, ստիպված լեզա մի հաճախորդի արեելլան
զորդեր ցույց տալ վորովհեակ բոլոր վաճառզներն եւ
զբաղված ելին: Հաճախորդը միքանի թանգագին
զբաղված չոկեց և իր այցետումը տալով ինձ՝ ասաց.
զորդեր ջոկեց և իր այցետումը տալով ինձ՝ ասաց.

— Արեելլան զորդերի մասին իմ կինս ավելի
շատ ծանոթություն ունի, քան յես. խնդրում եմ, յե-
շատ ծանոթություն ունի, նրան ևս զորդեր ցույց
թե վաղը նա զա այստեղ, նրան ևս զորդեր ցույց
տվեք, հատկապես ցույց տվեք և իմ ընտրած զորդե-
պի, զբանցից մեկն ու մեկը թող վերցնի: Վորը վոր
հավանի, ուզարկեցէք մեր բնակարանը, ամսի գլուխին
կուղարկեմ ձեզ համապատասխան չեկը:

— Շատ լավ, շատ լավ, — ասացի:
Հաճախորդն իմ ազգանունը վերցրեց և գնաց:
Նրա այցետումսից պարզվեց, զոր նա Նյու-Յորկի
ջալլամի փետուրի հայտնի վաճառականներից՝ մու-
ռւարդություն Ելլան եր:

— Յերկի տիկին Ելլան Արևելք այցելած կա-
նանցից ե, զոր կարծում ե, թե՝ Ելլանով Արևելքում
ծանոթություն կունենա և արեելլան զորդերի մասին,
մտածեցի:

Հաջորդ որն իսկ, առավոտյան ժամը 11-ին մեր

բաժանմունքը մտավ մի կին: Վաճառողներից մեկը մոտեցավ նրան, բարեց և աթոռ առաջարկեց: Կինը վաճառողի բարեկին գլխով պատասխանեց և պայուսակի միջից մի թուղթ հանելով, ցույց տվեց վաճառողին: Վաճառողն անմիջապես նշան արեց ինձ մոտենալու:

- Բարի լուս, — ասաց տիկինն ինձ:
- Բարի լուս, — պատասխանեցի:
- Յես տիկին Շիլդն եմ, — ասաց տիկինը:
- Ո՞, այո, յես գորգեր ունեմ ձեզ ցույց տալու:

Տիկին Շիլդը թուխ սեասև աչքերով կաթնալին սպիտակուցով բարեձե, ճկուն հասակով և տխուր նայվածով մի կին եր: Նրա աչքերն արտակարգ փայլ ունելին, կարծես մի լուսաստղ քամած լինելին նրա աչքերում, նայելիս տխուր ժպտում եր, կարծես մի շուշան լիներ մշուշում:

Նա նատեց աթուին, մինչդեռ յես սկսեցի մր. Շիլդի ջոկած գորգերը ցույց տալ: Տիկին Շիլդը խոսում եր մաքուր գրական անգլերենով, բայց ոտարականի շեշտերով:

— Գիտեք, — ասաց տիկին Շիլդը, — յես թեև արեւելցի յեմ, բայց արեւելյան գորգերի մասին վոչ մի գաղափար չունեմ. ամուսինս համոզված ե, վոր յիս իրանից ավելի լավը կջոկեմ, դրա համար ինձ ե ուղարկել այստեղ բայց հույս ունեմ, վոր դուք ինձ կոգնեք, և յես չեմ խալառակի իմ ամուսնու առաջ:

— Յեթք այդպիս ե, տիկին, թույլ տվեք այս բոլոր գորգերը ծալել և մի կողմ դնել միասին ջուկենք մի գորգ, վոր վնչ միայն չխալառակի ձեզ, այլև...

— Միայն չխալառակի եմ ուզում, — ընդմիջեց տիկին Շիլդը:

Յես սկսեցի վորոնել մի հազվագյուտ զորգ, վորապեսզի խոստում կատարած լինեմ: Տիկին Շիլդը սփոված գորգերին այնքան ուշազբությամբ չեր նայում, վորքան ինձ եր դիտում իր ջերմագին աչքերով: Ըստ յերեսութին նա ուսումնասիրում եր ինձ, թե՝ արդյոք յս այն մարդն եմ, վոր կկատարի իր խոստումը, վորպեսզի ինքը չխալառակի ամուսնու առաջ: Տիկին Շիլդի համար յես ջոկեցի մի Սարուգ, կակուղ բրդի տեսակից, կապույտ ֆոնով և մարջանի կարմիր ծաղիկներով:

— Ի՞նչ արժե, — հարցրեց տիկինը:

— Թանգ ե, տիկին, 300 դոլար արժե, — պատասխանեցի, — բայց վորովհետեւ ձեր ամուսինը չեր ցանկանում 200 դոլարից ավել հատկացնել յես այնպես կկարգադրեմ, վոր դուք այս գորզը վերցրած լինեք մեր անցյալ շարաթվա վաճառքից:

— Իսկ յեթե այդպիս լինի, — հետաքրքրվեց տիկինը:

— Վաճառքի գեղը 40 տոկոս եր, ուրեմն կարծենա 180 դոլար:

Տիկին Շիլդի աչքերն արտահայտեցին շնորհակալություն և յերախտագիտություն:

— Խնդրում եմ ուղարկել այս գորգը մեր տուն, — ասաց Տիկին Շիլդը, — յես կանխիկ կվճարեմ զրա արժեքը:

— Մը. Շիլդը չեկը կուղարկի ամսի գլխին, այդպես ել խոստացել ե, նեղություն մի քաշեք:

— Վաչ, վհչ, յես այժմ կվճարեմ, ունեմ այդքան զրամ, կարող եմ վճարել:

Տիկին Շիլդը հանձնեց փողը՝ յես ուղարկեցի ֆիւտնսական բաժինը:

— Այսոր կարժեց եք ուղարկել, — հարցրեց տիկինը:

— Մինչև դուք տուն համար, գորզը կլինի տառ, տիկին, — պատասխանեցի:

Իմ հետաքրքրությունը չափաղանց աճել եր արդեն իմանալու համար, թէ տիկին Շիլդը Արեւելքի վորմասից եր, քանի վոր արեւելցի յեր:

— Ներեցք, տիկին, — համարձակվեցի յես, — Արեւելքի վրա մասից եք յեկել դուք:

— Արարիայից:

— Արարիայից:

— Եյ՞ յես արար եմ, — պատասխանեց տիկին Շիլդը և խորը հառաջեց:

Այդ հառաջանքի մեջ յես զգացի, վոր մի վողքի պատմություն եր թագնված. ինձ այնպես թվաց, վոր այդ հառաջանքը մի յեղերեզի վերջին ակնորդն եր:

Յերկար և կարոտագին նայեցի նրա սեասկ աշքերին — կամարված սկ և նուրբ հոնքերով և կաթնային սպիտակուցով:

— Դժւք ել արեւելցի յեք, — հարցրեց տիկին Շիլդը:

— Այն, տիկին, Թյուրքիայից:

Յերբ նա իմացավ, վոր յես Թյուրքիայից եմ, կարոտով նայեց ինձ և շշնջաց.

— Սելամ...

— Սելամ...

Նրա վողջունը մի խուրձ շող եր, վոր փաթաթվեց իմ հոգուն:

— Բավական ժամանակ ե, վոր Ամերիկայում եք:

— Մոտ ութ տարի:

Գոհհ եք Ամերիկայից:

— Ինչպես կարող եմ գոհ լինել, — բացականչեց նա և մտավ վերելակը, վորի գոնակը այդ բողելին բացվեց և դեպի ներքեւ եր գնում:

Վերելակում կանգնած ամերիկոների մեջ նա ջոկվեց՝ ինչպես լուսաստղն և չոկվում ամբողջ յերկու կոնքում:

2.

Միքանի որ հետո տիկին Շիլդը նորից հայտնվեց մեր բաժանմունքում: Յես անմիջապես ընդուածեցի նրան:

— Գորդ չեմ գնելու, — անմիջապես վրա տվեց տիկին Շիլդը, — յիկի և միայն ձեզ տեսնելու:

— Յես ցանկանում եյի հեռախոսել, տիկին, և հրավիրել ձեզ թյուրքական սուրճ խմելու, բայց, ձշմարիտն ասած՝ համարձակվեցի:

— Այստեղ կան սրճարաններ, — հարցրեց տիկին Շիլդը անձկագին:

— Այն, կան:

— Գնանք, — առաջարկեց տիկին Շիլդը մանկական և հին ուրախությամբ:

Մենք միասին գնացինք «Constantinople» ճաշաբան-սրճարանը, վորաեղ թյուրքական լոով վորակի սուրճ ելին մատակարարում:

«Կոնստանտինոպլ»-ում տիկին Շիլդը պատմեց, վոր իր ամուսինը, լինելով ջայլամի փետուրի վաճառական՝ փետուրի գնումներ կատարելու համար հաճախ այցելել և Արեւելք - Արտօնիա, Հարեշստան, Յեճական պատու, մինչև անգամ չողկաստան: Ինքը յեղել և գիպոտու, մինչև անգամ չողկաստան: Ինքը յեղել և մի վորը աղջիկ, գրիթե փողոցներում թափառելիս:

մր. Շիլդը տեսել է իրան, հավանել և առաջարկել է
դաշտ Ամերիկա և ամուսնանալ իր հետ:

— Աղքատ եյի, ընդունեցի մր. Շիլդի առաջար-
կությունը և ահա նրա կինն եմ, — վերջացրեց տիկին Շիլդը:

— Բայց ի՞նչ բախտավոր եք, տիկին, — հարեցի
անմիջապես, — վորբությունից և աղքատությունից հե-
տո՝ այս հարստությունը, այս ճոխությունը և...

— Խնդրում եմ չխոսել այդ հարստության մա-
սին, — ընդմիջեց տիկին Շիլդը, — յես կարոտել եմ Արա-
բան, կարոտել եմ մեր ավագները, մեր ձիերը, կա-
րոտել եմ արմավենիները, կարոտել եմ մեր լեզուն:

Նրա տիրապին աչքերում յես տեսա այն արևի
շողերը, վոր այրում են արաբական ավագուները:

— Յես կոչվում եմ Ելղեմի Բինտ-ել-Թալիբ*).
այժմ ինձ միսիս (տիկին) Շիլդ են կանչում.
անցել են տարիներ, և տակապին չեմ կարողացել
վարժվել այդ անվան: Մր. Շիլդն ինձ այնքան է սի-
րում, վոր ճգնում ե նյու Յորկն ինձ համար ջեննեթ
դարձնել, բայց իդուր:

Ցիրը տիկին Շիլդը խոսում եր, ինձ այնպիս եր
թվում, վոր մի մենավոր արմավենի, հեռավոր անա-
պատում, արտասվում և վողբազին, կարծես խավա-
րում մոռացված մի շող եր արևից բաժանված, զղում
եմ, վոր դեմս նստած ե մի շոշափելի, կիզիչ տիրու-
թյուն:

— Միայն մի ցանկություն ունեմ, — շարունակեց
արաբուհին, — մի որ, ամի, միայն մի որ կարողանալի բո-
րիկ վոտներով ման գալ տաք, ալրող ավագների վրա,

*) Ելղեմե, դուստր Թալիբի:

վոտաբորիկ, բոլորովին վոտաբորիկ, ապա հանդիպե-
յի մի արժավենու, նստեյի նրա զով շվաքի տակ:

— Բինտ-ել-Թալիբ, թհւյլ տվեք ձեզ այդպես կո-
չել...

— Ուզում եմ, վոր այդպես կոչեք. քանի տարի
յի յես այդ անունը չեմ լսել:

— Բինտ-ել-Թալիբ, խնդրեցեք մր. Շիլդից ու-
ղարկել ձեզ Արաբիա միքանի ամսով:

— Վախենում ե, վոր չվերադառնամ. յես բախտ
չեմ ունենալու տեսնելու ավագները, արմավենիները,
ալրող ավագները:

Հարավի այս աննման բույսը մըսում եր հյու-
սիսի սառնամանիքում, կուչ եր գալիս նա հյուսիսի
յերկաթե հողմերի առաջ:

Սրճարանի սպասավորը, արևելյան ավելորդ խո-
նարհումներով, յերկու բաժակ սուրճ զրեց մեր առաջ
և ծերծեքումներով հեռացավ: Թալիբի դուստրը մեղ-
մորեն բարձրացրեց իր աջ ձեռքը, բռնեց նարնջա-
զույն ֆինջանը: Նրա թուխ մատի վրա փայլում եր
մի խոշոր և գոռող աղամանդ: Յես շեշտակի նաևեցի
աղամանդին:

— Արաբիայի մի փշուր ավագը յես չեմ փոխի
այս աղամանդի հետ, անկեղծ եմ ասում:

Յես խորապես հավատացի նրա խոսքի անկեղ-
ծությանը:

Նա սուրճը խմում եր կարոտով, սիրո կարոտով:

— Բինտ-ել-Թալիբ, դուք մի արմավենի յեք այս
հյուսիսում, — ասացի, — զուր ե մր. Շիլդը կարծում,
վոր կարող ե թարմ և կանաչ պահել մի արմավենի
ցեմենտի և բետոնի այս յերկում:

Թալիրի դստեր աչքերից վագեցին արցունքի
խոշոր կաթիլներ, վորոնք ավելի խոր և ավելի պայ-
ծառ ելին, քան նրա մատի գոռողագույն աղամանզը:

— Ատում եմ ավտոմորիլը, — արցունքների միջից
շնչաց Թալիրի դստուրը, — լիներ մի արաբական ձի,
փաթաթվելի նրա վզով և համբուրելի նրան:

Նա խոսում եր հարավի արյունալից սիրով, նրա
ամեն մի խոսքը թաթաված եր հարավի արեգակով:

— Արաբիաից բերել են արաբական նժույգներ, —
ասացի յես, — այս շաբաթվա մեջ պետք և ցուցադրեն
նրանց Նյու-Յորկի հիպոդրոմում, գնանք միասին
տեսնենք:

— Կգամ, միայն մը. Շիլդը չիմանա. Նա կար-
ծում է, վոր տիկին Շիլդին վայել չե կրկես գնալ:

— Ապա թնչակես պիտի կարողանաք գալ:

— Կստեմ, կստեմ պարզապես, կստեմ, վոր ոպե-
րա յեմ գնում. Նա յերաժշտություն չի սիրում, չի ըն-
կերանա:

— Լամ, հեռախոսեցիք ինձ, և մենք կպայմանա-
վորվենք:

Արաբունին բռնեց ձեռքս և պինդ սեղմեց:

3.

Յերբ արաբական նժույգներն սկսեցին սուրա-
հիպոդրոմի ավագուտ բեմի վրա, բոցավառվեցին
արաբունու աչքերը: Նա ապշած և վերացած նայում
եր նրանց լուսարագ վազքին, նրանց կալծակնավագ
թուիչքին, շունչը բռնած, թերելը բացած, նա կարծես
սպասում եր զրկելու իր ամենասիրելուն: Նժույգնե-
րից մեկը լիկավ, կանգնեց մեր առաջ, նայեց ասազա-
պարսուռ աչքերով: Նա կարծես նայում եր հեռու, չի-

ուռ, նրա նայվածքն անսահման հորիզոններ եր ընդ-
դրկում: Այդ նայվածքը կարծես հառում եր մի հեռա-
վոր յերկնքի: Հանկարծ նա վրնջեց: Նրա խրիխնջն
արձագանգն եր Արևելքի հրավառ հորիզոնների: անա-
սունի վրնջունի մեջ զգալի յեր թանձրացյալ մի կա-
րուտ, վոր հնչում եր՝ ինչպիս աղեկտուր մի յերգ:

— Բինտ-ել-Թալիրը, — շնչացաց յիս, — ինչ նման են
ձեր բախտերն իրար, ձեր և այդ անտառնին:

Բինտ-ել-Թալիրը մոռացած, թե վորտեղ և զըտ-
նլվում, հանկարծ բացականչեց մեր առաջ կանգնած
նժույգին:

— Արի, արի, իմ աղիկ:

Այդ բացականչությունը կըակեց իմ սիրար, բո-
ցավառեց իմ մեջ խորը մի կարեկցություն գեալի այդ
թշվառ արաբունին, վաղիմի վորբունին: Նա զգաց,
թշվառ հասկանում եմ իրեն, զգաց, վոր յես արդ'ն թա-
վանցել եմ իր հոգու խորքը: Նա հենվեց ինձ, բռնեց
ձեռքս և, առանց աչքերը նժույգից հեռացնելու, սըդ-
մեց յերկար և արեագին:

Ինձ այնպես թվաց, վոր մենք յերկուսով նստել
ենք արմավենու շվարի տակ արաբական ավաղուտ-
ներում:

Զին վրնջեց յիրկորդ անգամ և թռակ՝ ինչպիս առասպելական թոչուն:

Յերբ արաբական նժույգների արշավը վիրջա-
ցավ, արաբունին խնդրեց ինձ գնալ և խնդրել արա-
բական նժույգների տիրողից, վորպեսզի թուլ աւ ի-
րան զնալու և սիրելու նժույգներից մեկին:

Մեզ առաջնորդեցին ձիերի մոտ: Արաբունին
փաթաթվեց նրանցից մեկի վզով, համբուրեց նրա

վճիտ, պայծառ և հեռահալաց, աչքերը, վորոնց մեջ
հրդեհվում եր հարավի լուսը:

Ուրախ արցունքներով վողովեց արաբուհին նը-
ժույզի փայլուն վիզը, շուկա նրա բաշը, հարյուրավոր
անգամ համբուրեց նրա աչքերը, գգվեց, փայփայեց:
իմաստուն և արաբական ձին, սիրում և զգվանքը:
Նա կռացրեց զլուխը, զունչը քսեց արաբուհու ուսե-
րին ու տիրագին ու յերկար նայեց նրան: Յես հա-
զիվ այդ խեղճ կնոջը բաժանեցի արաբական ձիուց:
Դուրս յերկանք հիպպոդրոմից: Յես տիկին Շիլ-
դին դրի տակսիի մեջ:

Արցունքների մեջ նա հագիվ շշնջաց.

— Շնորհակալ եմ, բարի գիշեր...

— Բարի գիշեր, Բինտ-ել-Թալիր, — ասացի և փա-
կեցի տակսիի դունակը:

4.

Միքանի որ անց տիկին Շիլդը հեռախոսեց ինձ.

— Այս յերեկո յեկեք մեզ մոտ, ամուսինս ցան-
կանում և ձեզ ծանոթանալ ավելի մոտիկից, — ասաց
տիկին Շիլդը:

— Շատ լավ, կգամ, — պատասխանեցի:

Հեռախոսի լսափողից զգացի խորին բավակա-
նության մի շշնջուն: Կարծես զգացի արաբուհու ջեր-
մությունը:

— Այսոր գնացի «Կոնստանտինոպլա» սրճարանը
և սուրճ վերցրի, յերեկուան յես ինքս կպատրաստեմ,
կխմեք:

— Ուրախությամբ, ուրախությամբ:

— Շնուտ յեկեք, մի ուշանաք:

— Եթեր և տուն գալիս մը, Շիլդը:

— Առհասարակ ժամը 7-ին:

— Յես կգամ ժամը 6-ին:

— You are so good, so good*), — բացականչեց
արաբուհին:

— Իսկ դուք այնքան թուխ եք, — պատասխա-
նեցի:

Յերեկոյան ժամը 6-ից միքանի բոպի առաջ
յես արդեն Մենհետալումն եյի: Ուզգակի դիմեցի
դեպի ամելին Շիլդի բնակարանը: Դուռը բաց արակ
արաբուհին ինքը և արձանի նման կանգնեց: Շեմքի
վրա յես սպասեցի և գրկեցի նրան իմ նայվածքով: Նա
գինեգույն յերկար և թեթև շապիկ եր հագել և լայն
գոտիով կապել մեջքը, ուրիշ վոչինչ չուներ հագին:

— Հըլմ...

— Հըլմ...

Նա դուռը փակեց յետեկիցս, կանգնեց դուան հե-
նած և սկսեց ինձ նայել յերկամը:

Յես լցվեցի հանցանքի ուրախությամբ...

Մոտեցա նրան...

Հարբեցա նրան...

**

Պարսն Շիլդը ծայլը աստիճան քաղաքավարու-
թյամբ ընդունեց ինձ, հարցուփորձեր արավ իմ մա-
սին: Վորպեսզի ինձ զարմանք չպատճառի, վորովհե-
տե ամերիկացիները հաղիվ թե այդքան անձնական
կյանքում ցանկանան թափանցել մը. Շիլդն ավելաց-
րեց.

— Այս սովորությունն Արևելքումն եմ սովորել:

— Միթե այդքան յերկար ժամանակ դուք յեղել

* Դուք այնքան բարի յեք, այնքան բարի:

Եթ Արեւելքում, աչնքան, վոր կարողացել եք մինչև
անգամ բարքեր, այն ել վատ բարքեր վորդեզրել
կատակեցի:

Մր. Շիլդն սկսեց պատմել ինձ նողկալի մանրա-
մասնություններով իր ճանապարհորդություններն
Արեւելքում:

Մր. Շիլդը պատմում եր, յերբ արարուհին բե-
րեց իր խոստացած սուրճը փիրուզյա կապույտ ֆին-
ջաններով:

— Եկա Շիլդ, թույլ տվիք ձեղ այս լեռեկո կո-
չել ձեր իսկական անունով:
— Խնդրեմ, ինդրեմ:

Են ժամանակ յս բացականչեցի.

— Բինուելթալիր, դուք ձեղ եք լեփել այս
սուրճի մեջ:

Թալիրի դստեր սպիտակ ատամները ժպտացին
առավոտյան լուսի նման թուխ շրթունքների արան-
քից:

Մր. Շիլդն առանձնապես գոհ մնաց իմ այս կոմ-
պլիմենտից: Նրա աչքերը մեծ բավականություն ար-
տահայտեցին:

— Նա իր ամեն բանում դնում է իրան, — ավե-
լացրեց մր. Շիլդը:

Յս նրանից ավելի սրամիտը չելի սպասում,
Արարուհին և յես նայեցինք իրար: Մեր նալ-
վածքները հրարորդոք եյին, արյունով ներկված:

Ապա մր. Շիլդը դարակից դուրս բերեց լուսա-
կարների մի հաստ կապոց:

— Սրանք իմ հանած լուսանկարներն են Արե-
վելքում:

Ամբողջ յերկու ժամ, զգվելի յերկարաձգությամբ,
մր. Շիլդը ինձ ցույց տվեց իր լուսանկարները, պատ-
մելով յուրաքանչյուրի մասին ճշգրիտ մանրամասնու-
թյուններով: Յերբեմն հիշողությունը չեր ովհում, դը-
նում, բերում եր նոթագրության իր խոշոր տեսքակը,
բաց եր անում տարեթիվը, ամսաթիվը և որաթիվը՝
ասելու համար, թէ տվյալ լուսանկարը վնասեղ և հան-
ված, և եշի վրա նստած մարզը վնասեղացի յե, անունն
ինչ եր, ուր եր գնում և ինչ փողոցում, ժամը քանի-
սին պատահեց նրան և լուսանկարեց: Մր. Շիլդը մինչ-
եւ անգամ ցույց տվեց ինձ լուսանկարչական ապա-
րատը, վորը «շատ զարմանալի» վճչ թէ Ասերիկայում
եր գնել, այլ — Անգլիայում:

Իհարեւ, ձանձրութից յես խորը հառաջում ելի,
բայց մր. Շիլդի չափազանց քաղաքավարի և սիրալիր
ընդունելությունը թույլ չեյին տա ինձ ձանձրութե-
կոնկրետ կերպով արտահայտելու, մանավանդ՝ ամեն
անգամ յերբ տիկին Շիլդին եյին հանդիպում իմ աշ-
քերը, նա նայվածքով խնդրում եր ինձ լսել նրան:
Յս զատապարտված եյի լսել և վհչ միայն զատա-
պարտված եյի լսել այլ մր. Շիլդին ընդառաջելու հա-
մար՝ տվելի և ավելի մանրամասնություններ հարցնել:

— Զե, ինչ եք ասում, միթե, դուք այդ թիրն
միթե կահիրեյում եյիք, վար ամսին, վարքան մնացիք
այդ բաղաքում, — և այլն, հարցնում եյի մր. Շիլդին:

Նա խորագույն բավականությամբ տալիս եր բո-
լոր հարցումների նողկալի մանրամասն պատասխան-
ները:

Եյս բոլորի մեջ ամենանողկալին պիրամիդների
պատմությունն եր: Նա սկսեց պատմել պիրամիդների

Յերբ մենք ձանապարհ ընկանք, Շիլդը լոեց:
Եյտ շատախոս մարդը կարծես վոչինչ չուներ
խոսելու:

— Յերեկի ինչ վոր գիտեր, սպառեց արդեն,— մաս-
ձեցի:

Նա մեքենան քշում եր աննկարազրելի արագու-
թյամբ, տալով ինձ թռչելու մոտավոր պատրանքը,
այնպես վոր յես ստիպված լեղա հիշեցնել մր. Շիլդին
նկու-Յորկ քաղաքի անցուղարձային որենքները:

Ահ, գուք որենքի մասին եք խսում,— հան-
կարծ բացականչեց մր. Շիլդը:

Նրա ձայնը հնչեց արտակարգ տարրինակ, կար-
ծես միհնույն մարդը չեր ալիս: Նա ինձ չեր նայում,
կծել եր սիգարը, ուղիղ նայում եր ճանապարհի յեր-
կարությամբ և հետզետե ավելացնում մեքենայի թա-
փը: Սկզբում միամտորեն վերաբերվեցի, բայց նան-
կարծ իմ մեջ ծագեց այն միտքը, թե՝ չինչ այս մար-
դը հեղակարծորեն սկսեց կորցնել իր գատողությունը:

— Մի անգամ ելուզեցի ստուգի նրա մտավիճակը:
— Մր. Շիլդ, ինչ կարիք կա ավելորդ տուգանք

Վճարելու:

— Որենքը լավ բան է, տուգանք վճարելն ել
բավան է,— պատասխանեց մր. Շիլդը բոլորովին ան-
հասկանալի ինսունացիայով:

Յես լսեցի, համոզված լինելով, վոր ահա մի վու-
ախկան կկանգնեցնի, տուգանքը կնշանակի, և յես ա-
սուիթ կունենամ ցածրություն ասելու մր. Շիլդին:

— Դուք լավ գիտեք այս յերկրի որենքները,
յերկար լուսությունից հետո հարցըց ինձ մր. Շիլդը
ատամները կրճատացնելով:

պատմությունը, մի այնպիսի պատմություն, վորպիսին
կարելի յե գտնել հին ազգաց վորեւե պատմության
գրքում, մի պատմություն, վորպիսին ամեն մարդ անց-
նում է միջնակարգում բավարար մանրամասնությամբ:

Յես նկատեցի, վոր մր. Շիլդն այնքան ել հի-
մար մարդ չե, բայց նա ճգնում է ինձ զրադեցնել մի
բան, վոր յես վերազրեցի միայն նրա չափազանց
հյուրասիրական զգացումներին: Այնուահենայնիվ յես
շատ հանգիստ եյի զգում ինձ, վորովհետեւ լեթե ամե-
րիկացիները հյուրին չեն սիրում, անմիջապես զգաց-
նել են տալիս, մի բան, վորը յես շատ բարձր եցի զը-
նահատում, վորովհետեւ նախընտրելի չե, վոր մեկը
վանդիլի մի տնից, քան կեղծավոր հյուրասիրություն
վայելի:

Վերջապես ժամը 11-ին յես ցանկություն հայտ-
նեցի հեռանալ, վորովհետեւ հոգնեցի չափազանց ուշ-
շաղբությունից:

Վերջին անգամ նայեցի արարուհուն և տեսար-
վոր թախծել ելին նրա աչքերը:

Մր. Շիլդը չցանկացավ իմ ոձիքը բայց թողնելը
նա առաջարկեց տանել ինձ իմ բնակարանը իր սե-
փական ալտոմորիլով: Շատ պնդեցի, վոր ավելորդ նե-
ղություն և հանձն առնում իմ նոր բարեկամը, բայց
նա համառեց, իսկ թալիքի զուտարը ելի իր նայվածք-
ներով խնդրում եր ինձ չմերժել իր ամուսնու առա-
ջարկած պատիվը:

Համաձայնեցա: Արարուհին ինձ ճանապարհ
գցեց հենց հյուրասիրից: Մր. Շիլդի հետ յես
իջա ներքեւ, բնակարանի լետերի կողմը, վորտեղ գըա-
նը վում եր սեփական գարաժը: Շիլդն անձամբ գվողե-
րեց մեքենան և ինքն ել սկսեց քշել:

— Միքիչ գիտեմ, պատասխանեցի:
 Մը. Շիրդը հանկարծ քաշեց ավտոմոբիլի արգելաւկը, վորից մեքենայի «վոսկրները» կարծես վողացին, կանգնեցրեց մեքենան: Յես կարծեցի, թե մեքենային ինչ-վոր բան պատահեց, աճապարեցի դուրս ցատկել: Շիրդն ել դուրս թռավ իմ յետից և մոտենալով ինձ:

— Դուք լավ գիտեք այս յերկրի որենքները, հարցրեց զբաժայիկական տոնով:

Մենք գտնվում ենքնք ելեկտրական լուսի տակ, և յս Շիրդին արգեն տեսնում եյի ամբողջությամբ: Նրա նալվածքը գաղանային եր, կոսկերն արյունով լցվել առամերի սղմումից՝ թշերը փոսացել եյին: Նա պարզապես իր ժանիքն եր կախել իմ վրա: Յես զգացի, վոր այդ վայրը մեկն ու մեկն կառափնարանն ե հանդիսանալու: Սիրտս կարծես ուռեց և քարեկության մի անորինակ ալիք խփեց իմ գլխին: Իգրարկության պատճառն այն եր, վոր դիմացինս իրան տեղացի, բնիկ, «ընտրյալ» եր կարծում, իսկ ինձ ուտարական:

— Փոխեցք ձեր տոնը, — հրամայեցի յս կեղտուր բնիկին:

— Պատասխանեցեք ինձ, դուք լավ գիտեք այս յերկրի որենքները:

— Ասացի՞ միքիչ գիտեմ:

— Միքիչ գիտենալը բավական չե, պետք ե շատ լավ գիտենալ և պիտի գիտենալ բարոյական ուրենքները ևա, — պատասխանեց Շիրդը և զայլութով շարունակեց: — Յեթե դուք չսովորեք այդ որենքները, սա ձեզ բողեյապես կսովորեցնի, հարեց և գրանից դուրս բերեց մի ատրճանակ և բոնեց ուղիղ քերանիում:

Յես նրան. պատասխանեցի ատրճանակի մութ խողովակում:

— Յես ձեր բարոյականը չեմ վորդեզրի լերեք: — Վորդեզրել կտամ: — Ի՞նչ եք ուզում ասել վերջապես: — Վերջին անգամ լինի, վոր զուք տեսնում եք իս կնոջը. յս միայն իմ կնոջ խնայիցի, լեթե վոչ վորոշել եյի սպանել ձեղ իմ տան մեջ:

— Աւսքան:

— Առայժմ այսքան:

Նա զրեց ատրճանակն իր գրպանը և հարեց:

— Գուղ-բայ...
— Գուղ-բայ...
— Գուղ-բայ...
— Շիրդը հետացավ իր ավտոմոբիլով, իսկ յս քայլեցի գեպի ստորերկրյա տրամվայի կայարանը:

**

Ամբողջ գիշերն ինձ մի միտք եր տանջում — մի նի թե միտոր Շիրդն իրան հերոս կարծեց:

5.

Հաջորդ որն իսկ, առավոտան ժամը 10-ին, իմ դեմ կանգնեց մեր վաճառատան համազգեստ հագած մի բոյ (տղա), վոր շենքում սուրհանգակի պաշտոն եր վարում և յերկարացը մի այցեսում: Այցեսումը վաճառատան տիրոջ այցեսումն եր, վորի վրա զրված եր. — Հաճեցեք մի բոսելով անցնել ինձ մոտ:

— Վո՞րտեղ և այժմ նա, — հարցրեցի բոյին...

— Ոֆիսումն ե, — պատասխանեց բոյը:

— Եատ լավի:

Ինձ ընդունեց քաղաքավարությամբ և սիզար առաջարկեց:

— Դուք չափազանց վիրավորել եք մեր կարեռը
հաճախորդներից մեկին, —սկսեց վաճառատան տերը:

— Չեմ հիշում, թե վորեն հաճախորդի վիրավորած
լինեմ,

— Դուք վիրավորել եք մը. Շիլդին, ջայլամի փետ-
րի վաճառականին:

— Յես նրան յերբեք չեմ վիրավորել. ամենայն
հոգածությամբ սպասարկել եմ նաև իրան, ապա իր
տիկնոջը. գնված զորդից լերկուսն ել շատ գոհ են
մնացել, —ըստատրեցի:

— Այդ տեսակետից չեմ ասում, դուք ցանկացել
եք խաղեր խաղալ նրա տիկնոջ հետ:

— Բայց դա ի՞նչ կատար ունի վաճառատան հա-
ճախորդի վիրավորանքի հետ:

— Իմ սիրելիսը, շարունակեց զիմացինս ուղղո-
վելով իր աթոռի վրա, — դուք տիկին Շիլդին ծանոթա-
ցել եք իմ վաճառատան արեելյան զորդի բաժան-
մունքում, ծանոթացել եք մեր տռեարի միջոցով և
դուք պարտական ելիք պահել այս վաճառատան մեջ
ընդունված բարուականը:

Յես անմիջապես վորոշեցի կարճ կապեւ:

— Պարոն, ինձ համար բացարձակապես պար-
տագիր չեն ձեր բարոյականները, յս ապատ եմ իմ
անձնական կյանքում:

Դիմացինս իր ամբողջ կյանքում յերկի չեր հաճ-
ապել այսպիսի պատասխանի, վորովհետեւ նա ուղա-
կի ապշեց իմ պատասխանից:

— Ուրեմն կարող եք ձեղ բոլորավին աղատ ըգ-
դալ:

— Խնդրեմ, այս ըստելից:

Նա դեմքը կախեց սեղանի վրա դրված բլոկ-նո-
տի վրա և մի բան գրելով ինձ յերկարացը եց:

Նա գրել եր հաշվապահության, վոր ինձ վճարեն
յերկու որվա աշխատավարձ և մի շաբաթական ևս իբ-
րև լիկվիդացիա:

— Ներեցէք, պարոն, յես պայմանագրություն
ունեմ, — ասացի և գրպանիցս հանելով պայմանագիրը՝
զրի սեղանի վրա:

— Հիմարություն են արել այսպիսի պայմանա-
գրություն կնքելով քեզ հետ. — մրթմրթաց վաճառա-
գանը և ելեկտրական կոճակը ողմեց մենեջըրին *)
կանչելու համար:

— Ինչու եք այսպիսի պայմանագիր կնքել այս
պարոնի հետ, — հարցը եց մենեջըրին:

— Նման մասնագետի հետ ուրիշ կերպ վար իւ
չեյի կարող, — բացարձական վաճառականը:

— Ո՛, այս, — բացարձական վաճառականը,
Պարոնն այս մարդկանցից եր, վոր շատ բաներ
չեր հասկանում, բայց մի վորեն առեարական հարց
անմիջապես ըմբռնում եր:

Յես ստացա, ըստ պայմանագրի, գալիք հիսկ ամ-
սի իմ շաբաթականները և այդ խոսակցությունից
կես ժամ անց թողի այդ առեարական տունը ընդմիշտ:

6.

Ինձ մտահոգում եր այն միտքը, թե ինչպես կա-
բող եյի տեսնել Բինտել-Թալիբին: Վտանգավոր եր
հեռախոսելը, մի զուցե մը. Շիլդը հանդիպի, և յես
պատճառ լինեմ ընտանեկան նոր տնախորժություն-

* Վարիչ

ներիւ Հեռախոսով դիմեցի վաճառատան արկելան գորգի բաժանմունքում ծառայող հայ վաճառողին և ինդրեցի, վոր յեթե տիկին Շիլդը վորու լուր թողնի, բարեկամաբար ինձ հայտնի: Հայ վաճառողը խոստացավ անել այդ:

Միքանի որ հետո, հենց այդ միջոցով, յես արաբունուն պատահեցի «Կոնսանտինոպլ» արճարանաշարանում, և վորոշեցինք գնալ մի «Չոռ-օռուի» *):

Յերբ մենք առանձնացանք Չոռ-օռուի առանձնասենյակում, պարզվեց, վոր արաբունին համեմարծակիի յեր յեկել իմանալով հայ վաճառողից, վոր յես այնտեղ չեմ ծառայում, ապա պարզվեց նաև, վոր վոչ մի տեղեկություն չունի իմ և մր. Շիլդը ընդհարման մասին: Մր. Շիլդը վոչ մի ակնարկություն անզամ չեարել իր կնոջը իմ մասին: Յերբ մր. Շիլդը այն գիշերը տուն և վերադաբել Բինտեկ-թալիբը նրան հարցրել ե:

— Տարի՞ք մինչեւ տունը:

— Այս, տարի, ինչ համակրելի տնձնավորություն ե, — պատասխանել ե մր. Շիլդը իր տիկնոջ:

Մր. Շիլդը մտածել ե վերացնել մեջենդից Փիկական հարմարությունները և վերջ տալ հարցին:

Եկա իրողությունը պարզվելուց հետո՝ արաբունին լցվեց իսոր զայրուկթով:

— Յես կարծում եմ, վոր քաղաքակրթված յերկրում եմ գտնվում, այդպես ասում են Արաբիայում, այնտեղ կնոջը սեփականություն են համարում, ապրանք, բայց այստեղ ել միենունն ե, — ասաց Թալիբի գուստը:

— Քաղաքակրթությունը շպար ե, Բինտեկ-թա-

* Զինական ձաշարան

լիր, — հարեցի, — այստեղ ել այնտեղ ել կնոջը դասում են ապրանքի կարգը, գեթ Արկելքում կինը «Ճեռագործ» ապրանք ե, իսկ այստեղ «մեքենայագործական ապրանք», այսինքն Արկելքում գեթ այդ տեսակի ապրանքն ավելի թանգ ե, քան այստեղ:

Ապա յես խնդրեցի Բինտեկ-թալիբից այս բոլորի մասին վոչինչ չասել իր ամուսնուն:

Արաբունին վճռականորեն պատասխանեց:

— Նա իմ ամուսինը չե այլև, բայց յես նրանետ կիսադամ միենուն խաղը, լոռության խաղը, մինչեւ ազատվեմ նրանից:

Ապա նրա աչքերը մեղմացան, ստացան բարի և հարավի կնոջ փայլը, և շնչաց.

— Դու ուզիս ես այս անապատում:

— Իսկ գուստանորակ աղբյուր ես այդ ուզիսիում: Թալիբի զուստը հառեց ինձ կաթնալուս աչքերով:

Մենք փաթաթվեցինք իրար ինչպես բաղեղի յերկու շուղերն են իրար փաթաթվում:

Այդ ժամերին մր. Շիլդը ջալամի փետուրներ երածախում հաճախորդներին Բրոգուեյի իր մեծ խանությում, ստուգ եր ու վաճառում տպահությամբ և կը բռով:

7.

Սմբան անգամ, վոր պետք ե վերադառնար ջայրամի փետուրի վաճառականի հարկի տակ՝ արտբունին աղիողորմ արցունքներ եր թափում:

Մի որ նա ինձ մի բան ասաց ե իր ասածի վրա պնդեց միամարդին:

— Յես կարծում եմ, վոր միենույն ալ եը՝ չե, վոր լուսավորում և այս յերկրագունդը. կզա մի ժամանակ, յերբ գիտնականները կհաստատեն, վոր ուրիշ արեւելքան կիսագունդը լուսավորողը, ուրիշ արեւելքան կիսագունդը լուսավորողը:

— Միենույն արեն և ամեն տեղ, Բինտել-Թաւրի, կյանքն ե, վոր փոխում և արեց, սոցիալիստական միջավայրն ե, վոր արել ավելի կամ ուղաղ տար և փալուն և գարձնում: Յերբ արել գիտում ես նկուղից՝ նվազ փայլուն ե, քան յերբ դիտում ես ապարանքից:

Արաբուհին չեր համոզվում և պնդում եր յերեխայի նման:

Դարուտել եր իր վորբությունը, կարոտել եր այն ժամանակին, յերբ թեև աղքատ, բայց աղատ եր:

Յերբ նա ինձանից բաժանվում եր, իմ սիրալ դատարկություն եր զգում, ինչպես չվառվող վառարանը, իսկ յերբ գալիս եր իր խոստացած ժամին, ինձ թվում եր, վոր ահա առավոտ և բացվում, ահա շողերը թափվում են արեւելքան հորիզոնից:

8.

Յերբ արաբուհուն պատահեցի վորոշված ժամանակավայրում, յես տեսա, վոր նրա ձեռքին մի պատուակ կար, նրա աչքերն անձկագին եյին և ամբողջ ժամանով դողում եր: Յերբ ինձ տեսավ, միքիչ ամրապնդ է ձեռքս բռնելով ասաց.

— Զի պատահել վոր մի որ ուշանաս: Բայց չգիտեմ ինչու, այսոր իմ մեջ մի յերկյուղ կար, վոր չես գա:

— Ի՞նչ և պատահել քեզ, Բինտել-Թաւրի:

— Գնում եմ:

— Ո՞ւրի:

— Գնում եմ Արաբիա:

— Այ զու ավազների նժուկի, — կատակեցի:

— Լուրջ, գնում եմ, արդեն տոմս եմ վերցրել:

Գնանք ինձ ոգնիր:

— Ճաշ մի կերպ յես չկարողացա արաբուհուն հա-

մոզել մնալ Ամերիկայում և թողնել մը. Շիլին:

— Նա զազան ե, յես չեմ մնա այս յերկըում,

վճռականորեն պատասխանեց Թաւրի դուստրը:

Արդեն չայլամի փետրի վաճառականը, վոր իր կողջը, իբրև կոմպլիմենտ, «սիրամարգի Փետուր» ևը:

կոչում, սկսել եր խստորեն հետապնդել նրան:

Մենք միասին գնացինք լոմբարդը:

— Իմ աղամանդներից միայն մեկն եմ վերցրել

և մի զուց շոր, մինչև Արաբիա հասնելս, — ասաց ա-

րաբուհին, — ամեն ինչ թողել եմ տանը:

Բինտել-Թաւրին ուրախութիւնը մատանին հանեց:

իր մատից և զբեց խորամանկ աղամանդի մասնագե-

— 1500 դոլար:

— Տվեք, համաձայն եմ, — անմիջապես պատասխանեց Բինտել Թալիբը:

Վաճառականը նորից ակնոցը դրեց, խոշորացուցով գիտեց յերկար, կշռեց և ձեռքերը շփելով՝ կասան բաց արավ և համրեց 1500 դրամարը:

Մենք գուրս չեկանք լոմբարդից և ուղեռովիցինք նավահանգիստ: Արարուճին արդեն վերցրել երտումա Փրանսիական «Լա Տուրին» շոգենավի համար: Յերբ ծովում յերկաց, արաբուճու աշքերը փայլատակեցին: Նա ուրախ եր: Ինչ-վոր հեռավոր պատկերներ եկին գծադրվում նրա յերկակացության առաջ:

Արցունքի խոշոր կաթիների մեջ նայեց ինձ արարուճին և շշնջաց.

— Մասս բարո՞վ...

— Բինտել-Թալիբ, վողջունիր իմ կողմից Արեգելին, առաջի:

* *

Նավը ձեղքում եր Ատլանտիանի կապույտ ալիքները, և Բինտել-Թալիբը թոշում եր գեպի Արեգելը:

Այդ ժամին մը, Շիլլը ջայլամի փետուրներ եր ծախում հաճախորդներին Բրոդուեյի իր մեծ խանութում, առանց իմանալու, վոր պակասել եր իր ինվենտարից իր ամենաարժեքավոր կարծած ռապանքը:

ՀՀ Ազգային գրադարան



NL0338818

31320